

**ՀՀ ՍՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔ
ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ**

**ԲԱԺԻՆ I: ՀՀ ՍՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ցանկացած ժողովրդավարական պետության հիմնարար խնդիրը իր քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է. «Սարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Ռացիոնալ պետական կառուցվածքի իրավաչափ պահանջը ենթադրում է իշխանության և կառավարման այնպիսի համակարգի ստեղծումը, որի պայմաններում վերը նշված հիմնախնդիրը, գերագույն նպատակն իր առավել արդյունավետ լուծումը կստանա:

Անշուշտ գոյություն ունեն խնդիրներ, որոնք կարող են լուծվել բացառապես համապետական մակարդակով՝ կենտրոնացված միջոցների և պաշարների ընդգրկմամբ: Այսպես, երկրի անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովումը, միասնական դատաիրավական համակարգի ստեղծումը, քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական ճանաչումն ու երաշխավորումը, միասնական պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը կրթության, մշակույթի, գիտության, առողջապահության, սոցիալական ապահովության, իրավակարգի, արտաքին հարաբերությունների և այլ բնագավառներում:

Սակայն թվարկված խնդիրներից շատերի իրագործումը, բնակչության որոշակի կենսամակարդակի ապահովումը պետությունում իրականացվում են ոչ թե ընդհանրապես, այլ՝ տեղերում, քաղաքացիների կոնկրետ բնակության տարածքներում՝ համայնքներում: Հենց այստեղ է, որ ամենից առաջ պետք է պայմաններ ստեղծվեն պետության կողմից ճանաչված և երաշխավորված իրավունքների և ազատությունների իրացման համար, ինչպես նաև բարեկեցիկ կյանքի անհրաժեշտ նախադրյալներ: Չէ որ տեղերում՝ համայնքներում, են

ձևավորվում, փոփոխվում և դադարում ֆիզիկական և իրավաբանական անձանց միև բոլոր տեսակի հասարակական հարաբերությունները: Այս իմաստով մունիցիպալ իրավունքի ճյուղի համապարփակ ուսումնասիրությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի ուսանողի համար նախ, որպես այս կամ այն համայնքի բնակիչ, երկրորդ, որպես ապագա պրակտիկ իրավաբան և երրորդ, այլ իրավաբանական դասընթացներից ստացած գիտելիքները լրացնելու և ամբողջացնելու տեսակետից:

Գլուխ 1. ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԼԻՐ ՃՅՈՒՂ

1. Մունիցիպալ իրավունքի հասկացությունը, առարկան և մեթոդը:

ՀՀ մունիցիպալ իրավունքը հայրենական պետականագիտության մեջ համեմատաբար նոր երևույթ է, որի ստեղծումը պայմանավորված է Հայաստանի անկախացումից հետո «տեղերում»¹ իշխանության կազմակերպման և գործադրման նախկին խորհրդային համակարգի վերացման և նոր՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, համակարգի ներդրման հետ: Մինչև ՀՀ մունիցիպալ իրավունքի հասկացությանն անդրադառնալը, կարծում ենք, անհրաժեշտ է պարզաբանել այդ բառակապակցության իմաստը և էությունը՝ այն ընդգրկող բառերի ստուգաբանական (էտիմոլոգիական), ինչպես նաև գործնականկիրառական տեսակետից:

Հին Հռոմում «*municipium* (հոգնակի՝ *municipia*)» եզրույթով էին անվանում այն քաղաքները և այլ բնակավայրերը, որոնց ազատ բնակչությունը լրիվ կամ սահմանափակ ծավալով ստանում էր հռոմեական քաղաքացիության և ինքնակառավարման իրավունքներ (ծագում է լատիներեն *munus* կամ *munera* «շնորհ, պարտականություն, ծառայություն» և *capit* «վերցնում են» բառերից): Փաստորեն ստուգաբանորեն *municipium*-ը մի յուրօրինակ հասարակական դաշինք է մունիցիպների՝ «պարտապանների» կամ համայնքի քաղաքացիների միջև: Այդ պարտականությունները կամ *munera*՝ այն համայնքային պարտավորություններն են, որոնք ստանձնել էին համայնքի բնակիչները իրենց տրամադրված արտոնությունների և քաղաքացիության պահպանման դիմաց²:

Հռոմեական կայսրությունում որևէ տարբերություն չէր դրվում *municipium*ների միջև, ընդհակառակը՝ Հռոմն իր անմիջական հարևաններին հրավիրեց կամ ստիպեց տեղափոխել իրենց բնակչությունը Հռոմի քաղաքային կառուցվածքի մեջ, որտեղ նրանք բնակություն հաստատեցին քաղաքի հարևանությամբ և դարձան *Rqmans per se*՝ Հռոմեացիներ՝ որպես այդպիսին: Հռոմեական Հանրապետության ժամանակաշրջանում Հռոմ քաղաքպետության մեջ այլ համայնքների միավորման պրակտիկ նկատառումներով պայմանավորված

¹ Եզրույթը չակերտների մեջ է վերցված դրա «սովետական» ծագումնաբանության պատճառով, թեպետ այն շատ դիպուկ է տվյալ դեպքում կիրառելու համար:

² Տե՛ս՝ Frank Frost Abbott, *Municipal Administration in the Roman Empire* (1926), Read Books, 2007, էջ 8

գործընթացը ստիպեց հռոմեացիներին մշակել municipiumի հայեցակարգը, այն է՝ առանձին պետություններ Հռոմի գերակայության՝ յուրիսդիկցիայի ներքո: Այդ ժամանակ ուղղակի անհրաժեշտություն էր դարձել բազմաբնույթ municipiumների և այլ բնակավայրերի տարբերակումը, ինչպիսին օրինակ՝ գաղութներն էին: Սակայն Հռոմեական կայսրության վաղ ժամանակաշրջանում այդ տարբերությունները սկսեցին վերանայ: Այսպես, ժամանակակից Իտալիայի բոլոր բնակիչները հավանաբար մ.թ.ա. 9028 թթ., ստացան հռոմեական քաղաքացիության բոլոր իրավունքները, իսկ մ.թ. 212 թվականին Կարակալլայի էդիկտի կամ «Անտոնինի Սահմանադրության» (լատ. Constitutio Antoniniana) հիման վրա Հռոմի իրավահավասար քաղաքացի դարձան կայսրության բոլոր ազատ բնակիչները: Այդ պահից սկսած municipiumը գործածվում է այն նույն իմաստով, ինչ ցայսօր՝ համայնք, իշխանության ստորին օղակ, տեղական ինքնակառավարման մակարդակ:

Municipiaների ստեղծումը

Munera և քաղաքացիները և նրանց իրավունքներն ու դրանց պաշտպանությունը բնորոշ էին տվյալ համայնքին: Յուրաքանչյուր ոք իր ծննդավայր հանդիսացող համայնքի քաղաքացին էր մնում՝ անկախ նրանից, թե մարդը որտեղ է բնակվում՝ տանը, թե արտասահմանում, կամ թե ինչ կարգավիճակ ունի կամ հասարակության որ դասակարգն է ներկայացնում:

Municipiumի բնութագրիչ առանձնահատկությունը տեղական ինքնակառավարումն էր: Ինչպես հնագույն ժամանակի բոլոր քաղաքպետությունները, այնպես էլ՝ municipiumը ստեղծվել են հիմնադրման կամ այսպես կոչված՝ սինոյկիզմի (synoecism)³ պաշտոնական ակտով: Այդ ակտով վերացվեցին այն ստորագրող համայնքների ինքնիշխանությունն ու անկախությունը՝ փոխարինելով այն ընդհանուր (համապետական) կառավարության գերիշխանությամբ՝ յուրիսդիկցիայով: Համապետական իշխանությունն այդ ժամանակ կոչվում էր լատիներեն respublica՝ «ընդհանուր գործ», իսկ հունարեն՝ koinon՝ «ընդհանուր գործ»:

Municipium տերմինը սկսեց կիրառվել Իտալիայի այն բոլոր քաղաքպետությունների նկատմամբ, որոնք ընդգրկվել էին Հռոմ քաղաքպետության քաղաքական կազմում, սակայն աշխարհագրորեն չէին միացվել դրան: Ռոմուլուսի քաղաքը միաձուլվել էր հարակից Լաթիումի բնակավայրերի հետ՝ տեղափոխելով վերջիններիս բնակիչներին Հռոմ քաղաքը

³ Ծանոթություններ (հուն. synoikismos՝ այսպես էր կոչվում Յին Յունաստանում մի քանի փոքր, պոլիսի կարգավիճակ չունեցող (ինչպես միկենյան Յունաստանի քաղաքպետությունները) համայնքների՝ քաղաքների, տրիբերի կամ այլ բնակավայրերի միաձուլումը, միացումը մեկ, ավելի մեծ պոլիսի հետ կամ մեջ: Երբեմն այս գործընթացը կրում էր զուտ քաղաքական բնույթ և չէր հանգեցնում տարանջատ համայնք(ներ)ի վերացմանը կամ դրա բնակչության փաստացի վերաբնակեցմանը: Դրա ամենավառ օրինակը մ.թ.ա. 10րդ դարում սկսված և մ.թ.ա. 8րդ դարում ավարտված հունական 12 քաղաքպետությունների միացումն է մեկ պետության ներքո, որի իրագործումը վերագրվում է Աթենքի կիսադիցարանական միապետ Թեսսսին: Ի դեպ, ավանդույթը Թեսսսին է վերագրում ոչ միայն սինոյկիզմի հեղինակային իրավունքը, այլև միջարք այլ բարեփոխումներ. հասարակության բաժանումը երեք դասակարգերի՝ Էվպատրիդներ, գեոմորներ և դեմիուրգներ, միապետության վերացումը, ժողովրդավարության հաստատումը և այլն: Այլ դեպքերում սինոյկիզմը իրականացվել է բնակչության փաստացի տեղափոխության եղանակով, ինչպես դա եղավ հունական Ռոդոս քաղաքի հետ մ.թ.ա. 408/7թթ.):

շրջապատող յոթ բլուրների վրա, որտեղ նրանք սովորաբար բնակություն հաստատեցին տարաբնույթ շրջաններում: Չնայած սինոյկիզմին, այնուամենայնիվ Սաբինները շարունակեցին բնակվել Սաբինյան լեռներում և Ալբա Լոնգայում: Հռոմ քաղաքի և նրան անուն տվող առաջին թագավորի՝ Ռոմուլոսի, վերաբերյալ հետաքրքիր լեգենդ է պահպանվել, սակայն մի բան հավաստի է՝ Հռոմ գավառական քաղաքը (հիմնադրվել է մոտ մ.թ.ա. 753 թվականին) բազմաթիվ պատերազմների արդյունքում իրեն միացրեց հարակից բնակավայրերը: Ընդ որում պատմության մեջ ստույգ հաջորդականություն չի պահպանվել, թե որ բնակավայրը երբ է միացվել Հռոմին և թե արդյոք այդ գործընթացը կամավոր թե հարկադրական սինոյկիզմի արդյունք էր: Օրինակ Սաբինների դեպքում քիչ հավանական է թվում, որ նրանց բոլորին կամավոր հրավիրած լինեն բնակության, քանի որ ակնհայտ է, որ նրանց բոլորի համար կացարաններ ու սնունդ չկար: Մյուսները մնացին իբրև անկախ բնակավայրեր Հռոմի գերիշխանության ներքո: Հռոմի վաղ հանրապետության շրջանում բազմաթիվ խոշոր քաղաքապետությունների ձևական միացումը Հռոմին շարունակվեց: Այս խնդրի լուծման համար ստեղծվեց municipium-ի գաղափարը: Քաղաքները մասնակիորեն սինոյկիզմի ենթարկվեցին: Տեղական իշխանությունները պահպանվեցին, սակայն տեղական պարտավորություններին՝ **municipia**ին, ավելացվեց ևս մեկը՝ պարտավորությունները Հռոմի նկատմամբ: Հռոմի հետ միանալու մասնակի սինոյկիզմի գործընթացը հետզհետե պաշտոնական շնորհման արարողակարգի տեսք ստացավ, որն ուղեկցվում էր միացվող քաղաքի բնակիչների, իբրև Հռոմի քաղաքացիների, իրավունքների և պարտականությունների սահմանմամբ: Առաջին այդպիսի municipium-ը Տուսկուլումն էր:

Municipia-ի երկու տեսակները

1ին տեսակի հրամանով ստեղծված **municipia**-ի քաղաքացիները կրում էին Հռոմի լիիրավ քաղաքացություն և նրանց իրավունքները (*civitas optima iure*) ներառում էր **քվեարկությանը մասնակցելու իրավունքը**, որը Հռոմում բարձրագույն իրավունք էր համարվում և հանդիսանում էր իրավունքների ամբողջ ծավալի առկայության վկայություն:

2րդ տեսակի հրամանով ստեղծված Municipia-ները հռոմեական տիրապետության տակ հայտնված կարևոր տրիբալ⁴ կենտրոններն էին: Դրանց բնակիչները չդարձան Հռոմի լիիրավ

⁴ Ճանոթություն. Տրիբան (լատ. *tribus, tribuo* բառից՝ բաժանում, տարանջատում եմ) Հին Հռոմում այսպես էին կոչվում վարչատարածքային և ընտրատարածքային միավորները, որոնցից յուրաքանչյուրն ուներ մեկական ձայն տրիբուտային կոմիցիաներում: Տարածքային տրիբների բաժանումը վերագրում են Հռոմի միապետ Սերվիոս Տուլլիոսին (մ.թ.ա. 6րդ դար), որը հռոմեական տարածքները բաժանեց 4 քաղաքային և 17 գյուղական տրիբների: Հետագայում Հռոմի կողմից հտալիան գրավելու արդյունքում դրանց թիվը մ.թ.ա. 241թ. հասավ 35ի: Հռոմեական ավանդույթի համաձայն Հռոմի հնագույն բնակչությունը բաժանվում էր երեք տրիբների՝ Ռամներ (լատինացիներ), Տիցիններ (սաբիններ) և Լուցերներ (էտրուսկներ): Սկզբնական շրջանում յուրաքանչյուր տրիբի մեջ մտնում էին 100, իսկ հետո՝ 300 քաղաքներ: Հենց այս տրիբներն էլ կազմեցին հռոմեական ժողովուրդը: Դեռևս միապետության ժամանակաշրջանում աշխարհագրական բաժանումը փոխարինվեց նորով՝ 4 քաղաքային տրիբներ (այսպես կոչված՝ *tribus urbanae*), ինչպես նաև 17, իսկ այնուհետև՝ 31 գյուղական տրիբների (*tribus rusticae*). Ավելի մանրամասն տես՝ *И. Л. Маяк Рим первых царей. Генезис*

քաղաքացիներ (բացառություն էին կազմում դրանց մագիստրատները, որոնք կենսաթոշակի անցնելուց հետո կարող էին ստանալ Հռոմի լիարժեք քաղաքացիություն): Թեպետ նրանց համար սահմանվեցին Հռոմի լիիրավ քաղաքացիների համար սահմանված բոլոր պարտականությունները, ինչպես ասենք՝ հարկային և զինվորական ծառայության պարտավորությունները, սակայն նրանք չէին կարող օգտվել բոլոր իրավունքներից՝ և որ ամենակարևորն է՝ նրանք չունեին ընտրական իրավունք:

Գործադիր իշխանությունը *municipium*ներում իրականացվում էր մեկ տարով ընտրվող պաշտոնատար անձանց միջոցով, որոնցից երկուսը դուռավիրներ էին, իսկ մյուս երկուսը՝ էդիլներ: Սակայն դրանք ենթարկվում էին ավելի բարձր՝ Հռոմի իշխանությանը: Խորհրդակցական լիազորություններ էին վերապահված դեցուրիոններին (լատ. *Decurions*), որոնք համարվում էին տեղական Մենասի նշանակովի պաշտոնյաներ: Հետագայում դրանք դարձան ժառանգական պաշտոններ:

Municipiaների շնորհումը

1. Կայսր Կլավդիուսը մ.թ. 40/41թթ. բռնկված ապստամբությունից պաշտպանությանը աջակցության դիմաց իբրև պարգև Մավրիտանիայի գավառի (ներկայիս Մարոկկո) Վոլտուրիլիս քաղաքին պարգևեց **municipium**ի կարգավիճակ:

2. Վեսպասիան կայսրը մ.թ. 73/4 թթ. «լատինական իրավունքներ» շնորհեց Հիսպանիայի Տարակոնյան, Բեռիկո և Լուզիտանիա գավառներում (ժամանակակից Իսպանիայի տարածքում),

3. Ուն Մարկուս Մեռվիլիուս Դրակո Ալբուցիանուսը Տրիպոլիտանիա քաղաքից, կարողացավ իր քաղաքի համար Հռոմից ստանալ **municipium**ի կարգավիճակ⁵:

Ի գիտություն

Գաղութի և **municipium**ի միջև տարբերությունը նրանում է, որ վերջինս մի քաղաք էր, որի բնակիչները Հռոմի նկատմամբ իրենց չեզոք, բարյացակամ դիրքորոշման շնորհիվ առանց սահմանափակումների պահպանեցին իրենց տեղական օրենքները և քաղաքական ու գույքային իրավունքները: Ավելին, նրանք ստանում էին Հռոմի քաղաքացիություն, այդ թվում՝ երբեմն նաև ընտրական իրավունք: Գաղութներն ընդհակառակը, ամբողջությամբ կառավարվում էին հռոմեական օրենքներին համապատասխան՝ Հռոմից նշանակված պաշտոնյայի՝ պրոկուրատորի, միջոցով: **Municipia**ն օտար սերմ էր ցանված հռոմեական հողում, այն դեպքում, երբ գաղութները, հակառակը, հռոմեական կարգերն էին՝ պարտադրված օտար հողերին⁶:

MUNICIPIUM (Lat. *Munus*, պարտականություն կամ արտոնություն, *capere*՝ վերցնել), Հին Հռոմում այս եզրույթը հիմնականում օգտագործվում էր առանձին անձանց կամ համայնքների

римского полиса. — М: Издательство МГУ, 1983. — 260 с. и Тит Ливий. История Рима от основания В 3 т. Т. 3. Кн. XXXIV—XLV. М.: «Ладомир», 2002.

⁵ Edmundson, J., 2006, "Cities and urban life in the Western provinces of the Roman Empire, 30BC 250AD", in Potter, D.S, A Companion to the Roman Empire, Malden, Massachusetts: Blackwell, է 2 250280:

⁶ S t u Penny cyclopaedia of the Society for the diffusion of useful knowledge, Volume 7, Charles Knight , 1837

և Հռոմեական պետության միջև փոխհարաբերությունների բնութագրման, կարգավիճակի սահմանման համար: Ավելի ուշ շրջանում այն սկսեցին սովորաբար օգտագործել Հռոմի հետ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող բոլոր համայնքների համար: Թեև մինչ օրս վիճելի է մնում այն հարցը, թե այս եզրույթի կիրառումը արդյոք նշանակում է պարտականություններով ծանրաբեռնում, թե՛ արտոնությունների ընդունում, սակայն հին աղբյուրները *munus* տրամադրումը միանշանակ կապում են որոշակի «պարտականությունների» և «ծառայությունների» հետ: Ամենայն հավանականությամբ մունիցիպալիտետի հիմնական իմաստը Հռոմին ծառայություններ մատուցելն է⁷: Այս տեսակետը հաստատվում է այն բոլոր տեղեկություններով, որ մեզ են հասել Հռոմի Հանրապետության ժամանակաշրջանի **MUNICIPIUM** անվանումով քաղաքներից: Լացիոյի (ժամանակակից Ֆրասկատտի) հնագույն քաղաքներից Թուսկուլն (լատ. աղբյուրներում՝ Tusculum) առաջին անգամ քաղաքն է, որին մ.թ.ա. 381 թվականին շնորհվել է *municipia* կարգավիճակ, իսկ նրա բնակիչներին՝ Հռոմի լիիրավ քաղաքացիություն (Livy vi. 26; cf. Cic. *Præ Planc.* 8, 19), իսկ մ.թ.ա. 338 թվականին ավարտված Լատինական պատերազմից հետո այդ կարգավիճակը լայնորեն տարածվեց նաև Հռոմի հետ Լատինական միություն կազմած այլ քաղաքների վրա (see [ROME, History](#)):

Հռոմեական քաղաքները բաժանվում էին երեք տեսակի՝

1. *Cqlqniae civium Rqmanqrum*, որոնց բնակիչները լիիրավ քաղաքացիներ էին,
2. *municipia*, որոնց բնակիչները մասնակի քաղաքացիության կարգավիճակ ունեին և,

3. *fqederatae civitates* (ներառյալ այսպես կոչված՝ Լատինական գաղութները), որոնք ամբողջությամբ անջատ էին Հռոմից և վերջինիս հետ դրանցից յուրաքանչյուրի հարաբերությունները կառուցվում էին դրանց կարգավիճակի վերաբերյալ առանձին պայմանագրով (Ֆեդուս): *Municipia*ները Հռոմից տարբեր աստիճանի կախվածության մեջ էին գտնվում: Որոշ քաղաքներ, ինչպես Ֆունդին (Livy viii. 14; cf. *ibid.* 19), տեղական ինքնակառավարման սահմանափակ իրավունքներից էին օգտվում՝ միայն իրենց իրավասության սահմաններում, մյուսները, ինչպես Անագնիան (Livy ix. 43; Festus, *de verb. Significatiqne*, s.v. “municipium,” p. 127, ed. Müller), ենթարկվում էին Հռոմի ուղղահայաց կառավարմանը: Բայց դրանք բոլորը ունեին նաև որոշ ընդհանուր գծեր. Դրանց քաղաքացիները պարտավոր էին վճարել նույն հարկերը և ծառայել հռոմեական լեգիոններում (բանակում), ինչպես Հռոմի լիիրավ քաղաքացիները, սակայն զրկված էին վերջիններիս վերապահված բացառիկ իրավունքից՝ տրիբների Կոմիցիայում քվեարկելու (*jus suffragii*), և հռոմեական մագիստրատուրաներ պահելու իրավունքից (*jus hqngrum*): Ֆեստուսից տեղեկանում ենք նաև, որ Պրետոր Ուրբանոսին ներկայացնելու համար յուրաքանչյուր *municipium*ում ուղարկվել էին լիազորված անձինք՝ *praefecti juri dicundq* (մջբ. *praefectura ժողովածուից*, էջ 233)⁸: Հետևաբար **municipiumի շնորհումը** հազիվ թե զուտ պարտականությունների սահմանում համարվեր՝ նույնիսկ այնպիսի քաղաքների դեպքում, որոնք պահպանում էին իրենց վերահսկողությունը իրենց սեփական գործերի նկատմամբ: Բայց երկրորդ Պունիական պատերազմի ավարտից հետո, երբ Հռոմը վերջնականապես դարձավ հիմնական կենտրոնական ուժը, ոչ միայն Իտալիայում, այլև Միջերկրական ծովին հարող բոլոր հարևան երկրներում նկատվում է իտալական քաղաքների հավակնությունները

⁷ Գ ա կ առ ա կ տ ե ս ա կ ե տ ն եր ը տ ե ս ՝ Marquardt, Ro m. Staatsverw. i. p. 26, n. 2 (2nd ed., Leipzig, 1881) և նրա կողմից մեջբերվող հեղինակները:

⁸ Տե ս ն ա ն Willems, Droit public romain, Louvain, 1874. էջ 381:

ստանալ հռոմեական քաղաքացիություն իբրև արտոնություն, իբրև պարգևատրում Հռոմի հզորացմանն ուղղված իրենց ծառայությունների դիմաց:

Մ.թ.ա. 2րդ դարի ընթացքում բազմաթիվ մունիցիպալիաներին, որոնց քաղաքացիներն ընդգրկվեցին հռոմեական տրիբների մեջ, վերապահվեցին *jus suffragii* և *jus hqnqrum* (Livy xxxviii. 36, 37): Նրանք ստացան հանրային իրավունքներ, սակայն Հռոմից հեռու գտնվելու պատճառով հազվադեպ էին դրանցից օգտվում, բայց Ս. Մարիուսի կոնսուլություններում Արիպիոսի բնակիչները (մ.թ.ա. 107/100թթ. ընթացքում) երբեմն մեծ ազդեցություն էին թողնում Հռոմի քաղաքականության վրա և դրանց ուժը երևում է իտալական քաղաքների ընտրողների կողմից Տիբերիոս Գրակիսին տրամադրված միացյալ աջակցությունից (մ.թ.ա. 133թ.):

Թեև քաղաքներին շնորհվել էին արտոնություններ և չնայած այն հանգամանքին, որ դրանց բնակիչներին շնորհվել էր Հռոմի լիիրավ քաղաքացիության, այնուամենայնիվ այդ քաղաքները ոչ միայն չէին ընդգրկվել Հռոմի կազմում, ինչպես դա է պահանջում հանրային իրավունքների տրամաբանությունը, այլ ավելին, դրանք շարունակում էին մնալ իբրև անկախ քաղաքային միավորներ: Այդ իրավաբանական անումալիան մունիցիպալ համակարգում պահպանվեց և քաղաքացիության շնորհման եղանակով շարունակեց զարգանալ նաև Սոցիալական պատերազմից հետո: Այս համակարգի շնորհիվ նմանատիպ քաղաքների բնակիչները (լատ.՝ *municeps*) հանդես էին գալիս երկակի քաղաքացիության կարգավիճակով՝ տվյալ քաղաքի ինքնակառավարվող համայնքի և միաժամանակ՝ Հռոմի լիիրավ քաղաքացիներ, որը համապատասխանաբար արտահայտվում էր նրանց՝ մի կողմից հռոմեական մագիստրատների ընտրություններում, մյուս կողմից՝ սեփական քաղաքի մագիստրատների ընտրություններում վճռական ձայնի իրավունքով:

Մ.թ.ա. 91 թվականին բռնկված Սոցիալական պատերազմի⁹ արդյունքում ստեղծվեց Իտալիայի մունիցիպալ նոր, միասնական համակարգ, իսկ արդեն Լատինական պատերազմից հետո վերը նկարագրված երեք տեսակի քաղաքների կարգավիճակների հիմնական տարբերությունները իսպառ վերացվեցին: Պատերազմի պատճառն այն էր, որ հռոմեական սենատը չհաստատեց իտալիկների, էտրուսկների և ումբրերի ցեղերին Հռոմի քաղաքացիություն շնորհելու մասին օրինագիծը, այն դեպքում, երբ Հռոմեական բանակը իր բազմաթիվ պատերազմների համար հիմնականում զինվորներ էր հավաքագրում իտալիկներից, Հռոմի հանրային գյուղատնտեսական հողերի՝ *ager publicus*, մեծ մասը թեև գտնվում էր իտալիկների տարածքում, սակայն նրանք իրավունք չունեին մշակել այդ հողերը և վերջապես իտալիկները Հռոմի հետ կազմում էին պոլիսների ամորֆ դաշինք՝ ֆեդերացիա, որտեղ յուրաքանչյուր միավորի իրավական կարգավիճակը տարբերվում էր մյուսներից իր արտոնությունների և պարտականությունների տարբեր շրջանակով:

Հռոմի կոնսուլներ Լուցիոս Հուլիոս Կեսարի մ.թ.ա. 90թ. և Plautia Papiriaյի մ.թ.ա. 89թ. օրենքների հիման վրա սկզբում էտրուսկներին և ումբրերին, այնուհետև՝ Իտալիայի յուրաքանչյուր քաղաքին սահմանված կարգով կատարված հայտարարությունից հետո տրվեց Հռոմի լիիրավ քաղաքացիություն: *Municipium* եզրույթն այլևս կորցրեց նախկին իմաստը, որով

⁹ Ճանոթություն. Սոցիալական կամ Մարսիական պատերազմ (լատ. *Bellum Sociale* կամ *Bellum Marsicum*, մ.թ.ա. 91—88թթ.): Այն կոչվում էր նաև մարսիական, քանի որ դրա մեջ ակտիվ դեր ունեին մարսիական ցեղերը: Պատերազմի հիմնական պատճառը իտալիկ ցեղերի՝ քաղաքացիություն շնորհելու և իրենց քաղաքներին միատեսակ կարգավիճակ տրամադրելու պահանջներ:

մատնանշվում էին առանձին քաղաքների և դրանց բնակչության իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, և արդեն կիրառվում էր իբրև Իտալիայի՝ հռոմեական քաղաքացիներից բաղկացած, բոլոր քաղաքային համայնքների ընդհանուր անվանում: Սակայն Հռոմի քաղաքականության վրա դրանց սոցիալքաղաքական ազդեցությունը թուլացնելու նպատակով նշված օրենքներով այդ քաղաքները միացվեցին 8 կամ 10 նոր ստեղծված, այլ ոչ թե գոյություն ունեցող 35 տրիբներին: Այնուամենայնիվ Հռոմը կորցրեց իր բացառիկ տեղն ու դերը՝ դառնալով *primus inter pares*՝ առաջինը հավասարների մեջ:

Մունիցիպալ այս համակարգի հիմնադրումը (որով կարգավորվեց այս բոլոր քաղաքների իշխանությունները միասնական հիմքերի վրա և կանխորոշվեց դրանց՝ Հռոմի հետ հարաբերությունների բնույթը) ամենայն հավանականությամբ Լուցիուս Կորնելիուս Մուլլայի (հռոմեական ռազմավար, քաղաքական գործիչ և մ.թ.ա. 13878թթ. Հռոմի անժամկետ դիկտատոր, կոնսուլ և կայսր) ձեռքի գործն էր, ով, անշուշտ, մեծապես խթանեց Իտալիայի սահմաններից դուրս առաջին *municipia*ների՝ քաղաքացիների համայնքների, ստեղծմանը գավառներում, որոնք վայելում էին նույն իտալական քաղաքների կարգավիճակը: Հուլիոս Կեսարը կամ Plautia Papiria ընդարձակեց Հռոմի մունիցիպալ համակարգը իր՝ Ցեսալպինյան Գալիային լատինական քաղաքացիություն շնորհելու մասին, օրենքով, որի հետևանքով այդ տարածաշրջանի բոլոր քաղաքները ստացան *municipia*ի կարգավիճակ: Ընդհանուր առմամբ այդ դրանց կարծես թե ավելի հստակ կազմակերպական տես տրվեց, սակայն Ցեսալպինյան Գալիայի բնակավայրերից բացի այդ ժամանակ մունիցիպալ համակարգ չէր ստեղծվել նույնիսկ Իտալիայից դուրս գտնվող քաղաքացիների համայնքներում: Օգոստոսը և նրա հետևորդները գավառական քաղաքներին կամ լիիրավ քաղաքացիություն էին շնորհում կամ՝ մասնակի, որն, ինչպես վերը նշվեց, հայտնի է *jus Latii* անվանումով: Այդ մասնակի քաղաքացիությունն, ըստ երևույթին, լրիվ չվերացվեց նույնիսկ համայնքներին լիիրավ քաղաքացիություն շնորհելուց հետո և որոշ ժամանակ շարունակվում էր պահպանվել տարբերությունները *cqlqniae*, *municipia juris Rqmani* և *municipia juris Latini* միջև: Սակայն վարչարարության միասնական համակարգն աստիճանաբար ընդունվեց բոլոր երեք տեսակի համայնքների համար և տարբերություններն այնքան էին քչացել, որ բոլոր երեքի համար էլ կիրառվում էր ընդհանուր *municipium* եզրույթը: Մինչ այդ պահը ոչ հռոմեական մնացած քաղաքների ինկորպորացիան պրինցիպատի միասնական մունիցիպալ համակարգի մեջ սկիզբ առավ հիմնականում Կայսրության արևելյան հատվածում, որտեղ հունական քաղաքակրթությունը մեծապես նպաստում էր քաղաքային կյանքի զարգացմանը: Մինչդեռ կայսրության արևմտյան մասում քաղաքային համայնքները սրընթաց զարգացում ստացան միայն Հռոմի անմիջական ազդեցության ներքո:

Արևմտյան գավառներում մունիցիպալ տեսակի քաղաքների զարգացումը առավել ակտիվ էր ընթանում հատկապես այն տարածքներում, որտեղ մշտապես տեղակայված էին հռոմեական լեգիոններ և անկասկած այդ իրադարձությունների նման զարգացումը օրինաչափ էր դարձել այն բոլոր դեպքերում, երբ հռոմեական հպատակները համատեղ մշտական բնակություն էին հաստատում այս կամ այն տարածաշրջանում՝ անկախ նպատակից (զինվորական, պետական ծառայություն, վերաբնակություն և այլն): Համենայն դեպս պրինցիպատի գոյության 1ին դարի վերջում *municipia*ները բազմապատկվել էին ինչպես Կայսրության արևելյան, այնպես էլ՝ արևմտյան հատվածներում և ամենուրեք քաղաքները դարձան հռոմեական ազդեցության կենտրոններ:

Կայսրությանը նախորդող ժամանակաշրջանի *municipia*ների ներքին կյանքի մասին ներկայումս շատ քիչ բան է հայտնի: Իսկ Հուլիոս Կեսարին հաջորդող շրջանի համար, սակայն պահպանվել են տեղեկատվության երկու կարևոր աղբյուրներ: Պահպանված մի շարք պաշտոնական աղբյուրները՝ մունիցիպալ օրենքները, մանրամասն գիտելիքներ են մեզ հաղորդում բոլոր *municipia*ների համար սահմանված միասնական կառուցվածքի վերաբերյալ՝ որոշ չնչին տարբերություններով, իսկ բազմաթիվ մասնավոր գրառումներից մենք տեղեկանում ենք դրանց սոցիալական կյանքի մասին: Պրինցիպատի գոյության 1ին դարի մունիցիպալ կառուցվածքը ընդօրինակված էր Հունաստանի և Հռոմի վաղ շրջանի կառավարման ընդհանուր ձևից:

Յուրաքանչյուր քաղաքի իշխանություն կազմված էր մագիստրատներից, սենատից և ժողովից և որևէ կախում չունեին Հռոմի կենտրոնական իշխանությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ սվյալ հարցը մտնում էր Հռոմի անմիջական իրավասության մեջ: Մյուս կողմից բոլոր համայնքները պարտավոր էին որոշ ծառայություններ մատուցել Կայսերական իշխանությանը, ինչպես՝ զինվորներով և ձիերով փոխհատուցումը զինվորական ծառայության համար, կամ՝ իրենց տարածքում կայսերական փոստային առաքումներին աջակցելը, երբեմն՝ հռոմեական պաշտոնատար անձանց զվարճացնելը կամ կամ հռոմեական զինվորներին բնակավորելը:

Քաղաքացիները բաժանվում էին երկու տեսակի՝ 1) *cives*՝ քաղաքացիներ՝ անկախ դրա ձեռքբերման հիմքից՝ ծնունդով, նատուալիզացիայի, թե՛՝ էմանսիպացիայի եղանակով և 2) *incqlae*, քաղաքացիներ, որոնք մասնակի քաղաքացիություն էին ստանում՝ կախված որոշակի վայրից և որոշակի ժամանակահատվածի համար (նման է ներկայում օտարերկրացիների համար ահմանվող կացության կարգավիճակին): Երկու տեսակներն էլ ծանրաբեռնված էին քաղաքացիությունից բխող պարտականություններով, բայց *incqlae*ները չունեին քաղաքացիությունից բխող որևէ իրավունքից, բացառությամբ՝ քվեարկության սահմանափակ իրավունքից: Քաղաքացիները խմբավորված էին տրիբների կամ կուրիանների (*tribes* գր *curiae*) մեջ և ժողովների համաձայն կրում էին Տրիբուտի Կոմիցիա կամ Կուրիայի Կոմիցիա (*Cqmitia Tributa* կամ՝ *Cqmitia Curiata*) անվանումը: Տեսականորեն այդ կոմիցիաների լիազորություններն ընդարձակ էին՝ մագիստրատների ընտրությունը և օրենսդրության քվեարկությունը: Սակայն մի կողմից Սենատի ազդեցության ավելացումը ընտրությունների նկատմամբ և մյուս կողմից առաջատար քաղաքացիների նվազող հետաքրքրությունը ընտրովի պաշտոնների նկատմամբ, ժողովրդական ընտրությունները աստիճանաբար ձևական դարձրեցին: Անհրաժեշտ քանակությամբ թեկնածուներին Սենատի կողմից երաշխավորելու պրակտիկական հաստատվել էր միայն Կոմիցիաներում, ինչպես նաև Իսպանիայի 1ին դարի մունիցիպալ իրավունքով հատուկ դրույթ էր սահմանում այն դեպքերի համար, երբ բավարար թվով թեկնածուներ էին առաջադրվում:

Մինչդեռ Իտալիայում համաժողովրդական ընտրությունների ինստիտուտն ավելի երկար գոյատևեց: Օրինակ Պոմպեյում հայտնաբերված գրավոր աղբյուրներում սուր քննադատության են ենթարկվում Չրո դարում անցկացված ընտրությունները: Տեղական Սենատը կամ Կուրիան մշտապես մեծ ազդեցություն ուներ մունիցիպալ քաղաքականության վրա: Դրա անդամները ձևավորվում էին տեղական ազնվականությունից և սկզբնական շրջանում Հռոմը հատուկ արտոնություններ էր տրամադրում այն անձանց, ովքեր իրենց քաղաքներում սենատորներ էին (օրինակ՝ շնորհում էր Հռոմի լիիրավ քաղաքացիություն):

Մագիստրատները ընտրվում էին տարին մեկ անգամ, 6 հոգու կազմով, որոնք էլ բաժանվում էին երեք զույգ կոլեգաների: Բարձրագույն մագիստրատներն էին *Iiviri (Duqviri) juri dicundq*, ով, ինչպես երևում է անվանումից, նախագահում էր տեղական ընդգհանուր ժողովը և իրականացնում տեղական ողջ իշխանությունը: Այս պաշտոնի թեկնածուների տարիքային ցենզը 25 տարեկանն էր, պետք է առնվազն լիներ կրտսեր մագիստրատներից մեկը և համապատասխաներ տեղական Սենատի անդամներին ներկայացվող բոլոր պահանջներին: Իր կարևորությամբ հաջորդը Լիվիի էդիլներն էին՝ *Iiviri aediles*, ովքեր պատասխանատու էին ճանապարհների, հանրային շինությունների, զվարճանքի, հացահատիկի և ողջ քաղաքի ոստիկանական վերահսկողության համար: Ըստ երևույթին նրանք դիտարկվում էին *Iiviri juri dicundq*ներից ստորադաս պաշտոնյաներ (cqllegae minores), և որոշ քաղաքներում իրավունք ունեին փոխարինել վերջիններիս նրանց բացակայության ժամանակ՝ առնվազն հրավիրել և նախագահել կոմիցիաները: Իսկապես, բազմաթիվ աղբյուրներ հիշատակում են 4 *viri (Quattuqviri)* առկայության մասին, որը բաղկացած էր երկու 4 *viri juri dicundq*ներից և երկու 4 *viri aediles*ներից, բայց հիմնականում նախկինը դիտարկվում էր իբրև բարձրագույն մագիստրատ:

Երկու քվեստորներների պաշտոնները, որոնք վերահսկում էին համայնքի ֆինանսները, ստեղծվել էին մունիցիպիաների մեծ մասում: Մակայն որոշ համայնքներում նման պաշտոններ չկային: Պատճառն այն էր, որ քվեստորականությունը, որպես տեղական ինստիտուտ, հիմնվեց այն մունիցիպիաներում (օրինակ՝ Հռոմում), որտեղ անհրաժեշտություն էր առաջացել թեթևացնել բարձրագույն մագիստրատների ծանրաբեռնվածությունը: Գրավոր աղբյուրներում հաճախ հիշատակվող մյուս մունիցիպալ մագիստրատներն էին՝ *quinquennales*ներն ու *praefect*ները: *Quinquennales*ները յուրաքանչյուր 5 տարին մեկ փոխարինում էին 2 *viri*ներին *quul* 4 *viri juri dicundq*ներին և տարբերվում էին վերջիններից իրենց լիազորությունների շրջանակով (համատեղում էին ինչպես դրանց, այնպես էլ՝ մինչև Սուլլայի բարեփոխումները ցենզորներին վերապահված լիազորությունները): Կայսրության շրջանի մունիցիպիաներում գոյություն ունեին երկու տեսակի պրեֆեկտներ՝ որոնք չպետք է շփոթել Սոցիալական պատերազմից առաջ մունիցիպիաներում գոյություն ունեցած համանուն պաշտոնների հետ:

Առաջին խումբը բաղկացած է այն պրեֆեկտներից, որոնք համարվում էին 2 *viri*ների ժամանակավոր ներկայացուցիչներ, երբ իրական պաշտոնյաներն իրենց հիվանդության կամ հարկադրված բացկայության պատճառով ի վիճակի չէին իրականացնել իր պաշտոնից բխող պարտականությունները: Պրեֆեկտների երկրորդ խումբը, ովքեր գրավոր աղբյուրներում հիշատակվում են *praefecti ab decurionibus creati lege Petronia* անվանումով, ըստ երևույթին նշանակվում էին տեղական Սենատի կողմից այն բոլոր դեպքերում, երբ բարձրագույն մագիստրատների իսպառ բացակայությունը կարող էր հանգեցնել Հռոմի կողմից նշանակումների իրականացմանը:

Սոցիալական տեսակետից Հռոմեական կայսրության *municipia*ները կարող են դիտարկվել երեք առումներով. 1) տեղական ինքնակառավարման կենտրոններ, 2) կրոնական կենտրոններ և 3) իբրև առևտրաարդյունաբերական կենտրոններ: Ներկայացնենք ավելի մանրամասն.

1. Քաղաքների տեղական կառավարման գլխավոր առանձնահատկությունը մունիցիպալ իշխանությունների համալիր ազդեցությունն է քաղաքի հիմնական կենսապայմանների

զարգացման գործընթացների վրա: Հռոմում և այլ մունիցիպալիտետներում պետական միջոցներից օգնություն էր տրամադրվում բնակչության չքավոր հատվածին, ինչպես նաև ցորենի գների սուբսիդավորումը՝ դրա գնի՝ սովորական քաղաքացիների համար մատչելիությունն ապահովելու նպատակով: Պլինիոսի ժամանակ բազմաթիվ քաղաքներում մունիցիպալ իշխանություններին ենթակա հանրային դպրոցներ էին ստեղծվել, որոնց մասին Պլինիոսը նշում է, որ քաղաքում մեծ իրարանցում էր սկսվում, երբ անհրաժեշտություն էր առաջանում դպրոցի ուսուցիչ նշանակել: Նա անձամբ խրախուսում էր Կոմոյում այնպիսի մունիցիպալ դպրոցի հիմնումը, որտեղ դրա պահպանությանը և վերահսկողությանը, այդ թվում՝ ուսուցիչների նշանակմանը, ներգրավված քաղաքի ազնվականությունը, կպահօաներ իր լիազորությունները: Պահպանված աղբյուրները վկայում են նաև, որ քաղաքային բժիշկները վարձատրվում էին պետության կողմից: Ջրամատակարարումը նույնպես համայնքային բյուջեի հաշվին էր և վերահսկվում էր այդ նպատակով նշանակված մագիստրատների կողմից: Այս բոլոր ծառայությունների համար անհրաժեշտ տեղական գանձարանի ծախսերը հիմնականում փակվում էին առանձին քաղաքացիների դրամական կամ աշխատանքով կատարվող հանգանակությունների հաշվին և քաղաքային կարիքների համար սովորաբար ուղղակի հարկեր չէին հավաքվում: Համայնքային գանձարանը լցվում էր համայնքի կալվածքների եկամուտների հաշվին, հատկապես այնպիսի եկամտաբեր աղբյուրների հաշվին, ինչպիսիք հանքերն էին, ներկրման և արտահանման մաքսերը: Միևնույն ժամանակ արտառոց դեպքերում (բնական աղետներ, հրդեհ և այլն) կայսերական գանձարանից սուբսիդիաներ էին հատկացվում:

2. Քաղաքի կրոնական կյանքի առավել կարևոր առանձնահատկությունն այն էր, որ դրանք ական կայսրի պաշտամունքի կենտրոններ էին: Կեսարի երկրպագությունը որպես կազմակերպական տեսք ունեցող պաշտամունք մի շարք գավառական քաղաքներում հախտոն զարգացավ Օգոստոս կայսրի իշխանության օրոք, որը խրախուսվում էր նրա և նրա հետևորդների կողմից իբրև այդ կենտրոններում հզորացող և բարգավաճող Հռոմի և կայսրի իշխանության նկատմամբ չեզոքության և հավատարմության նշան, որն էլ այդ իշխանությունն ամրացնող հիմքերից մեկն էր: Ավելին, քաղաքներում կայսրի երկրպագությունը կարգավորելու նպատակով *Augustales* հրամանով նշանակված պաշտոնյաները կարևոր և պատվավոր տեղ էին զբաղեցնում գավառական հասարակությունում: Բնակչության ստորին խավերի շարքում նրանք առավել առաջատար և բարեկեցիկ մարդիկ էին: Այս ուղղությամբ Օգոստոս կայսրի սահմանած կանոնները միանգամից երկու խնդիր լուծեց՝ Կեսարի երկրպագությունը գավառական կյանքի բոլոր առավել ակտիվ կենտրոններում, ինչպես նաև Հռոմեական կայսրության *municipia*ներում ձևավորվող արդյունաբերական խավի հավատարմությունը իր և իր հետևորդների անձի նկատմամբ, որը դարձավ ամենահզոր քաղաքական ուժը ժամանակակից Եվրոպայում:

3. Այդ ազատ արտադրողների խավի զարգացումը դարձավ *municipia*ի գլխավոր առանձնահատկությունը, որոնք հանդիսանում էին արտադրության և արհեստների կենտրոններ: Հռոմում հեծյալների իշխանության գալուց հետո Հանրապետության վերջին հարյուր տարվա ընթացքում փոխվեց այն հին Հռոմեական սկզբունքը, թե առևտուրն ու ձեռնարկատիրությունը իշխող դասի արժանապատվությունից ցածր են, այնուամենայնիվ Հանրապետության վերացումից հետո դեռ երկար ժամանակ Հռոմում պահպանվեցին ազնվականության այն մոտեցումները, որ առևտուրն ու ձեռներեցությունը միայն ստրուկների համար են: Գավառական քաղաքներում, այնուամենայնիվ, այս մոտեցումը շատ արագ վերացավ դեռ կայսրության ստեղծման առաջին տարիներին: Ավելին, աղբյուրները վկայում

են, որ նույնիսկ բուն Բուսալիայի գավառական քաղաքներում կարճ ժամանակ հետո գոյություն ունեւ մեծ և բարգավաճող ազատ արտադրողների խավ, որի անդամները հպարտ էին իրենց աշխատանքով և կապված էին միմյանց հետ ամուր կորպորատիվ, դասակարգային ոգով՝ լատ. *esprit de corps*: Այս դասակարգի ներկայացուցիչները համքարությունների՝ գիղիանների (*cqllegia, sqdalitates*), մեջ միավորվելու ամուր ձգտում են ցուցաբերում, ինչը հաստատվում է տարբեր աղբյուրներում նմանատիպ անթիվանհամար միությունների մասին վկայություններով: Դեռ հնագույն ժամանակներից հասարակության ազատ անդամների բոլոր դասերի կողմից Հռոմում հաճախ էին ստեղծվում կրոնական կամ այլ նպատակներ հետապնդող կազմակերպություններ, միություններ: Սուլլայից հետո իշխանությունը այդ միություններին կասկածանքով էր վերաբերվում հասկապես այն բանից հետո, երբ դրանք սկսեցին շահարկվել քաղաքական կյանքում: Այդ պատճառով էլ և Հռոմում և Բուսալիայում բազմաթիվ միջոցներ էին ձեռնարկվում դրանց ճնշելու նպատակով: Այդ քաղաքականությունը շարունակվեց դեռ առաջին կայսրերի օրոք և տարածվեց ողջ կայսրությունով, բայց համքարությունները, միությունները և գավառական քաղաքները շարունակվում էին հզորանալ և բարգավաճել՝ ի հեճուկս այդ ճնշումների:

Գրեթե բոլոր նմանատիպ *cqllegia*ների՝ միությունների, մասին մեզ առնվազն երկու հանգամանք է հայտնի. Որոշ աստվածությունների երկրպագությանն աջակցելը և իրենց անդամների հուղարկավորության համապատասխան ծիսակարգի իրականացումը: Թեև Կայսրությունում միայն այս երկու հիմնական խնդիրների լուծման համար էին թույլատրվում միությունների ստեղծումը, սակայն իրականում դրանց քողի ներքո ամենատարբեր տեսակի միավորումներ էին ստեղծվում: Միությունների ստեղծվում էին համապատասխան համայնքի հիմքի վրա: Դրանցից յուրաքանչյուրը ամենամյա ժողովներում ընտրում էր իր պաշտոնյաներին և գանձապետներին, իսկ ամեն 5 տարին մեկ անգամ վերանայվում, ճշտվում էր միության անդամների ցուցակը: Ըստ այդմ էլ այդ ցուցակների հետ էին համաձայնեցվում քաղաքային մագիստրատի սենատորների ցանկը: Կասկածելի է, թե որքանով էին այս միավորումները ծառայում այս կամ այն մասնավոր արտադրության, արհեստագործության կազմակերպմանն ու հաստատմանը: Առաջին երեք հարյուրամյակների համար որևէ փաստ, սպացույց չունենք առ այն, որ որևիցե միավորում բաղկացած լինի միայն մեկ տեսակի արհեստով զբաղվող բանվորներով: Բայց որևէ կասկած չկա նաև, որ ավելի ուշ շրջանում արհեստագործական միությունները զարգացան ու իրենց հերթին միավորվեցին գավառական քաղաքների մյուս միավորումների հետ, որը հետագայում դարձավ Հռոմեական կյանքի ամենահին առանձնահատկություններից մեկը: Ըստ երևույթին *municipia*-ներում հասարակության տարբեր խավերի միջև գոյություն են ունեցել նշանակալից միություններ: Այս հանգամանքը մասամբ բացատրվում է այն բարձր քաղաքացիական զգացումով, գիտակցությամբ, որն ավելի էր ամրապնդում միասնության կապերը, քան բազմաթիվ շարժումների աղբյուրները, և մասամբ էլ՝ քաղաքների ընդհանուր բարեկեցության աճով, որն էլ վերացնում էր սուր սոցիալական հակասությունները: Ըստ երևույթին բարեկեցիկ քաղաքացու ուներին էր մշտապես դրված ծանր ֆինանսական բեռը, որը նրանց փոխհատուցվում էր հասարակության մեջ նրանց բարձր հեղինակությամբ և քաղաքական գերիշխանությամբ, ինչն էլ իր հերթին դարձավ մունիցիպալ համակարգի հստակ ընդգծված թիմկրատիկ կառուցվածքի առավել բնութագրիչ գիծը: Միասնական համակարգի սահմանափակումների շրջանակներում առաջին կայսրերի կողմից որդեգրած քաղաքների անկախության և քաղաքացիական պատրիտիզմի խրախուսման քաղաքականությունը 34րդ դարերում փոխվեց. Նպատակային ջանքեր գործադրվեցին կայսրի անմիջական կամ

տեղերում նրա ներկայացուցիչների ուղղակի վերահսկողության ներքո քաղաքները որպես կայսերական իշխանության գործիքներ օգտագործելու ուղղությամբ: Այդ քաղաքականությունն ուղեկցվում էր քաղաքացիական և համայնքային գիտակցության աստիճանական անկմամբ, որն արտահայտվեց նրանով, որ քաղաքի բնակիչները հրաժարվում էին տեղական մագիստրատուրաներում իրենց թեկնածության առաջադրումից կամ մունիցիպալ սենատում անդամության բեռը վերցնելուց:

Քաղաքների տեղական իշխանությունների նկատմամբ ժողովրդական վերահսկողության տարածված ձևը, որպես իրողություն, դադարում է գոյություն ունենալ արդեն Կայսրության գոյության 1ին դարի վերջին զուգահեռ: Երկու դար անց տեղական ինքնակառավարումը ձևական բնույթ ստացավ: Իսկ միջնադարյան տեղական ինքնակառավարում ունեցող համայնքներն ավելի շատ հին, մոռացված համակարգի վերասպումներ էին՝ ոչ թե Օգոստոս կայսրի և նրա հետնորդների ժամանակների անկախ և բարգավաճող մունիցիպալիտետների էվոլյուցիոն զարգացման արդյունք:

ՀԵՂԻՍԿԵՐ՝ C. Bruns, *Fqntes juris rōmani*, c. III., Nq. 18, and c. IV. (Freiburg, 1893), fqr *Municipal Laws and references tq Mqmmsen's cōmmentary in C.I.L.*; E. Kuhn, *Städtische u. bürgerliche Verfassung des rōm. Reichs* (Leipzig, 1864); Marquardt, *Römische Staatsverwaltung*, I. i. (Leipzig, 1881); Tqutain, in *DarembertSaglıq Dictiqnnaire des antiquités grecques et rōmaines*, s.v. "Municipium"; S. Dill, *Rqman Sqciety frqm Nerq tq Marcus Aurelius*, c. 2 and 3 (Lqndqñ, 1904). Fqr the gilds see Mqmmsen, *De cqllegiis et sqdaliciis Rqmanqrum* (Keil, 1843); Liebenam, *Geschichte u. Qrganisatiqn des rōm. Vereinswesens* (Leipzig, 1890).

[\(A. M. Cl.\)](#)

Нечай Ф. М., Рим и италики, Минск, 1963; Mqmmsen Th., *Römisches Staatsrecht*, Bd 3, Lpz., 1887; SherwinWhite A. N., *The Rqman citizenship*, Qxf., 1939; Manni E., *Per la sqria dei municipii finq alla 13uerra sqciale*, Rqma, 1947.

1. [↑](#) Fqr a cōntrary view, hqwever, see Marquardt, *Röm. Staatsverw.* i. p. 26, n. 2 (2nd ed., Leipzig, 1881), and authqrities there cited.
2. [↑](#) Fqr a different view see Willems, *Drqit public rōmain*, p. 381 (Lquvain, 1874).

Այսպիսով **municipium լատիներեն** բառը կարելի է ընդհանրացված թարգմանել իբրև «ինքնակառավարվող համայնք»:

Municipium ներկայումս շրջանառությունից հանված է, սակայն դրանից ածանցվող «**municipality**», «**муниципалитет**», «**муниципальные власти**» բառերն այսօր էլ պաշտոնապես կամ լրագրողական, կենցաղային, լեզվում կիրառվում են մի շարք ժամանակակից պետությունների տեղական ինքնակառավարման համակարգերն անվանելու համար (օրինակ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Իսպանիա և այլն): Ռուսաստանում թեև այս եզրույթը իրավական ակտերում պաշտոնական գործածություն չի ստացել, սակայն այն լայնորեն օգտագործվում է իրավունքի համապատասխան ճյուղը, և տեղական իշխանություններն անվանելու համար: Եվ քանի որ քննարկվող բառն ունի կիրառման ընդարձակ աշխարհագրություն, լայնորեն օգտագործվում է մի շարք հումանիտար գիտություններում (քաղաքագիտություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և այլն), ուստի մենք էլ չենք խուսափի դրա դրա կիրառությունից:

Ինչ վերաբերվում է «իրավունք» եզրույթին, ապա այն օգտագործվում է մի քանի իմաստներով՝ կախված դրա կիրառությունից: Այսպես՝ այն օգտագործվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստով, որպես իրավունքի նորմերի համակարգ՝ (իրավունքի ճյուղ), որպես գիտության և համապատասխան ուսումնական դասընթացի անվանում և այլն: Երբեմն այն գործածվում է նաև կենցաղում ոչ իրավական իմաստով, որը բնականաբար իրավական արժեք չունի և դասընթացի շրջանակներում դրա ուսումնասիրությունը հետաքրքրություն չի ներկայացնում¹⁰:

Այսպիսով կարելի է ասել, որ «մունիցիպալ իրավունք» բառակապակցությունն օգտագործվում է երեք հիմնական նշանակությամբ.

Առաջին, իրավունքի նորմերի այն ամբողջությունը, որը համասեռ հասարակական հարաբերությունների կարգավորման շնորհիվ կազմում է ՀՀ իրավունքի համակարգի առանձին ճյուղ:

Երկրորդ, այսպես է անվանվում նաև մունիցիպալ իրավունքի ճյուղը և դրա նորմերի իրացման պրակտիկան ուսումնասիրող գիտական հայեցակարգերի, տեսությունների և գիտելիքների ամբողջությունը ներառող գիտակարգը՝ գիտությունը), և վերջապես

Երրորդ, «մունիցիպալ իրավունք» է անվանվում նաև այն ուսումնական դասընթացը, որը նախատեսված է իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ու բաժինների ուսումնական ծրագրերով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այն բոլոր երկրներում, որտեղ տեղական մակարդակով գործում է միայն տեղական ինքնակառավարման համակարգը, «մունիցիպալ իրավունք» անվանումը բովանդակային առումով լիովին համընկնում է կարգավորվող հասարակական հարաբերությունների ծավալի հետ: Պատահական չէ, որ այդ երկրներում իրավունքի համապատասխան ճյուղի և գիտության համար հաճախ երկու անվանում է կիրառվում՝ «մունիցիպալ իրավունք» կամ դրա թարգմանությունը՝ «տեղական ինքնակառավարման իրավունք», «համայնքային (կոմունալ) իրավունք» (ԱՄՆ, Անգլիա, ՌԴ, Գերմանիա և այլն)¹¹:

Մինչդեռ այն երկրներում, որտեղ տեղական ինքնակառավարումից բացի տեղերում իրականացվում է նաև տարածքային պետական կառավարում, «մունիցիպալ իրավունքի» ճյուղն իր մեջ է ընդգրկում նաև տարածքային կառավարման կազմակերպումն ու գործունեությունը կարգավորող իրավունքի նորմերը: Նկատենք, որ տարածքային կառավարումը նույն պետական կառավարումն է տեղերում և այն, որպես պետաիրավական ֆենոմեն, բովանդակային և կառուցվածքային կապ չունի տեղական ինքնակառավարման հետ: Տարածքային կառավարումն, ըստ էության, մտնում է վարչական իրավունքի կարգավորման առարկայի մեջ: Սակայն այն երկրներում, ուր տեղական մակարդակում զուգորդվում են տարածքային կառավարումն ու տեղական ինքնակառավարումը, գործառնական տեսակետից դրանք այնպիսի օրգանական կապի մեջ են գտնվում, որ տարածքային կառավարման ոլորտի առանձնացումը մունիցիպալ իրավունքից

¹⁰ տղամարդու, իբրև «տան գլխի», «ավագ եղբոր», նույնիսկ՝ «կուրսի ավագի» իրավունքն այլն:

¹¹ Շանթոնթյուն. Ռուսաստանում բուհական դասագրքերն ու օժանդակ ձեռնարկները վերնագրված են Муниципальное право Российской Федерации. Под ред. А.М.Никитина. Издат. «ЮНИТИДАНА», М., 2000 կամ «Местное самоуправление», Барабашев Г.В., М., 1996 կամ՝ Adrian CH. State and local government. N.Y.: ME Graw Hill, 1978 կամ Introduction to municipal law. 2nd edition, Pomeroy, John Norton Published: San Francisco; A.L. Bancroft and Company; 1883. Reprinted in 1997., Коммунальное право ФРГ», Тимофеев Н.С., М., 1982.

նպատակահարմար չէ ոչ տեսական, ոչ իրավակարգավորիչ և ոչ էլ՝ գործնական առումներով: Հենց այդ պատճառով էլ նմանատիպ երկրներում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման իրավունքը օրգանապես միացված են իրավունքի միասնական ճյուղի ներքո, որը սովորաբար պայմանականորեն կոչվում է նույն «մունիցիպալ իրավունք» անվանումով, ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում, կամ՝ «տեղական սահմանադրական իրավունք», «տեղական կոլեկտիվների իրավունք» կամ «տեղական վարչական իրավունք»՝ ինչպես Ֆրանսիայում¹²:

Այսպիսով, ինչպես դժվար չէր նկատել, «մունիցիպալ իրավունք» բառակապակցությունը հայերեն թարգմանությամբ նշանակում է «տեղական ինքնակառավարման իրավունք»: Սակայն մեր պետականագիտության մեջ ձևավորված ավանդույթի համաձայն գործածության մեջ դրվեց «ՀՀ մունիցիպալ իրավունք» արտահայտությունը, որն իր մեջ ներառում է ոչ միայն տեղական ինքնակառավարման, այլ նաև՝ տարածքային կառավարման ոլորտը կարգավորող իրավունքի համակարգը, այն ուսումնասիրող գիտությունը, ինչպես նաև համապատասխան դասընթացը:

Իրավագիտության մեջ տարածված տեսական կառուցվածքի համաձայն իրավունքի ներպետական համակարգն առանձին ճյուղերի բաժանելու հիմնական չափանիշներն են իրավական կարգավորման առարկան և մեթոդը:

Իրավական կարգավորման առարկան որակապես միասեռ հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք կարգավորվում են իրավունքի տվյալ ճյուղի նորմերով: ՀՀ մունիցիպալ իրավունքի առարկան ընդգրկում է տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում առաջացող համասեռ, առանձնահատուկ հասարակական հարաբերությունները:

Տարածքային կառավարումը պետական կառավարման տեղականտարածքային օղակն է, որը չունի կազմակերպականիրավական ինքնուրույնություն, սեփական բյուջե, եկամտի սեփական աղբյուրներ և գույք: Դրանք նույնպես բնութագրվում են գործադիր իշխանության խիստ կենտրոնացվածությամբ և աստիճանակարգությամբ:

Տեղական ինքնակառավարումը տեղական նշանակության հարցերն ինքնուրույնաբար լուծող համայնքի բնակչության տարածքային ինքնակազմակերպումն է: ՀՀ Սահմանադրության 104րդ հոդվածի համաձայն «Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը»: ՀՀ Սահմանադրության 2րդ հոդվածով ժողովրդին պատկանող իշխանության իրականացման այլ ձևերի շարքում նշվում է նաև տեղական ինքնակառավարումը:

Այլ կերպ ասած՝ *պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը (մունիցիպալ իշխանությունը) պետության մեջ միասնական հանրային (ժողովրդական) իշխանության իրացման ինքնուրույն ձևեր են:*

Ելնելով վերը նշվածից՝ կարելի է ընդհանրացնել, որ ՀՀ մունիցիպալ իրավունքի կարգավորման առարկան ընդգրկում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են՝

¹² Տե՛ս օրինակ՝ Roux André, “Droit constitutionnel local”, Paris, 1995, Braibant Guy “Le droit administratif Français”, Paris, 1984, Drago Rolan “Science Administratif”, Paris, 1980, Nadine DantonelCor «Droit des collectivités territoriales», Editions Bréal, 2007, Jacques Hardy. Institutions et droit des collectivités locales, l’Hermès, 1995

1. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տարածքային, կազմակերպական, ֆինանսատնտեսական և իրավական հիմքերի,

2. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների,

3. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ հսկողության ու դրանց պատասխանատվության և

4. Տեղական ինքնակառավարման երաշխիքների սահմանման և կարգավորման առնչությամբ:

ՀՀ մունիցիպալ իրավունքի կարգավորման առարկան բնութագրվում է նաև այն կազմող հասարակական հարաբերությունների հետևյալ հիմնական հատկանիշներով.

1. Այդ հարաբերություններն առաջանում են բացառապես տեղական տարածքային մակարդակում. մարզերում՝ տարածքային կառավարման, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարման իրագործման ժամանակ: Ինչ խոսք, այս ոլորտներին առնչվող հասարակական հարաբերություններ կարող են առաջանալ նաև համապետական կամ նույնիսկ՝ միջազգային, այդ թվում՝ միջպետական, մակարդակներում, սակայն դրանք չեն մտնում մունիցիպալ իրավունքի առարկայի մեջ:

2. Դրանք կրում են համալիր բնույթ, քանի որ դրանք առնչվում են հասարակական կյանքի այն բոլոր ոլորտներին, որոնք առաջանում և ընթանում են տեղական մակարդակում (քաղաքական, սոցիալտնտեսական, հոգևորմշակութային, ֆինանսատնտեսական, հասարակական կարգի պահպանության և այլ ոլորտներ):

3. Մունիցիպալ իրավական հարաբերությունների պարտադիր սուբյեկտ են հանդիսանում տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, դրանց պաշտոնատար անձը կամ համայնքի բնակչությունը¹³:

Վերը թվարկված բնութագրիչ գծերից թեկուզև մեկի բացակայությունը բավարար է սովյալ հասարակական հարաբերությունը մունիցիպալ իրավունքի կարգավորման առարկայի մեջ չընդգրկելու համար:

ՀՀ մունիցիպալ իրավունքի կարգավորման առարկան կազմող հասարակական հարաբերություններն իրենց էությամբ բազմաբնույթ են: Ըստ դրանց մասնակիցների և նրանց միջև փոխհարաբերությունների բնույթի առանձնահատկությունների մունիցիպալ իրավական հարաբերությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Կազմակերպական իրավական տարբեր մակարդակների համաստորադաս սուբյեկտների միջև (օրինակ՝ ՀՀ կառավարության և մարզպետի միջև),

2. Կազմակերպական իրավական միևնույն մակարդակի ոչ համաստորադաս սուբյեկտների միջև (օրինակ՝ տարբեր համայնքների կամ դրանց մարմինների միջև),

3. Կազմակերպական իրավական առումով միմյանց հետ կապ չունեցող սուբյեկտների միջև (խոսքը գնում է հանրային իշխանության երկու տարբեր ձևերի կրողների՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման կամ դրանց մարմինների միջև հարաբերությունների մասին),

4. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց կազմակերպական իրավական ենթակայության ներքո գտնվող հիմնարկների և կազմակերպությունների միջև (խոսքը գնում է այն հիմնարկների և իրավաբանական անձանց մասին, որոնց հիմնադիր կամ մասնակից են տեղական մարմինները, օրինակ՝ Երևանի քաղաքապետի և «Երևանի Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲԸի, մարզպետի և

¹³ Տե ս Էօօօթեի Ի.Ա., Օօօօօօ Ը.Է., Իօեօեիօեւիֆօ Իօօօի ԾՕ. Էջօօօ. «ԻԾԸՆՕՍ», Ի., 2002, է 2

մարզպետարանի աշխատակազմի կամ համայնքի ղեկավարի և համայնքի ղեկավարի աշխատակազմի միջև հարաբերություններ),

5. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց կազմակերպականիրավական ենթակայության ներքո չգտնվող հանրային հիմնարկների և կազմակերպությունների (օրինակ՝ մարզպետի և նույն մարզում գործող հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ստորաբաժանումների (մարզի զինկոմիսարիատ, ոստիկանության բաժին, տեղական զանձապետական բաժանմունք և այլն) միջև հարաբերություններ,

6. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց կազմակերպականիրավական ենթակայության ներքո չգտնվող մասնավոր հիմնարկների և կազմակերպությունների միջև և

7. Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և ֆիզիկական անձանց (քաղաքացիների, համայնքի բնակչության) կամ համայնքի միջև հարաբերություններ:

Փաստորեն ՀՀ մունիցիպալ իրավունքի կարգավորման առարկան ընդգրկում է այն բոլոր հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործադրման ընթացքում: Վերը նկարագրվածի հիման վրա կարելի է ներկայացնել ՀՀ մունիցիպալ իրավունքի հետևյալ սահմանումը.

ՀՀ մունիցիպալ իրավունքը իրավունքի համալի (կոմպլեքսային) ճյուղ է, որն իրենից ներկայացնում է տարածքային պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և փոխգործակցության, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից անմիջականորեն կամ իրենց կողմից ընտրված մարմինների միջոցով տեղական նշանակության հարցերի լուծման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի ամբողջություն:

Ինչպես արդեն նշել ենք՝ ՀՀ մունիցիպալ իրավունքը իրավունքի մյուս ճյուղերից առանձնացվում է նաև իր **կարգավորման մեթոդի** առանձնահատկություններով: «Մեթոդ» բառը հունարեն ծագում ունի և թարգմանաբար նշանակում է «եղանակ», «միջոց»: Առավել ընդհանուր ձևակերպման համաձայն իրավական կարգավորման մեթոդը իրավահարաբերության մասնակցի վարքագծի վրա կարգավորիչ ներգործության միջոցն է, եղանակը:

Իրավագիտության մեջ իրավական կարգավորման մեթոդի վերաբերյալ գոյություն ունեն երկու մրցակցող տեսակետներ. հեղինակների մի մասի պնդմամբ իրավունքի յուրաքանչյուր ճյուղ բնութագրվում է իրավական կարգավորման իր սեփական՝ մյուսներից տարբերվող, մեթոդներով: Այդ իսկ պատճառով էլ իրավական կարգավորման մեթոդները իրավունքը ճյուղերի բաժանելու գլխավոր հիմքերից մեկն են:

Հեղինակների մեծ մասը, սակայն, գտնում են, որ իրավական կարգավորման մեթոդները ներպետական ողջ իրավունքի, այդ թվում՝ դրա առանձին ճյուղերի, համար ընդհանուր են և միատեսակ կարգադրագիր, արգելք կամ թույլտվություն: Այս տեսակետն ընդունելու դեպքում կարող է օրինաչափ հարց առաջանալ այն մասին, թե ինչպես կարող են բոլոր ներպետական իրավունքի համար կիրառվող միևնույն մեթոդները միաժամանակ հիմք հանդիսանալ դրա ճյուղերը միմյանցից առանձնացնելու համար: Խնդիրն այն է, որ իրավունքի յուրաքանչյուր ճյուղի մեջ այդ մեթոդները կիրառվում են ոչ ամբողջությամբ կամ կիրառվում են տարբեր զուգակցմամբ և պարբերականությամբ: Այսպես, քրեական իրավունքն առավելապես օգտվում

է արգելման, քաղաքացիական իրավունքը՝ թույլատրման, իսկ վարչական իրավունքը՝ կարգադրագրման մեթոդից:

Հին հռոմեական իրավունքից հայտնի է և մինչ օրս էլ արդիական է իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի (*Jus publicum*, *Jus privatum*): Այս կամ այն հասարակական հարաբերության իրավական կարգավորման նորմը սահմանելիս այդ հարաբերության մասնակիցների վարքագծի վրա կարգավորիչ ներգործության մեթոդներն ընտրելիս պետությունն առաջնորդվում է մեկ կարևոր չափանիշով՝ այդ հարաբերությունում արդյոք առկա է հանրային շահը, թե՛ ոչ:

Հանրային շահի առկայության դեպքում համապատասխան հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմով նախապատվությունը տրվում է դրան, որն արտահայտվում է այդ շահը կրող պետության կամ համայնքի կողմից իրավահարաբերության մյուս կողմին իր կամքի պարտադրմամբ: Այդ պարտադրանքն արտահայտվում է իրավահարաբերության մյուս կողմին համապատասխան վարքագծի կարգադրագրման կամ արգելման եղանակով: Այլ կերպ ասած՝ հանրային իրավունքի ճյուղերին բնորոշ են կարգադրագրման կամ արգելման մեթոդները, որոնք միասին կազմում են **կարգավորման իմպերատիվ եղանակը** (լատ. *imperq* կամ *imperium*՝ հրաման, իշխանություն): Ինչ վերաբերվում է մասնավոր իրավունքի կողմից կարգավորվող իրավահարաբերություններին, որտեղ բացակայում է հանրային շահը (անկախ նրանից՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները իրավահարաբերության մասնակից են, թե՛ ոչ), կիրառվում է թույլատրման մեթոդը, որն էլ կազմում է **կարգավորման դիսպոզիտիվ եղանակը** (լատ. *disponere*՝ տնօրինել):

Փաստորեն կարգավորման իմպերատիվ եղանակը ենթադրում է իրավահարաբերության մասնակիցների իրավաբանական անհավասարություն: Այն խիստ բնորոշ է վարչական իրավունքին, կառավարչական բնույթի իրավահարաբերություններին, քանի որ դրանցում իրավահարաբերության մի կողմը՝ սուբյեկտը, կարգադրագիրնորմի ուժով իր կամքն է պարտադրում մյուս կողմին՝ օբյեկտին: Սակայն կոնկրետ իրավահարաբերությանը պետության կամ համայնքի մասնակցությունը (ի դեմս դրանց մարմինների կամ պաշտոնատար անձանց), ինքնին բավարար չէ դրանում հանրային շահի առկայության համար: Հակիրճ լինելու համար կարելի է հետևյալ կերպ ձևակերպել. «այն բոլոր իրավահարաբերություններում, որտեղ առկա է հանրային շահը, դրա մասնակիցներից գոնե մեկը պարտադիր կարգով պետությունն է կամ համայնքը: Մինչդեռ պետության կամ համայնքի մասնակցությունը իրավահարաբերությանը դեռևս չի նշանակում հանրային շահի առկայությունը»: Նշենք, որ կարգադրագիրն ու արգելքն, ըստ էության, նույն իմպերատիվ մեթոդներն են, այն տարբերությամբ, որ կարգադրագրման դեպքում իրավահարաբերության օբյեկտին պարտադրվում է որոշակի վարքագծի դրսևորում, իսկ արգելման դեպքում՝ արգելվում է համապատասխան վարքագծի դրսևորումը:

Իրավական կարգավորման դիսպոզիտիվ եղանակը դրսևորվում է թույլատրման մեթոդի ձևով, երբ իրավահարաբերության մասնակիցները կամավոր են մտնում այդ հարաբերության մեջ, կամովին ձեռք բերում իրավունքներ և ստանձնում պարտավորություններ: Պատահական չէ, որ այս մեթոդը գերիշխում է մասնավոր իրավունքի ճյուղերով (քաղաքացիական իրավունք, ընտանեկան իրավունք, կորպորատիվ իրավունք և այլն) կարգավորվող հարաբերություններում:

ՀՀ մունիցիպալ իրավունքը թեև հանրային իրավունքի ճյուղերից է, քանի որ դրա կողմից կարգավորվող երկու հիմնական ոլորտներում էլ (տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում) գերիշխում է հանրային շահը, սակայն որոշ խումբ

հարաբերություններում (հիմնականում համայնքի սոցիալառնտեսական, մշակութային և այլն) բացակայում է հանրային շահը և կիրառվում է նաև կարգավորման դիսպոզիտիվ եղանակը:

Մանրամասնենք. տարածքային կառավարման ոլորտի հարաբերությունների հիմքում գերիշխում է իմպերատիվ կարգավորման եղանակը (բացառություն են կազմում այն հարաբերությունները, որտեղ բացակայում է իշխանական ենթակայությունը, օրինակ՝ մարզպետների միջև հարաբերությունները): Տարածքային կառավարումը պետական կառավարման բաղկացուցիչ մասն է, դրա տեղականտարածքային օղակը, որին բնորոշ է խիստ կենտրոնացումը և աստիճանակարգությունը: Ինչպես արդեն նշվել է, այս ոլորտի հարաբերությունների հիմնական առանձնահատկությունն է հանրային շահի գերակայությունը և այդ շահը ներկայացնող պետական կառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի պարտադիր մասնակցությունն այդ իրավահարաբերությանը:

Ինչ վերաբերվում է տեղական ինքնակառավարման ոլորտին, ապա այն նույնպես հանրային իշխանության դրսևորման ինքնուրույն ձև է, ուստի այս դեպքում ևս գերիշխում է կարգավորման իմպերատիվ եղանակը (օրինակ՝ թեև համայնքի ղեկավարը պետական իշխանության մարմին կամ պաշտոնատար անձ չէ, սակայն նա նույնպես կարող է ընդունել համընդհանուր և համապարտադիր վարքագծի կանոններ սահմանող իրավական ակտեր՝ նորմատիվ ակտեր, որոնց կատարումն ապահովվում է պետական հարկադրանքի միջոցներով): Միննույն ժամանակ, տեղական ինքնակառավարման ոլորտում լայնորեն օգտագործվում է նաև կարգավորման դիսպոզիտիվ եղանակը կապված համայնքի, որպես իրավաբանական անձի, սեփականության, տնտեսական գործունեության հետ: Այս խումբ իրավահարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինները մասնավոր շահ են հետապնդում (օրինակ՝ համայնքի կարիքների համար գույքի ձեռքբերում կամ համայնքի ջրամատակարարում, աղբահանություն): Հետևաբար դրանք չեն կարող իշխանական լիազորություններ կիրառել իրավահարաբերության մյուս մասնակիցների նկատմամբ:

2. Մունիցիպալ իրավունքի համակարգը:

ՀՀ մունիցիպալի իրավունքը, ինչպես և ներպետական իրավունքը ընդհանրապես և նրա մասը կազմող իրավունքի այլ ճյուղեր, համակարգային բնույթ ունի: Այդ համակարգի հիմնական բաղկացուցիչ տարրերն են դրա երկու ենթաճյուղերը՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ենթահամակարգերը: ՀՀ մունիցիպալ իրավունքի համակարգը ներառում է երեք հիմնական տարրեր՝ մունիցիպալ իրավունքի սկզբունքները, ինստիտուտները և նորմերը:

ՀՀ մունիցիպալ իրավունքի ենթաճյուղերի մասին կխոսենք դասագրքի հատուկ մասի համապատասխան բաժիններում:

Ինչ վերաբերվում է համակարգի մյուս տարրերին, ապա հարկ է նշել, որ դրանք գտնվում են օբյեկտիվ կապի և փոխներգործության մեջ, որի շնորհիվ էլ ձևավորվել, գործում և կատարելագործվում է մունիցիպալ իրավունքը, որպես իրավունքի միասնական ճյուղ:

Այսպես, իրավունքի ճյուղի **սկզբունքերն** այն ելակետային հիմնարար դրույթներն են, որոնք

1. ձևավորում են տվյալ իրավունքի ճյուղը իբրև համասեռ հասարակական հարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերի ամբողջություն,

2. ապահովում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում հասարակական հարաբերությունների կարգավորման միատեսակություն և միասնականություն՝ անկախ այն հանգամանքից, թե երբ և որտեղ են դրանք ծագել (օրինակ՝ Վանաձոր քաղաքում, թե՛ Օշական գյուղում կամ Սյունիքի, թե՛ Շիրակի մարզերում) և վերջապես

3. կանխորոշում, ուղղորդում և նպատակային զարգացում են հաղորդում տվյալ իրավունքի ճյուղի նորմերին՝ բացառելու համար հասարակական հարաբերությունների կարգավորման գործընթացում դրանց միջև հակասությունները և տարընթերցումները:

Ճիշտ է, իրավունքի սկզբունքները վարքագծի բուն կանոն չեն պարունակում (դրանցով իրավահարաբերության մասնակիցների համար իրավունքներ և պարտականություններ չեն սահմանվում), սակայն դրանց հիմնարար, ստեղծարար, անկյունաքարային դերն ու նշանակությունը որևէ կերպ չի նսեմանում, քանի որ դրանք կենսագործվում են իրավունքի տվյալ ճյուղի կարգավորիչ նորմերի (նորմկանոնների) մեջ արտացոլվելու և դրանց միջոցով կիրառվելու եղանակով: Նշենք մեկ բնորոշ օրինակ. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման հիմնարար սկզբունքներից է «1) ընդհանուր իրավասությունը՝ համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»: Այս սկզբունքի հիման վրա նույն Օրենքի 10րդ հոդվածի վերջին նախադասությամբ սահմանվում է. «Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն»: Ավելին, Օրենքի 70րդ հոդվածի վերջին նախադասությամբ, իբրև այս սկզբունքի ապահովման երաշխիք, նեգատիվ իրավական կարգավորման եղանակով սահմանվում է. «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացումը պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից արգելվում է, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով»:

Մունիցիպալ իրավունքի **ինստիտուտը** միասեռ հասարակական հարաբերություններ կարգավորող նորմերի ամբողջությունն է: Ընդհանրապես գիտության մեջ ցանկացած դասակարգում համարվում է պայմանական, սակայն առավել տարածված տեսակետի համաձայն ՀՀ մունիցիպալ իրավունքը ներառում է հետևյալ ինստիտուտները.

1. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տեղն ու դերը հանրային իշխանության իրականացման ժողովրդավարական համակարգում:

Այս ինստիտուտի նորմերով **նախ** տրվում են տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և դրանց վերաբերվող այլ երևույթների հասկացությունների սահմանումները¹⁴, **երկրորդ**, կանխորոշվում է պետական կառավարման, դրա տարածքային

¹⁴ Ծանոթություն և՛ 33 Սահմանադրության 104րդ հոդվածով սահմանվում է **տեղական ինքնակառավարման** հասկացությունը, 104.1րդ հոդվածով՝ **համայնքի** հասկացությունը, «Տեղական ինքնակառավարման մասին» 33 օրենքի 54րդ հոդվածով՝ **համայնքի բյուջեի** հասկացությունը, և այլն:

օղակի և տեղական ինքնակառավարման միջև փոխհարաբերությունների բնույթը¹⁵ և **էրրորդ**, սահմանվում է տեղական ինքնակառավարման ոլորտում ժողովրդաիշխանության իրացման անմիջական և ներկայացուցչական ձևերի փոխհարաբերակցությունը¹⁶:

2. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հիմունքները:

Այս ինստիտուտի նորմերով սահմանվում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տարածքային, կազմակերպական, ֆինանսատնտեսական և իրավական հիմունքները: Այսպես, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման

տարածքային հիմքն են կազմում իրավունքի այն բոլոր նորմերը, որոնցով սահմանվում են ՀՀ վարչատարածքային կառուցվածքը, մարզերի և համայնքների վարչական սահմանները և դրանց փոփոխությունները, համայնքների անվանումը և դրանց փոփոխությունը¹⁷:

կազմակերպական հիմքն են կազմում իրավունքի այն բոլոր նորմերը, որոնցով սահմանվում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, կառուցվածքի սահմանման և փոփոխության, ինչպես նաև լիազորությունների դադարեցման կարգը¹⁸,

ֆինանսատնտեսական հիմքն են կազմում իրավունքի այն բոլոր նորմերը, որոնցով սահմանվում են մարզի՝ պետական բյուջեից տրամադրվող հատկացումները, համայնքի բյուջեն, աղբյուրները, կառուցվածքը, մարզպետարանին պետական սեփականության գույքի ամրակցման և հետ վերցման, համայնքի սեփականության գոյացման աղբյուրները, համայնքի ձեռնարկատիրական գործունեությունը և այլն¹⁹,

իրավական հիմքն են կազմում իրավունքի այն բոլոր նորմերը, որոնցով կարգավորվում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի հարաբերությունները, սահմանվում են դրանց մարմինների կողմից ընդունվող իրավական

¹⁵ Ճանոթություն՝ ՀՀ Սահմանադրության 2րդ հոդվածով տեղական ինքնակառավարումը ներկայացվում է իբրև ժողովրդի խանութի իրացման ինքնուրույն ձև, 11.2րդ հոդվածով Հայաստանի Հանրապետությանը երաշխավորում է այն, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 71րդ հոդվածով մանրամասնվում է այդ հարբերություններին:

¹⁶ Ճանոթություն՝ ՀՀ Սահմանադրության 107րդ հոդվածի (1ին և 4րդ մասեր) բովանդակությունից ակնհայտ է, որ սահմանադիրը տեղական ինքնակառավարման ոլորտում նախապատվություն է տալիս ներկայացուցչական ժողովրդավարությանը. «Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների... միջոցով: Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով»:

¹⁷ Ճանոթություն՝ ավելի մանրամասն տես «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6րդ հոդվածը:

¹⁸ Ճանոթություն՝ ՀՀ Սահմանադրության 88.1րդ և 107րդ հոդվածներ, ՀՀ ընտրական օրենսգիրք և այլն:

¹⁹ Ճանոթություն՝ ավելի մանրամասն տես «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 56րդ գլուխերը, «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի հրամանագիրը:

ակտերի տեսակները, դրանց աստիճանակարգությունը ՀՀ ներպետական իրավունքի համակարգում²⁰:

3. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինման առարկան և լիազորությունները:

«Տնօրինման առարկա»ն այն հարցերի շրջանակն է, որոնց լուծման իրավասությունը վերապահված է տարածքային կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը²¹:

Այս ինստիտուտի նորմերով սահմանվում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ոլորտները, դրանց լիազորությունների շրջանակը: Այսպես, «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի հրամանագրի 1.2րդ կետով թվարկվում են մարզպետի կողմից ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության 10 ոլորտները, իսկ 1.121.20(1)րդ կետերով սահմանվում են մարզպետի լիազորություններն ըստ կոնկրետ բնագավառների: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր բնութագիրը տրված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10րդ հոդվածով, իսկ օրենքի 16րդ, 3245րդ հոդվածներով սահմանվում են համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի իրավասություններն ու լիազորությունները:

4. Տեղական ինքնակառավարման երաշխիքները:

ՀՀ Սահմանադրության 11.2րդ հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը»: Տեղական ինքնակառավարման երաշխիքները ներառում են իրավունքի այն բոլոր նորմերը, որոնցով սահմանվում են տեղական ինքնակառավարման և դրանց մարմինների տարածքային, կազմակերպական, ֆինանսատնտեսական և իրավական երաշխիքները: Այսպես, ՀՀ Սահմանադրության 110րդ հոդվածով սահմանվում է տեղական ինքնակառավարման **տարածքային** հիմնարար երաշխիք՝ համայնքները օրենքով միացնելու կամ առանձնացնելու համար ՀՀ կառավարությունը պարտավոր է կոնսուլտատիվ հանրաքվե անցկացնել համապատասխան համայնքներում: **Կազմակերպական** երաշխիքներից է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 100րդ հոդվածի 8րդ կետը, ինչպես նաև 109րդ հոդվածը, որոնց համաձայն օրենքով նախատեսված դեպքերում համայնքի ղեկավարը ՀՀ կառավարության կողմից կարող է պաշտոնանկ արվել միայն դրա հիմքերի առկայության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դրական եզրակացության հիման վրա: **Ֆինանսատնտեսական** երաշխիքն այն է, որ համայնքները ունեն բյուջեի եկամուտների օրենքով երաշխավորված աղբյուրներ, ինչպես նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքը իրենց հայեցողությամբ

²⁰ Շանոթոլթյոլուն՝ տես «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11րդ հոդվածի 34րդ մասեր, 32րդ հոդվածի 17րդ կետը, «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի հրամանագրի 1.6րդ կետը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրոյթները:

²¹ Շանոթոլթյոլուն՝ տես ՀՀ Սահմանադրության 88.1րդ և 105րդ հոդվածները:

տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով ամրագրված ազատություն²² : Որպես **իրավական** երաշխիք կարելի է դիտարկել ՀՀ Սահմանադրության 101րդ հոդվածի 5րդ կետը, որի համաձայն ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել «տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով», ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 71րդ հոդվածի 4րդ մասը, որի համաձայն «Պետական լիազորված մարմինը, ինչպես նաև համապատասխան մարզպետը կարող են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկել դատարան»:

5. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը

Պատասխանատվության ինստիտուտը պետք է դիտարկել երկու հարթությունում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի դեմս տարածքային կառավարման մենք գործ ունենք գործադիր իշխանության **գործառնական** (ֆունկցիոնալ), իսկ տեղական ինքնակառավարման դեպքում՝ հանրային իշխանության **կազմակերպականիրավական** ինքնուրույնություն ունեցող օղակների հետ: Ըստ այդմ, եթե մարզպետի նկատմամբ կարող են կիրառվել միայն իրավական պատասխանատվության միջոցներ²³, որպես նրա լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանք, ապա տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ կարող են կիրառվել նաև քաղաքական պատասխանատվության միջոցներ²⁴:

ՀՀ մունիցիպալ իրավունքի համակարգի վերջին տարրը՝ իրավունքի նորմերն են, որոնք ունեն նույն եռանդամ կառուցվածքը (հիպոթեզ, դիսպոզիցիա և սանկցիա) և նույն ընդհանուր բնութագրիչ գծերը (դրանք ևս բնորոշվում են իբրև վարքագծի և գործելակերպի համընդհանուր և համապարտադիր կանոններ), ինչ ներպետական իրավունքի մյուս բոլոր նորմերը: Ինչ վերաբերվում է դրանց բնորոշ առանձնահատկություններին, ապա այս հարցն ավելի մանրամասն քննարկման կենթարկվի սույն Գլխի 5րդ ենթագլխում:

3. Մունիցիպալ իրավունքի աղբյուրները:

Իրավունքի տեսության մեջ **«իրավունքի աղբյուրներն»** ընկալվում են երկու իմաստով՝ **նյութականբովանդակային** և **ձևականիրավական**:

Իրավունքի **նյութական** աղբյուրները հասարակական կյանքի այն բոլոր հանգամանքներն են (քաղաքական, տնտեսական, սոցիալական, աշխարհագրական, դեմոգրաֆիկ և այլն), որոնք այս կամ այն կերպ ներագրում են ներպետական իրավունքի և դրա առանձին ճյուղերի

²² Ավելի մանրամասն տես՝ ՀՀ Սահմանադրության 105 և 106րդ հոդվածները:

²³ Ավելի մանրամասն տես՝ «Հայաստանի Հանրապետության մարզերում մայրաքաղաքի և այլ քաղաքների կառավարման մասին» ՀՀ նախագահի հրամանագրի 1.61.6³ –րդ կետերը:

²⁴ Ճանոթություն. Համայնքի ավագանին չի կարող արձակվել, սակայն համայնքի դեկավարը կարող է պաշտոնանկ արվել: Բացի այդ, թեև տեղական ինքնակառավարման մարմինների հետևանքի ինստիտուտ չի նախատեսվում, այնուամենայնիվ համայնքի բնակչությանը կարող է քաղաքակա պատասխանատվության ենթարկել դրանց՝ հաջորդ ընտրություններում այլ թեկնածուների օգտին քվեարկելու միջոցով:

ձևավորմանը, փոփոխմանը և/կամ վերացմանը: Նյութական աղբյուրները իրավունքի առավել կարևոր աղբյուրներն են, սակայն դրանք գտվում են այլ գիտությունների հետազոտության տիրույթում՝ քաղաքագիտություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն, աշխարհագրություն և այլն:

Իրավունքի գիտության և դասընթացի (այդ թվում՝ ՀՀ մունիցիպալ իրավունքի) շրջանակներում առավել կարևոր են իրավունքի **ձևական** աղբյուրները: Առավել տարածված սահմանման համաձայն իրավունքի ձևական աղբյուրները դրա նորմերի արտաքին դրսևորման ձևերն են, այսինքն՝ թե՛ այդ նորմերը որ իրավական ակտերում են ամրագրված: Ըստ այդմ, իրավունքի ձևական աղբյուրները, ըստ իրենց իրավաբանական ուժի, բաժանվում են՝

1. ՀՀ սահմանադրություն,
2. ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող միջազգային պայմանագրեր,
3. ՀՀ օրենքներ և
4. Ենթաօրենսդրական ակտեր:

Թվարկվածներից **ՀՀ Սահմանադրությունը** հանդիսանում է ՀՀ մունիցիպալ իրավունքի մշտական աղբյուրն իր ամբողջ ծավալով, քանի որ Սահմանադրությունը իրավունքի ներպետական համակարգում ունի բարձրագույն իրավաբանական ուժ և դրա կողմից կարգավորվող հարաբերությունների հիմնարար բնույթով պայմանավորված նաև՝ համակարգաստեղծ նշանակություն:

ՀՀ միջազգային պայմանագրերը, թեև իրենց իրավաբանական ուժով զիջում են ՀՀ Սահմանադրության նորմերին, այդուհանդերձ դրանք նույնպես հիմնարար, իսկ որոշ դեպքերում նաև՝ համակարգաստեղծ, նշանակություն ունեն ՀՀ մունիցիպալ իրավունքի համար: Այսպես, ՀՀ Սահմանադրության 7րդ Գլխի («Տեղական ինքնակառավարումը») նորմերի հիմքում դրված են 15.10.1985թ. Ստրասբուրգում ընդունված «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» դրույթները: Հայաստանի Հանրապետությունը խարտիային միացել է 20.05.1997թ. ՀՀ Ազգային Ժողովի որոշմամբ, ինչի հիման վրա նախ 2002 թվականի մայիսի 7ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» թիվ ՀՕ337 ՀՀ օրենքը, իսկ 2005թ, նոյեմբերի 27ին կայացած հանրաքվեի արդյունքներով արմատապես բարեփոխվեց ՀՀ Սահմանադրության 7րդ Գլուխը: Սա էլ հիմք դարձավ մի շարք օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև 2009թ. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունման համար:

Օրենքները նույնպես հիմնարար նշանակություն ունեցող աղբյուր են, սակայն դրանք ոչ միշտ և ոչ ամբողջ ծավալով են համարվում ՀՀ մունիցիպալ իրավունքի աղբյուրներ: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչատարածքային բաժանման մասին» և ՀՀ մի շարք այլ օրենքներ մշտապես և ամբողջ ծավալով համարվում են իրավունքի այս ճյուղի կարևորագույն աղբյուրներ, մինչդեռ օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը այդպիսի աղբյուր է համարվում միայն այնքանով, որքանով կարգավորում է տեղական ինքնակառավարման

մարմինների (այդ թվում՝ Երևան քաղաքի) ընտրությունների հետ կապված հարաբերությունները²⁵:

Ենթաօրենսդրական ակտերը նույնպես ՀՀ մունիցիպալ իրավունքի կարևոր աղբյուր են: Դրանցից են «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի հրամանագիրը, «Մարզպետարանի օրինակելի կանոնադրության մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ՀՀ մունիցիպալ իրավունքի կարևոր աղբյուր են հանդիսանում նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված մի շարք իրավական ակտեր՝ օրինակ. «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշումը (համանման կանոնակարգեր են ընդունվում բոլոր համայնքներում): Համայնքների ավագանին հաստատում է տվյալ համայնքի գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական նորմերը, առևտրի համայնքային կանոնները և այլն:

4. Մունիցիպալ իրավունքի տեղը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում:

ՀՀ մունիցիպալ իրավունքը ուրույն տեղ է զբաղեցնում ՀՀ իրավունքի համակարգում, ինչը պայմանավորված է նրանով, որ այն մեր երկրում ձևավորվել է իրավունքի հիմնարար ճյուղերի հիմքի վրա՝ որպես տեղերում իշխանության կազմակերպման և իրականացման նոր համակարգի սահմանման, ներդրման և համապատասխան օրենսդրության ձևավորման արդյունք:

Ինչպես արդեն նշել ենք, մունիցիպալ իրավունքը իրավունքի համալիր ճյուղ է, քանի որ դրա նորմերի զգալի մասը նախ. իրավունքի հիմնական ճյուղերի նորմերն են և երկրորդ. դրանք միաժամանակ կազմում են ածանցյալ իրավական կառուցվածք՝ իրավունքի համալիր ճյուղի ներքո: ՀՀ մունիցիպալ իրավունքի տեղն իրավունքի ներպետական համակարգում պարզելու համար անհրաժեշտ է պարզել դրա կապը և փոխներգործությունը իրավունքի մյուս ճյուղերի հետ: ՀՀ մունիցիպալ իրավունքի համալիր բնույթը, դրա սերտ կապը և փոխներգործությունը իրավունքի հիմնական ճյուղերի հետ, պայմանավորված է դրանց կարգավորման առարկան կազմող հասարակական հարաբերությունների, հետևաբար և՛ դրանք կարգավորող իրավական նորմերի ընդհանրությամբ: Փաստորեն մունիցիպալ իրավական հարաբերությունների զգալի մասը միաժամանակ մտնում են իրավունքի մի շարք հիմնական ճյուղերի կարգավորման առարկայի մեջ: Այսպես,

Մունիցիպալ իրավունքը առավել սերտ կապված է սահմանադրական իրավունքի հետ, որը, որպես իրավունքի առաջատար ճյուղ, կանխորոշում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործադրման հիմնարար սկզբունքները, տեղական ժողովրդաիշխանության իրացման ձևերը, տեղական ինքնակառավարման երաշխիքները, պետության ու համայնքի և դրանց մարմինների փոխհարաբերությունների բնույթը, տեղական ինքնառավարման հիմնական ոլորտները:

²⁵ Տ Ե Ս Զ Գ Ը Ն տր ա կ ան օր Ե Ն ս գր ք ի 2637 Գ Լ ու Խ Ն Ե ր ը :

Մունիցիպալ և վարչական իրավունքների միջև կապը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարզպետարանի կազմակերպման և գործունեության, դրա կառուցվածքի, մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության և համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության ոլորտների հարաբերությունները կարգավորվում են վարչական իրավունքի նորմերով: Բացի այդ, վարչական իրավունքի նորմերի ուժով համայնքի ղեկավարը նույնպես ունի վարչական մարմնի կարգավիճակ²⁶ և օրենսդրությամբ սահմանված ղեկավարում և կարգով սուբյեկտներին կարող է ենթարկել վարչական պատասխանատվության²⁷:

Մունիցիպալ իրավունքը սերտորեն կապված է նաև քաղաքացիական իրավունքի հետ, որն արտահայտվում է քաղաքացիական իրավունքի նորմերով համայնքի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիաիրավական կարգավիճակի, համայնքի սեփականության և այլ գույքային իրավունքների սահմանման մեջ: Մասնավորապես, համայնքի ղեկավարում հիշեցնենք, որ համայնքը ՀՀ Սահմանադրության 2րդ և 104.1րդ հոդվածի համաձայն հանրային իշխանության սուբյեկտ է և միաժամանակ՝ իրավաբանական անձ, որը յուրահատուկ քաղաքացիականիրավական կարգավիճակ է սահմանում դրա համար: Այսպես, համայնքը հիմնադրվում և լուծարվում է բացառապես օրենքով, համայնքի անդամները, պետությունը իրենց սեփական գույքով պատասխանատվություն չեն կրում համայնքի պարտավորությունների համար և այլն (ավելի մանրամասն կանոնադաշտնանք դասագրքի երրորդ բաժնում):

Մունիցիպալ իրավունքը սերտորեն կապված է նաև ֆինանսական իրավունքի հետ: Ֆինանսական իրավունքի նորմերով են կարգավորվում մարզին պետական բյուջեից ֆինանսավորման, համայնքային բյուջեի ձևավորման, օգտագործման, համայնքային պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման և բաշխման, տեղական հարկերի և տուրքերի հետ կապված, ինչպես նաև ֆինանսական բնույթի մյուս հարաբերությունները:

Մունիցիպալ իրավունքը կապված է նաև հողային, էկոլոգիական, քաղաքաշինական և իրավունքի այլ ճյուղերի հետ, քանի որ իրավական կարգավորման ենթարկվող հասարակական հարաբերությունները, չնչին բացառություններով հանդերձ, ձևավորվում, զարգանում և դադարում են այս կամ այն մարզում և համայնքում:

5. Մունիցիպալ իրավական նորմերը և ինստիտուտները: Դրանց իրականացումը:

Մունիցիպալ իրավունքի ինստիտուտները իրավունքի նորմերի ամբողջություն են, որոնք կարգավորում են մունիցիպալ իրավունքի առարկայի շրջանակներում ինքնուրույն և առանձնացված խումբ կազմող միասեռ և փոխկապակցված հասարակական հարաբերություններ:

Մունիցիպալ իրավունքի ինստիտուտներ են տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը, որոնք իրենց հերթին կազմված են մարզպետի, համայնքի ղեկավարի,

²⁶ Տե ս «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3րդ հոդվածի 1ի ն կետը:

²⁷ Տե ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35րդ հոդվածի 2րդ կետը:

դրանց աշխատակազմերի, համայնքի ավագանու, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հիմունքների, ինչպես նաև սույն գլխի 2րդ ենթագլխում նշված մյուս ինստիտուտներից:

Մունիցիպալ իրավունքի նորմերը վարքագծի համընդհանուր և պարտադիր կանոններ են, որոնցով պետությունը սահմանում և կարգավորում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և իրականացման գործընթացում առաջացող հասարակական հարաբերությունները, իրավահարաբերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Մունիցիպալ իրավունքի նորմերը բնութագրվում են ընդհանրապես իրավունքի նորմերին բնորոշ գծերով՝ դրանք վարքագծի համապարտադիր կանոններ են, սահմանվում և գործադրվում են պետության կողմից և պաշտպանված են պետական հարկադրանքի ուժով: Միաժամանակ դրանք բնութագրվում են նաև մի շարք առանձնահատկություններով, որոնց հիման վրա հնարավոր է դրանք տարանջատել իրավունքի մյուս ճյուղերի նորմերից: Այսպես,

1. մունիցիպալ իրավունքի նորմերի «երկակի պատկանելիությունը» նաև իրավունքի մյուս ճյուղերին, որն, ինչպես արդեն նշել ենք, պայմանավորված է կարգավորվող հասարակական հարաբերությունների հիմնական մասի ընդհանրությամբ:

2. մունիցիպալ իրավունքի բազմաթիվ նորմեր ընդունում են տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք չեն մտնում պետական ապարատի մեջ, սակայն դրանք նույնպես վարքագծի համընդհանուր և համապարտադիր կանոններ են:

3. մունիցիպալ իրավունքի նորմերը համալիր բնույթ ունեն, քանի որ դրանք կարգավորում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտի հարաբերություններ, որի շնորհիվ դրանք միաժամանակ դառնում են «երկու հասցեով» իրավունքի նորմեր՝ որևէ հիմնական ճյուղի և մունիցիպալ իրավունքի մաս:

Մունիցիպալ իրավունքի նորմերի էությունն ու բովանդակությունը առավել խորը և համակողմանի ուսումնասիրելու նպատակով անհրաժեշտ է տարբեր չափանիշների հիման վրա բաժանել խմբերի²⁸:

Ըստ իրավական կարգավորման օբյեկտի կամ կարգավորվող հարաբերությունների շրջանակի մունիցիպալ իրավունքի նորմերը բաժանվում են հինգ խմբերի, որոնք սահմանում են.

1. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տեղը ժողովրդաիշխանության իրականացման համակարգում (դրանց հասկացությունը, սկզբունքները և գործառույթները),

2. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տարածքային, կազմակերպական, ֆինանսատնտեսական և իրավական հիմունքները,

3. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տնօրինման առարկաները և դրանց մարմինների լիազորությունները,

²⁸ Ճանոթություն. Ընդհանրապես գիտության մեջ ցանկացած բաժանում, դասակարգում պայմանական բնույթ ունի և հետապնդում է ուսումնասիրվող օբյեկտի մասին առավել մանրամասն և ամբողջական պատկերացում կազմելու նպատակ:

4. տեղական ինքնակառավարման երաշխիքները և

5. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը:

Ըստ իրավահարաբերության մասնակցի վրա կարգավորիչ ներգործության բնույթի կամ ըստ նորմով կիրառվող մեթոդի մունիցիպալ իրավունքի նորմերը լինում են.

1. թույլատրող (օրինակ՝ համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող նորմերը)

2. պարտադրող (օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32րդ հոդվածի 1.1րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում) և

3. արգելող (օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 71րդ հոդվածի համաձայն Պետությունն իր ընդունած օրենքներով չի կարող ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման սույն օրենքի 67րդ հոդվածի համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով):

Ըստ բովանդակված հանձնարարականի որոշակիության (կատեգորիկության) աստիճանի տարբերվում են **իմպերատիվ և դիսպոզիտիվ** նորմեր:

1. **Իմպերատիվ** են այն նորմերը, որոնք իրավահարաբերության մասնակիցների համար սահմանում են վարքագծի միակ հնարավոր տարբերակ: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11րդ հոդվածի 2րդ մասի համաձայն համայնքի «Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ»:

2. **Դիսպոզիտիվ** նորմերը իրավահարաբերության մասնակցի կողմից իր վարքագծի ընտրության հնարավորություն: Օրինակ՝ նույն հոդվածի 6րդ մասի համաձայն «Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց»:

Ըստ գործողության տարածքի մունիցիպալ իրավունքի նորմերը լինում են **համապետական** (օրինակ՝ օրենքները) և **տեղական** (օրինակ՝ համայնքի ավագանու կողմից հաստատված առևտրի համայնքային կանոնները):

Ըստ նպատակային ուղղվածության մունիցիպալ իրավունքի նորմերը բաժանվում են **նյութական և ընթացակարգային** նորմերի:

Նյութական նորմերով սահմանվում են վարքագծի բուն կանոնները, իսկ **ընթացակարգային** նորմերով սահմանվում են նյութական նորմերի իրականացման եղանակները: Այդ պատճառով էլ դրանք հաճախ կոչվում են «սպասարկող» կամ՝ «ածանցյալ» նորմեր: Օրինակ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16րդ հոդվածով սահմանվում են ավագանու իրավասությունները (հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը, բյուջեն, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, որոշում է համայնքի ղեկավարի վարձատրության չափը և այլն), իսկ 1115րդ հոդվածներով՝ դրանց իրականացման

կարգը (հրավիրում և անցկացնում է նիստեր, քննարկում և քվեարկում է իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ իրավական ակտերի նախագծերը և այլն):

5. Մունիցիպալ իրավական հարաբերությունները և դրանց սուբյեկտները:

Մունիցիպալ իրավունքի առարկան պարզելուց հետո կարելի է անցնել դրա բաղադրիչների՝ մունիցիպալ իրավական հարաբերությունների բովանդակության վերլուծությանը: Ինչպես արդեն նշել ենք՝ մունիցիպալ իրավունքի առարկան ընդգրկում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների հարաբերությունները: Եթե տարածքային կառավարման դեպքում ամեն ինչ պարզ է՝ դրանք ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման ընթացքում առաջացող հարաբերություններն են, ապա նույնը չի կարելի ասել տեղական ինքնակառավարման ոլորտի համար: ՀՀ Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումը ճանաչում է հանրային իշխանության իրականացման յուրօրինակ, ոչ պետական ձև: Սահմանադրական այս նորույթը 1995 թվականին օրենսդրի և ավելի ուշ ստեղծված տեղական ինքնակառավարման մարմինների առջև բարձրացրեց վերջիններիս իրավագործության մեջ մտնող հասարակական հարաբերությունների շրջանակը որոշելու և հստակեցնելու անհրաժեշտության հարցը:

Այդ խնդիրը այդքան էլ դյուրին չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Բանն այն է, որ տեղական ինքնակառավարման մարմինները ստեղծվում են մի իրավական միջավայրում, որը նույնիսկ կոնկրետ նորմատիվ իրավական ակտերի բացակայության դեպքում այնուամենայնիվ վակուում չի առաջացնում: Հետևաբար օրենսդիրը, սահմանելով համայնքի իրավասությունները, պետական մարմինների լիազորությունների մի մասը փոխանցում է տեղական ինքնակառավարման մարմիններին: Այս տեսակետից չափազանց կարևոր է տվյալ խնդրի կշռադատված լուծումը:

Նշենք, որ Սահմանադրությունը արդեն իսկ ամրագրել է լիազորությունների բաշխման ընդհանուր ուրվագծերը. *«Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը»* (104րդ հոդված), *«Համայնքի սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարեր լուծելու և համայնքի պահանջունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ: Համայնքի սեփական լիազորությունների մի մասն օրենքով կարող է սահմանվել որպես պարտադիր: Պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին»* (105րդ հոդված):

Ինչպես դժվար չէր նկատել մեջբերված սահմանադրական դրույթներից, համայնքի իրավասության շրջանակները և դրա մարմինների լիազորությունները Սահմանադրությամբ խիստ անորոշ են ձևակերպված՝ «տեղական նշանակության հարցեր», «համայնքային

նշանակության հարցեր» կամ «համայնքի պահանջումներ»: Այս «բացը» «լրացվում է» օրենքով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է համայնքի ընդհանուր իրավասության սկզբունքը՝ *«համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»* (9րդ հոդվածի առաջին մաս): Իսկ օրենքով սահմանվում է, որ *«Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն»* (10րդ հոդվածի վերջին մաս):

Մունիցիպալ իրավական հարաբերությունները տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման իրականացման գործընթացի իրավական կարգավորման կառուցակարգի գլխավոր բաղադրիչներն են: Հենց դրանցով են որոշակիացվում այն սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածվում է մունիցիպալ իրավունքի նորմերի գործողությունը, հստակեցվում դրանց վարքագծի այն կառուցվածքը, որին պետք է և պարտավոր են հետևել մունիցիպալ իրավունքի սուբյեկտները:

Մունիցիպալ իրավական հարաբերությունները իրավահարաբերության տարատեսակ են, ուստի օժտված են ցանկացած իրավահարաբերությանը բնորոշ բոլոր հատկանիշներով: Մինևույն ժամանակ մունիցիպալ իրավական հարաբերությունները իրենց կարգավորման առարկայի, սուբյեկտի, ինչպես նաև դրանց վարքագծի վրա ներգործության ձևերի առանձնահատկություններով հստակ տարանջատվում են իրավահարաբերությունների ընդհանուր զանգվածից:

Մունիցիպալ իրավական հարաբերությունները մունցիպալ իրավունքի նորմերով կարգավորվող այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործադրման ընթացքում:

Ինչպես և մյուս իրավահարաբերությունները՝ մունիցիպալ իրավական հարաբերությունները առաջանում, փոփոխվում և դադարում են որոշակի իրավաբանական փաստերի (իրադարձություններ, գործողություններ կամ անգործություն) հիման վրա: Այսպիսով, մունիցիպալ իրավական հարաբերությունների համար նախադրյալներ են հանդիսանում իրավունքի նորմերը, իրավաբանական փաստերը և այդ հարաբերությունների մասնակիցների իրավասուբյեկտությունը (իրավունակությունը և գործունակությունը): Միայն այս երեք նախադրյալների առկայության դեպքում կարող են առաջանալ և ընթանալ իրավահարաբերությունները:

Մունիցիպալ իրավունքի սուբյեկտները

Տարածքային կառավարումն ու տեղական ինքնակառավարումը բնութագրվում են այդ ոլորտների իրավահարաբերության սուբյեկտների լայն շրջանակով, որոնք տարաբնույթ լիազորություններ ունեն իրենց ծավալով, կառուցվածքով և իրավական հատկություններով: Դա պայմանավորված է մունիցիպալ իրավական հարաբերությունների համալիր բնույթով, որոնք կապված են տեղական կյանքի բազմազան ոլորտներում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման խնդիրների և գործառույթների իրականացման հետ:

Ներկայումս տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում մունիցիպալիտետական հարաբերությունների սուբյեկտ են պետական մարմինները, տարածքային կառավարման մարմինները, ՀԳՄների տարածքային ծառայությունները, համայնքը, համայնքի բնակչությունը կամ դրա որոշակի մասը, համայնքի բնակիչը, տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքային կառավարչական հիմնարկը՝ աշխատակազմը, դրանց պաշտոնատար անձինք, համայնքի ավագանու անդամը, քաղաքացիները, միջհամայնքային միավորումները, մարզային և համայնքային ենթակայության հիմնարկներն ու կազմակերպությունները:

Հատկանշական է, որ որոշ հայրենական աշխատություններում որպես իրավունքի և մասնավորապես՝ մունիցիպալ իրավունքի, սուբյեկտ են նշվում նաև մարզերը²⁹, ինչը, մեր կարծիքով, սխալ տեսակետ է, քանի որ մարզերն ընդամենը վարչատարածքային միավորներ են և դրանց իրավասուբյեկտության մասին որևէ իրավական ակտով ոչինչ չի սահմանվում: Ավելին, մարզը չունի սեփականության իրավունք կամ այլ գույքային իրավունքներ (դրա մարմիններին ամրակցված ամբողջ գույքը համարվում է հիմնադրի՝ ՀՀ կառավարության, սեփականությունը): Ուստի դրանք չեն կարող օժտված լինել իրավասուբյեկտությամբ ցանկացած, առավել ևս՝ մասնավորիրավական հարաբերություններում:

Ինչ խոսք, համայնքը նույնպես վարչատարածքային միավոր է, սակայն այն միևնույն ժամանակ «մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է» և դրա իրավասուբյեկտությունը հատուկ ամրագրված է բարձրագույն օրենքով:

Համայնքի քաղաքացիաիրավական կարգավիճակի վերաբերյալ հնարավոր «կասկածները» փարատելու համար նույն Սահմանադրությամբ սահմանվում է, որ համայնքն «ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ»:

Մունիցիպալիտետական հարաբերությունների սուբյեկտները կարող են պայմանականորեն բաժանվել չորս խմբի.

Առաջին խումբը կարելի է անվանել գործադիր իշխանության մարմիններ: Դրանք են՝ տարածքային կառավարման մարմինները (մարզպետ, մարզպետարան, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, աշխատակազմի վարչություններ և բաժիններ, դրանց քաղաքացիական ծառայողներ և այլն) և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումները (մարզի տարածքային հարկային տեսչություն, ոստիկանության բաժին, զինվորական կոմիսարիատ և այլն):

ՀՀ Սահմանադրության 88.1.րդ հոդվածի համաձայն ***մարզպետները*** նշանակվում և ազատվում են կառավարության որոշմամբ: Նրանք իրականացնում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Փաստորեն տարածքային կառավարման մարմինները ՀՀ կառավարության տեղականտարածքային օղակն են, որոնք «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997թ. թիվ ՆՀ728 հրամանագրի համաձայն.

²⁹ Տե՛ս «ՀՀ քաղաքացիական իրավունք», Առաջին մաս, Դասագիրք բուհերի համար, Տ.Կ.Բարսեղյան, Երևան 2006թ., էջ 170171, ինչպես նաև «ՀՀ մունիցիպալ իրավունք» Դասագիրք բուհերի համար, Ա.Շ.Յարուկոյան, Երևան, 1999թ., էջ 25:

«1.2. Պետական կառավարումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

- ֆինանսներ,
- քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն,
- տրանսպորտ և ճանապարհաշինություն,
- գյուղատնտեսություն և հողօգտագործում,
- կրթություն,
- առողջապահություն,
- սոցիալական ապահովություն,
- մշակույթ և սպորտ,
- բնության և շրջակա միջավայրի պահպանություն
- առևտուր, հանրային սնունդ և սպասարկում:

Տարածքային քաղաքականությունը նշված բնագավառներում մարզպետը իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով»:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային մարմինները տարբեր ոլորտի իրավահարաբերություններում ներկայացնում են ՀՀ նախարարությունները կամ կառավարությանն առնչվող պետական կառավարման այլ մարմինները և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում մարզում իրականացնում են պետության տարբեր խնդիրներ և գործառնություններ:

Երկրորդ խումբը կազմում են այսպես կոչված **հաստուկ սուբյեկտները**³⁰, համայնքները (քաղաքային և գյուղական), խիստ վերապահումով նաև՝ Երևան քաղաքի վարչական շրջանները³⁰: Համայնքի յուրահատկությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. **Նախ**, համայնքը որոշակի տարածքի և դրա բնակչության «համաձուլվածքն է»: Այսպես, ՀՀ Սահմանադրության 104.1.րդ հոդվածի համաձայն «Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է: Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ»: ՀՀ Սահմանադրության սկզբնական տեքստով սպառնիչ թվարկվում էին ՀՀ վարչատարածքային միավորների տեսակները՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները: Մարզերը կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից» (104րդ հոդված): Սակայն Երևան քաղաքի դեպքում այս ընդհանուր կանոնը խախտված էր. «Երևան

³⁰ Կարգավիճակի փոփոխություն և իրենց հետո Երևանը դարձավ համայնք, իսկ ևրա և նախկին 12 թաղային համայնքները՝ նույն անվանումով և վարչական սահմաններով՝ դարձան վարչական շրջաններ: Կարգավիճակի և շրջանների կարգավիճակի առանձնահատկություն և ներքին մասին կխոսենք դասագրքի 14րդ Գլխի 3րդ ենթագլխում:

քաղաքն ունի մարզի կարգավիճակ: Տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում է թաղային համայնքներում» (108րդ հոդված): 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո նշված դրույթները հանվեցին, իսկ Սահմանադրության առաջին գլխում ավելացվեց 11.1.րդ հոդվածը. «*Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները*»: Նշված սահմանադրական դրույթի պարզ վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Ազգային ժողովը «*Վարչատարածքային բաժանման մասին*» ՀՀ օրենքով տեսականորեն կարող է փոխել մարզի կառուցվածքը, սահմանել համայնքների այլ տեսակներ ևս (օրինակ՝ քաղաքատիպ ավան): Նշված օրենքով ներկայումս պահպանվում է վարչատարածքային սկզբնական կառուցվածքը՝ մարզեր, որոնք կազմված են քաղաքային և գյուղական համայնքներից: Փոխվել է Երևանի կարգավիճակը՝ համայնք: Այնուամենայնիվ օրենսդիրն այս հարցում լիակատար «ազատություն» չունի, քանի որ անկախ անվանումից և տեսակից, համայնքի բացառիկ սահմանադրական կարգավիճակ կարող են ստանալ միայն այն վարչատարածքային միավորները, որոնք իրենց սահմաններում պարփակում են մեկ կամ մի քանի բնակավայրեր (օրինակ՝ Աշտարակ քաղաքային համայնքի վարչական սահմանները ներառում են ինչպես բուն Աշտարակը, այնպես էլ՝ նախկին Մուղնի գյուղական համայնքի տարածքները»):

Երկրորդ. Համայնքն իրավաբանական անձ է: Քաղաքացիաիրավական հարաբերություններում համայնքին վերապահված է նույն իրավագործությունը, ինչ մյուս բոլոր իրավաբանական անձանց: Մակայն համայնքի ամենավճռական առանձնահատկությունը, որի հիման վրա էլ վերջինս համարում ենք հատուկ սուբյեկտ, այն է, որ համայնքը միաժամանակ հանրային իշխանության սուբյեկտ է: Ճիշտ է, համայնքում իրականացվում է տեղական ինքնակառավարում, ոչ թե՝ պետական իշխանություն, այնուամենայնիվ համայնքի կողմից անմիջականորեն կամ դրա մարմինների միջոցով ընդունված իրավական ակտերը նորմատիվ բնույթ ունեն, այսինքն՝ սահմանում են վարքագծի և գործելակերպի համընդհանուր և համապարտադիր կանոններ, որոնց կատարումը հարկ եղած դեպքում ապահովվում է պետական հարկադրանքի ուժով: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև համայնքի հաջորդ բնորոշ առանձնահատկությունը՝ համայնքի, իբրև հատուկ սուբյեկտի համար սահմանվում են ստեղծման և լուծարման այլ կանոններ, քան նախատեսված է մյուս իրավաբանական անձանց համար: Ավելին, համայնքը չի կարող սնանկ ճանաչվել (դրա նկատմամբ սնանկության վարույթի հարուցում չի նախատեսվում) անկախ նրանից, թե ում նկատմամբ և ինչ ծավալի գույքային պարտավորություններ ունի վերջինս:

Երրորդ. տեղական ինքնակառավարման, որպես ժողովրդին պատկանող իշխանության, իրականացման սահմանադրական իրավունքի միակ «հասցեատերը» համայնքն է և ոչ թե դրա մարմինները, ինչպես հաճախ շփոթում են: Սահմանադրությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը և այս իրավունքը համայնքից բացի որևէ այլ սուբյեկտի չի կարող վերապահվել: Տեղական ինքնակառավարումը կարող է ներառել ինչպես տեղական նշանակության հարցերը, այնպես էլ՝ պետական լիազորությունները, որոնք սահմանված կարգով պատվիրակվել են համայնքին: Համայնքն իբրև իրավունքի սուբյեկտ իր գործունեության արդյունավետության բարձրացման, համայնքային սեփականության

ավելացման, կառավարման, և համայնքի իրավունքների ու պարտականությունների իրականացման նպատակով կարող է ստեղծել սեփական խորհրդանիշներ, կազմել և կենսագրծել համայնքային զարգացման ծրագրեր, ինչպես նաև ինքնուրույն կամ այլ սուբյեկտների հետ համատեղ ստեղծել այլ սուբյեկտներ՝ միավորումներ, զանազան կազմակերպական իրավական ձև ունեցող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ և հիմնարկներ: Ինչ վերաբերվում է տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա դրանք գործում են համայնքի անունից, դրա փոխարեն, իրենց վերապահված իրավասության սահմաններում և հաշվետու ու պատասխանատու են վերջինիս առջև:

Երրորդ խումբը կազմում են այն սուբյեկտները, որոնք տեղական նշանակության հարցերով իրավասու են համայնքի փոխարեն և դրա անունից ընդունել որոշումներ կամ՝ մասնակցել դրանց ընդունմանը: Այս խմբում են համայնքի բնակչությունը, դրանց խմբերը, համայնքի առանձին բնակիչները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, համայնքի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինները:

Համայնքի բնակչության կողմից տեղական ինքնակառավարման իրավունքի անմիջական իրականացման ձևերը, կարգն ու դրանց իրականացման երաշխիքները սահմանվում են ՀՀ ընտրական օրենսգրքով, «Տեղական հանրաքվեի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին ավագանու որոշմամբ: Նշենք, որ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի ընդունումից (2002թ.) մինչ օրս մեր հանրապետությունում տեղական հանրաքվե երբևէ չի անցկացվել: Ըստ էության, մինչև 2013թ. օրենսդրական փոփոխությունները, համայնքի բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանափակվում էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով, ինչը բնավ չէր նպաստում տեղական ժողովրդավարության ձևավորմանն ու զարգացմանը, համայնքի բնակչության և նրա կողմից ընտրված մարմինների փոխադարձ ու հետադարձ կապերին ու փոխներգործությանը:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության մասին, որպես ժողովրդավարական սկզբունք, նշված է Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի ներածությունում և Յրդ հոդվածում, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը: 2009թ. ընդունվել է նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը՝ «Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին» (հավելված III)³¹, որում ամրագրված են տեղական իշխանության գործերին բնակչության մասնակցության իրավունքի բացատրությունը և այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերի օրենքով սահմանման անհրաժեշտությունը: ՀՀ օրենսդրությունը միջազգային պայմանագրերին համապատասխանեցնելու, տեղական ինքնակառավարմանը բնակչության իրական մասնակցությունն ապահովելու նպատակով

³¹ ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2013թ. փետրվարի 26ին:

2013 թվականին մի շարք լրացումներ կատարվեցին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, որոնցով համայնքի բնակչության, դրա առանձին հատվածների՝ տեղական ինքնակառավարմանն անմիջականորեն մասնակցելու գործուն կառուցակարգեր սահմանվեցին: Դրանց վերլուծությանն ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ³²:

Տեղական ինքնակառավարման մարմիններ. ՀՀ Մահմանադրության 107րդ հոդվածի համաձայն «Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահմանված արգով ընտրվում են չորս տարի ժամկետով»:

Այս խմբի մյուս սուբյեկտներին կանդրադառնանք հաջորդիվ:

Չորրորդ խումբը կազմում են մունիցիպալիրավական հարաբերությունների այն սուբյեկտները, որոնք նախորդ խմբի սուբյեկտների հետ համագործակցության միջոցով այս կամ այն ձևով և չափով մասնակցում են տեղական ինքնակառավարման իրականացմանը: Դրանք են՝ միջհամայնքային միավորումները, պետական մարմինները (օրինակ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, մարզպետարանը), հասարակական կազմակերպությունները, համայնքային ենթակայության կամ դրա մասնակցությամբ հիմնարկներն ու կազմակերպությունները (օրինակ՝ Երևանի վարչական շրջանների ղեկավարներն ու դրանց աշխատակազմերը, համայնքի ղեկավարի աշխատակազմհամայնքային կառավարչական հիմնարկները, համայնքի հիմնադրած հիմնարկները, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները (օրինակ՝ Հայաստանի ավագանիների խորհուրդը, «Երևանի կանաչապատում», «Երքադլույս» կամ «Երևանի Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲ ընկերությունները): Մյուս սուբյեկտներին ավելի մանրամասն ակնդրադառնանք հաջորդիվ:

Մունիցիպալիրավական հարաբերությունների մասնակիցներին կարելի է բաժանել նաև **ընդհանուր իրավասության** և **մասնավոր իրավասության** սուբյեկտների, կախված այն հանգամանքից, թե հասարակական հարաբերությունների որ խմբի վրա են տարածվում դրանց իրավասությունը և թե ինչ իրավունքներ ու պարտականություններ են վերապահված դրանց այդ իրավասություններն իրականացնելու համար:

Ընդհանուր իրավասության սուբյեկտներ են համայնքի բնակչությունը, բնակիչները, համայնքի ղեկավարը, դրա աշխատակազմը, համայնքի ավագանին, դրա անդամները, այսինքն՝ այն սուբյեկտները, որոնց իրավասության մեջ են մտնում տեղական նշանակության բոլոր հարցերը կամ դրանց մեծ մասը:

Մասնավոր իրավասության են մնացած բոլոր սուբյեկտները, որոնց ներգործության օբյեկտները տեղական կյանքի առանձին ոլորտներն են կամ դրանց որոշ հարցերը: Դրանց մեջ են մտնում նաև հատուկ իրավասության սուբյեկտների խումբը: Դրանք են՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի վարչություններն ու բաժինները, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք՝ համայնքային ծառայողները, Երևանի վարչական շրջանների ղեկավարները, համայնքային հիմնարկներն

³² Տե ս «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» 02.05.2013թ. թիվ 3030 և 19.06.2013թ. թիվ 3072 ՀՀ օրենքները:

ու կազմակերպությունները, որոնք լուծում են տեղական նշանակության հարցեր կամ առանձին գործառույթներ են իրականացնում տեղական կյանքի բոլոր կամ առանձին ոլորտներում:

Ընդհանուր առմամբ մունիցիպալ իրավական հարաբերության այս կամ այն սուբյեկտի մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը որոշվում է դրանց իրավունակությամբ և գործունակությամբ:

Գլուխ 2. ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՈՇԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

1. Մունիցիպալ իրավունքի գիտության հասկացությունը, առարկան և մեթոդը:

Եթե ՀՀ մունիցիպալ իրավունքի ճյուղի խնդիրը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության ոլորտներում առաջացող հասարակական հարաբերությունների **կարգավորումն է**, ապա համանուն գիտության խնդիրը իրավունքի ճյուղի, դրա նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների (տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման էության, դրանց փոխհարաբերակցության բնույթի, տեղական ինքնակառավարման, իբրև ժողովրդաիշխանության իրացման առանձնահատուկ ձևի), ինչպես նաև այդ նորմերի իրացման պրակտիկայի **ուսումնասիրությունն է**:

Պետական իշխանությունը և տեղական ինքնակառավարումը սերտորեն կապված են միմյանց հետ՝ երկուսն էլ միասնական աղբյուր ունեն՝ ժողովրդի իշխանությունը: Մակայն, ինչպես արդեն նշել ենք՝ դրանք ժողովրդաիշխանության իրացման տարբեր ձևեր են:

Մունիցիպալ իրավունքի գիտությունը տեղական ինքնակառավարումն ուսումնասիրում է ոչ միայն որպես քաղաքացիական ինքնագործունեության և ակտիվության, այլև՝ հանրային իշխանության կազմակերպման, հանրային իշխանական գործունեության ինքնուրույն, պետականից տարբերվող, ձև: Այն բացահայտում է տեղական ինքնակառավարման հիմքում դրված սկզբունքների էությունը: Գիտության կողմից ուսումնասիրվում են նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման խնդիրներն ու գործառույթները, տնօրինման առարկաները, դրանց գործադրման կազմակերպական, իրավական, ֆինանսատնտեսական և տարածքային հիմքերը:

Մունիցիպալ իրավունքի գիտությունը վերլուծում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և դրանց իրացման պրակտիկան: Այն վեր է հանում և հետազոտում հասարակական հարաբերությունների մունիցիպալ իրավական կարգավորման ընդհանուր օրինաչափությունները, ընդհանրացնում մունիցիպալ իրավական նորմերի կիրառման, տեղական մարմինների գործունեության պրակտիկան և գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ներկայացնում օրենսդրության կատարելագործման և տեղական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Պրակտիկան միշտ իր «շտկումներն» է

մտցնում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման գործում, որը մի դեպքում պայմանավորված է իրավական նորմի անկատարությամբ, մյուս դեպքում՝ այն կիրառողի թերացումներով: Առաջին դեպքում մունիցիպալ իրավունքի գիտությունը օգնում է բացահայտել օրենսդրական սխալները, իսկ երկրորդ դեպքում՝ գործուն կառուցակարգեր սահմանել իրավական նորմի կատարումն ապահովելու համար:

Մունիցիպալ իրավունքի գիտությունն ուսումնասիրում է նաև այն պայմաններն ու միջոցները, որոնք ապահովում են համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը տեղական նշանակության հարցերը լուծելիս, ինչպես նաև դրանց պատասխանատվությունը պետության, համայնքի բնակչության և դրա առանձին անդամների առջև:

Տեղական ինքնակառավարումն ընդգրկում է տեղական կյանքի բոլոր ոլորտները, որի շնորհիվ այն կրում է համալիր բնույթ: Մունիցիպալ իրավունքի գիտությունն ուսումնասիրում և բացահայտում է նաև մունիցիպալ իրավական նորմերի հարաբերակցությունը այն իրավունքի ճյուղերի նորմերի հետ, որոնք սերտորեն կապված են մունիցիպալ իրավունքի հետ:

Մունիցիպալ իրավունքի գիտությունն ուսումնասիրում է ոչ միայն տեղերում գործող համակարգը, այլև դրա ձևավորման և զարգացման պատմությունը և միտումները մեր հանրապետությունում և համեմատական վերլուծության ենթարկում այլ երկրների հարուստ փորձի հետ:

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Եվրոպայի խորհրդին, որի հիմնարար փաստաթղթերից մեկը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան է: Այն հավաքական ձևով ներկայացնում է տեղական ինքնակառավարման իրավական կարգավորման արևմտյան փորձը: Հետևաբար տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը մեր երկրում տեղական իշխանության պատշաճ կազմակերպման, այն կարգավորող մունիցիպալ իրավունքի ճյուղի զարգացման կարևորագույն նախապայմաններից է:

Այսպիսով, *մունիցիպալ իրավունքի գիտությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մասին, դրանց իրականացման ձևի, պրակտիկայի և իրավական կարգավորման վերաբերյալ գիտական գիտելիքների, գաղափարների և տեսությունների ամբողջությունն է:*

Մունիցիպալ իրավունքի գիտությունն իր առարկայի ուսումնասիրության համար օգտագործում է պետականագիտությանը հայտնի բոլոր մեթոդները՝ համակարգային վերլուծության, համեմատականիրավական վերլուծության, համեմատականպատմական, վիճակագրական, կոնկրետսոցիոլոգիական, ֆորմալրոգմատիկ, տրամաբանական և այլ մեթոդներ:

Համակարգային վերլուծության մեթոդի շրջանակներում մի կողմից հետազոտման առարկան «բաժանվում է» բաղադրիչների և յուրաքանչյուրն ուսումնասիրվում է առանձինառանձին, մյուս կողմից՝ բոլոր բաժանված բաղադրիչները ուսումնասիրելիս հաշվի են առնվում դրանց օբյեկտիվ կապերն ու փոխազդեցությունները մյուս բաղադրիչների հետ, քանի որ դրանք գտնվում են միասնական համակարգի մեջ: Այսպես, տարածքային

կառավարման ինստիտուտը ուսումնասիրելիս չպետք է անտեսել դրա համակարգային կապերը պետական կառավարման ընդհանուր ապարատի հետ, կամ՝ անմիջական ժողովրդաիշխանության ինստիտուտն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա անխզելի կապը տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ համակարգի հետ, և այլն:

Համեմատական իրավական վերլուծության մեթոդը հնարավորություն է տալիս հետազոտողին հայրենական կամ այլ պետության նախկինում ունեցած կամ գործող համանման երևույթի կամ ինստիտուտի համեմատության միջոցով առավել ամբողջական պատկերացում ստանալ ուսումնասիրվող օբյեկտի մասին, վեր հանել դրա առավելություններն ու թերությունները, ճիշտ ընկալել դրա զարգացման հեռանկարները: Ճիշտ է, ինչպես արդարացիորեն նշվում է ֆրանսիական ասացվածքում՝ «համեմատությունը դեռևս պատճառ (ապացույց) չէ» (comparaison n'est pas raison), սակայն հայտնի է նաև մեկ այլ ասացվածք՝ «ամեն ինչ ճանաչվում է համեմատության միջոցով»: Այսպիսի համադրությունը և հետազոտությունը կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ՝ գործնական առումներով, քանի որ այն օգտակար նյութ է տրամադրում փորձի ընդօրինակման, իրավական նորմերի կատարելագործման համար:

Համեմատական պատմական մեթոդի միջոցով կարևորագույն մունիցիպալ իրավական ինստիտուտները վերլուծելիս և դրանց գնահատականներ տալիս հետազոտողը կիրառում է պատմական մոտեցում: Ընդ որում այս մեթոդը հատկապես արդյունավետ է այլ պետությունների տեղական իշխանության կազմակերպման պատմական փորձի հետազոտության ժամանակ, քանի որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման գործող համակարգը խորը պատմական անցյալներ չունի: Որոշ չափով արդիական է սովետական համակարգը տեղական կյանքի պլանավորման փորձի ուսումնասիրության տեսակետից:

Վիճակագրական մեթոդի օգնությամբ հետազոտվում են հասարակական կյանքի այս կամ այն ոլորտի վերաբերյալ հավաքված և համակարգված տեղեկությունները, այդ թվում՝ իրավակարգավորիչ նորմերով նախանշված ճանապարհի և իրավակիրառ պրակտիկայի վիճակագրական տվյալների համեմատության միջոցով վեր են հանվում սխալները, թերություններն ու բացթողումները և գիտականորեն հիմնավորված առաջարկություններ են մշակվում դրանց վերացման վերաբերյալ:

Կոնկրետ սոցիոլոգիական հետազոտության մեթոդը ներառում է այնպիսի հնարքներ, ինչպիսիք են՝ անհատական դիտարկումը, բանավոր հարցումները, անկետավորումը, հարցազրույցը, փաստացի նյութի վիճակագրական մշակումը և այլն:

Տորմալոգոգմատիկ մեթոդի օգնությամբ հետազոտության օբյեկտը՝ իրավաբանական նյութը ենթարկվում է արտաքին իրավաբանական մշակման՝ նկարագրվում և վերլուծության են ենթարկվում մունիցիպալ իրավական նորմերն ու հարաբերությունները, պարզաբանվում, մեկնաբանվում, դասակարգվում ու համակարգվում են դրանք: Այս մեթոդի հնարքները թույլ են տալիս մունիցիպալ իրավական գիտելիքները բաշխել երկու կուռ տրամաբանական համակարգերի միջև՝ ինստիտուցիոնալ և ճյուղային:

Հետազոտման տրամաբանական մեթոդները տարաբնույթ տրամաբանական հնարքներն են՝ վերլուծություն և սինթեզ (նախկինում բաժանված հասկացությունների մեկ ամբողջականի մեջ միավորման գործընթացը), ինդուկցիա (մասնավորից ընդհանուր, երբ մասնավոր փաստերի ուսումնասիրությունից արտածվում է ընդհանուր եզրահանգում) և դեդուկցիա (մտածողության մեթոդ է, որ ժամանակ մասնավոր փաստի, երևույթի մասին դատողությունները տրամաբանորեն արտածվում են ընդհանուր եզրահանգումից), անալոգիայի մեթոդը, հիփոթեզները և այլն:

2. Մունիցիպալ իրավունքի գիտության համակարգը:

Մունիցիպալ իրավունքի գիտության համակարգը դրա բովանդակությունը կազմող տեսական կանխադրությունների և գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված դասավորությունն է՝ որոշակի հաջորդականությամբ:

Մունիցիպալ իրավունքի և համանուն գիտության հիմնական ինստիտուտներն ընդհանուր առմամբ համընկնում են: Սակայն մունիցիպալ իրավունքի գիտության համակարգը, բնականաբար, ավելի ընդարձակ է: Այն գիտական գիտելիքների ամբողջություն է ոչ միայն գործող մունիցիպալ իրավունքի ճյուղի, այլև առավել ընդհանուր մունիցիպալ իրավական կատեգորիաների և հասկացությունների վերաբերյալ:

Այսպես, մունիցիպալ իրավունքի գիտության համակարգը ներառում է մունիցիպալ իրավունքի ճյուղի առարկայի և մեթոդի, մունիցիպալ իրավական նորմերի և հարաբերությունների, դրանց սուբյեկտների, սկզբունքների, ինչպես նաև մունիցիպալ իրավունքի հետ կապված ընդհանուր գիտական և պատմական գիտելիքներ:

Մունիցիպալ իրավունքի գիտությունը ոչ միայն ուսումնասիրում և բացատրում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կազմակերպման և իրացման օբյեկտիվ գործընթացները, պարզաբանում դրանց էությունն ու բովանդակությունը, այլև այդ ոլորտում բացում է նոր օրինաչափություններ, կառուցում է գիտական վարկածներ: Մունիցիպալ իրավունքի գիտությունն իր առարկան ուսումնասիրելիս իրականացնում է ճանաչողական և էվրիստիկ³³ գործառույթներ՝ հենվելով ինչպես սեփական արդյունքների, այնպես էլ՝ մյուս իրավաբանական գիտությունների տվյալների վրա:

Այսպիսով ընդհանրացնելով կարելի է ասել, որ մունիցիպալ իրավունքի գիտության համակարգը հիմնականում կրկնում է իրավունքի համանուն ճյուղի համակարգն ամբողջությամբ, սակայն ավելի ծավալուն է դրանից, քանի որ ներառում է նաև ընդհանուր պատմական և գիտական գիտելիքներ:

3. Մունիցիպալ իրավունքի գիտության աղբյուրները:

³³ Ծանոթություն՝ էվրիստիկագիտելիքի ոլորտ, որն ուսումնասիրում է մարդու մտածողության չգիտակցված, ստեղծագործական մտածողությունը:

Մունիցիպալ իրավունքի գիտության աղբյուրները այն առավել ամբողջական, արժանահավատ և օբյեկտիվ տեղեկություններ կրող գործոններն են, որոնք կազմում են մունիցիպալ իրավունքի գիտական ճանաչողության ելակետային հիմքերը: Դրանք պայմանականորեն կարող ենք բաժանել չորս խմբի՝ իրավական ակտեր, տեսական աղբյուրներ, իրավակիրառ պրակտիկան և արտասահմանյան փորձը:

Իրավական աղբյուրները նույնական են իրավունքի ճյուղի աղբյուրների հետ: Մունիցիպալ իրավունքի տեսական հիմքերի ձևավորման գործում առանձնահատուկ դեր ունի ՀՀ Սահմանադրությունը, որը բացահայտում է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման էությունը, դրանց տեղը հանրային իշխանության իրացման համակարգում: Վարչատարածքային կառուցվածքի, տարածքային կառավարման ինստիտուցիոնալ համակարգի և հիմնական գործառույթների, համայնքի, տեղական ինքնակառավարման հասկացությունների, հիմնական սկզբունքների, իրավասության շրջանակների և այլ հիմնարար հարցերի վերաբերյալ սահմանադրական դրույթներն արտացոլվում և մանրամասնվում են ՀՀ օրենքներում և այլ իրավական ակտերում, որոնք նույնպես մունիցիպալ իրավունքի գիտության կարևոր աղբյուրներ են:

Տեսական աղբյուրներ. մունիցիպալ իրավունքի գիտության տեսական հիմքն են կազմում այն բոլոր գիտական տեսական աշխատությունները (դասագրքեր, մենագրություններ, գիտական հոդվածներ, զեկույցներ և այլն), որոնցում մշակվում և հետազոտվում են մունիցիպալ իրավունքի հիմնախնդիրները, դրա զարգացման պատմությունը: Վերապահումով պետք է մոտենալ խորհրդային հեղինակների աշխատություններին, քանի որ խորհրդային պետական շինարարության հիմքում դրված մարքսլենինյան գաղափարախոսությունը տասնամյակներով քննադատում էր տեղական ինքնակառավարումը իբրև բուրժուական հասարակության արգասիք: Ճիշտ է բոլշևիկյան կուսակցության և 1917թ.ին դրա կազմակերպած հեղափոխության հիմնական կարգախոսներից մեկն էր «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին», սակայն ինքնին դրական այս գաղափարն աղավաղվեց Լենինի «դեմոկրատական ցենտրալիզմի» տեսությամբ: Խորհրդային միության և դրա միութենական հանրապետությունների վարչատարածային բաժանման բոլոր օղակներում իշխանությունը ձևականորեն «հանձնվել էր» խորհուրդներին՝ ընտրովի ներկայացուցչական մարմիններին: Սակայն դրանք մի կողմից «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքի համաձայն վերադասականենթակայական հարաբերությունների մեջ էին գտնվում, մյուս կողմից իշխանությունը փաստացի գտնվում էր կոմունիստական կուսակցության և դրա կամակատար գործադիր կոմիտեների և այլ պետական մարմինների ձեռքում: Բնականաբար խորհուրդների կողմից իրականացվում էր պետական իշխանություն, այլ ոչ թե տեղական ինքնակառավարում: Տեղական կառավարմանը վերաբերվող խորհրդային ժամանակաշրջանի աշխատություններն, այնուամենայնիվ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում խորհրդային իշխանության տեղական ներկայացուցչական և գործադիր մարմինների գործունեության փորձի, ինչպես նաև այդ համակարգի արդի քննադատության օբյեկտիվ հիմնավորման տեսակետից:

Տեղական իշխանության կազմակերպման և գործունեության պրակտիկա.

Մունիցիպալ իրավունքի հիմնախնդիրների մշակումն ու հետազոտությունը իրականացվում են տեղական իշխանությունների պրակտիկ գործունեության վերլուծության միջոցով:

Մունիցիպալ իրավունքի գիտության վերջին աղբյուրը կարելի է անվանել ***նախորդ երեք աղբյուրների վերաբերյալ արտասահմանյան երկրների փորձը***: Տեղերում իշխանության կազմակերպման ու գործադրման հայրենական համակարգը դեռևս նորույթ է, չունի պատմական ավանդույթներ և գտնվում է ակտիվ վերափոխման ու կատարելագործման գործընթացում: Ուստի այլ երկրների հարուստ փորձի ուսումնասիրությունը բացառիկ հնարավորություն է տալիս խուսափել նրանց թույլ տրված սխալներից, ընտրել, մշակել և զարգացնել տեղական իշխանության մեր երկրի համար առավել արդյունավետ ու նպատակահարմար համակարգ:

4. Մունիցիպալ իրավունքի գիտության տեղն այլ իրավաբանական գիտությունների համակարգում:

Մունիցիպալ իրավունքի գիտությունը հայրենական իրավաբանական գիտության բաղկացուցիչ մասն է: ***Մունիցիպալ իրավունքի գիտության տեղն իրավաբանական գիտությունների համակարգում պայմանավորված է այն առանձնահատկություններով, որոնցով բնութագրվում է մունիցիպալ իրավունքն իբրև իրավունքի համալիր ճյուղ***: Այլ կերպ ասած՝ մունիցիպալ իրավունքի գիտության տեղն ուղիղ համեմատական կարգով պայմանավորված է այն տեղով, որ զբաղեցնում է իրավունքի համանուն ճյուղը ՀՀ ներպետական իրավունքի համակարգում:

6. Մունիցիպալ իրավունքը որպես ուսումնական դասընթաց:

«ՀՀ մունիցիպալ իրավունք» բառակապակցությունն օգտագործվում է նաև համապատասխան ուսումնական դասընթացն անվանելու համար: ՀՀ մունիցիպալ իրավունքի ուսումնական դասընթացն այն դասախոսությունների ամբողջությունն է, որը դասավանդվում է մեր հանրապետության իրավաբանական բուհերում և բուհերի իրավագիտության բաժիններում որպես ուսումնական ծրագրի բաղկացուցիչ մաս: Դասախոսությունները համակարգված գիտելիքներ են տալիս ուսանողներին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի հասարակական հարաբերությունների, դրանք կարգավորող իրավական նորմերի, իրավակիրառ պրակտիկայի մասին, ինչպես նաև ընդհանուր տեսական գիտելիքներ՝ հիմնական նյութի յուրացումը դյուրին դարձնելու նպատակով: Ըստ էության դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում է մունիցիպալ իրավունքի ճյուղը՝ հիմնվելով դրա վերաբերյալ մունիցիպալ իրավունքի գիտության կողմից մշակված կանխադրույթների, տեսական գիտելիքների վրա:

Այսպիսով, մունիցիպալ իրավունքի ուսումնական դասընթացը բաղկացած է ընդհանուր և հատուկ մասերից:

Ընդհանուր մասի շրջանակներում ուսումնասիրվում են ՀՀ մունիցիպալ իրավունքի ճյուղի և համանուն գիտության հասկացությունը, առարկան և մեթոդները, համակարգն ու աղբյուրները, մունիցիպալ իրավունքի նորմերի, հարաբերությունների և դրանց սուբյեկտների տեսակները և դասակարգումը, տեղերում իշխանության կազմակերպման պատմատեսական հիմունքները:

Հատուկ մասն իր հերթին բաղկացած է երկու մասերից՝ տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում:

«Տարածքային կառավարում» ենթամասի թեմաներով ներկայացված են տարածքային կառավարման հասկացությունը, սկզբունքները, խնդիրներն ու գործառույթները, համակարգը, դրա ինստիտուտների ձևավորման և գործունեության կարգը, լիազորություններն ու փոխհարաբերությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

«Տեղական ինքնակառավարում» ենթամասի թեմաներով ներկայացված են տեղական ինքնակառավարման հասկացությունը, համակարգը, հիմնական սկզբունքները, խնդիրներն ու գործառույթները, տեղական ինքնակառավարման հիմունքներն ու երաշխիքները, Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և դրա մարմինների ձևավորման առանձնահատկությունները, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանց նկատմամբ հսկողությունը և պատասխանատվությունը:

Գլուխ 3. «ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման հիմնական տեսությունները:

Ժողովրդավարական պետություններում տեղական գործերի կառավարումը կարող է իրականացվել ինչպես կենտրոնից նշանակված պետական մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով, որոնք հանդես են գալիս իբրև պետական ապարատի հեռավոր օղակ, այնպես էլ՝ վարչատարածքային միավորներում անմիջականորեն բնակչության կողմից ընտրվող ներկայացուցչական և գործադիր մարմինների միջոցով կամ էլ՝ դրանց զուգակցմամբ, ինչպես օրինակ՝ Հայաստանի հանրապետությունում:

Ժամանակակից տեսքով տեղական իշխանության կազմակերպման համակարգը ԱՄՆ-ում և Եվրոպայում հիմնականում ձևավորվել է 1819-րդ դարերում, մասամբ էլ՝ 20-րդ դարում: Պատմականորեն այն ձևավորվել է իշխանությունը բուրժուազիային անցնելու հետևանքով: Դասակարգային հասարակությունից ինդուստրիալ հասարակության անցման գործընթացում օրակարգի խնդիր էր դարձել ոչ միայն կենտրոնական պետական, այլև՝ տեղերում իշխանության ինստիտուցիոնալ նոր համակարգի ձևավորումը: Նոր ձևավորվող բուրժուազիայի սոցիալական հիմքը մեծ ու փոքր քաղաքներն էին, որոնք գործող իշխանություններից պահանջում էին ավելի ընդարձակ ինքնուրույնություն՝ տեղական

գործերի կառավարման հարցում, ինչպես նաև համայնքային գործերի ինքնակառավարման ազատություն կենտրոնական պետական իշխանության հսկողությունից և միջամտությունից: Ֆեոդալական հասարակարգի տապալման արդյունքում դադարեցվեց քաղաքների, գյուղերի և այլ բնակավայրերի, ինչպես նաև դրանք ընդգրկող կավաձքների և այլ վարչատարածքային միավորների նկատմամբ միապետի, մյուս ֆեոդալների և եկեղեցու սեփականության իրավունքը: Տեղերում առաջացած իշխանական վակուումը լրացնելու խնդիր առաջացավ, որը լուսավորության դարաշրջանի իմաստասերները, քաղաքական ու պետական գործիչները փորձեցին լրացնել հին աշխարհի (Հին Հռոմի և հունական պոլիսների) պատմությունից իրենց հայտնի քաղաքային ինքնակառավարման համակարգերն ընդօրինակելու և ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու միջոցով³⁴: Բայց տեղական ինքնակառավարման համակարգի պարզ մեխանիկական ընդօրինակումը անընդունելի էր: Անհրաժեշտ էր նաև փնտրել, գտնել և հստակ ձևակերպել տեղական ինքնակառավարման տեսական հիմքերը: Ամերիկյան և Ֆրանսիական Մեծ հեղափոխությունների արդյունքում լայն թափ առած սահմանադրական շարժումը հանգեցրեց ոչ միայն կենտրոնական իշխանության կազմակերպման նոր ձևերի առաջացմանը, այլև անխուսափելիորեն բարձրացվեց կենտրոնի ուժեղ բյուրոկրատական հովանավորչությունից և խնամակալությունից ազատ տեղական կառավարման համակարգի ստեղծման խնդիրը: Լայն տարածում գտան ոչ մեծ համայնքների ինքնակառավարման մասին Թ.Ջեֆերսոնի հայացքները որպես պետականության իդեալական ձև: Դրանց հիման վրա առաջ եկավ իշխանության այսպես կոչված՝ «շերտավոր կարկանդակի» հայեցակարգը, որի համաձայն մունիցիպալիտետները ճանաչվում էին իբրև օրենքով և դատարաններով վերահսկվող, սակայն կենտրոնում և տեղերում կառավարությանը և նրա մարմիններին ոչ ենթակա՝ չորրորդ իշխանություն: Այս գաղափարների ու հայացքների ազդեցության ներքո դեռևս 1831թ. Բելգիայի Սահմանադրությամբ ամրագրվեց տեղական կառավարմանը նվիրված հոդված, և որ առավել ուշագրավ է՝ դրանով արդեն ավանդական դարձած եռանդամ օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից բացի ճանաչվում էր նաև չորրորդ՝ մունիցիպալ իշխանությունը: Բելգիայի Սահմանադրության մեջ ամրագրված գաղափարների հիմնադիր համարվող հասարակականքաղաքական գործիչ Ժ.Գ.Տուրեն Ֆրանսիայի Ազգային Կոնվենտում 1790թ.ին տեղական կառավարման բարեփոխումները սահմանող օրինագծի քննարկման ժամանակ ձևակերպեց տեղական ինքնակառավարման ուսմունքի երեք հիմնախնդիրները, որոնք հետագայում իրենց զարգացումը ստացան տեղական ինքնակառավարման տարբեր տեսություններում: Դրանք են՝

³⁴ Ծանոթություն. Այդ ժամանակաշրջանի բոլոր գրագետ մարդիկ իրենց կրթությունը ստանում էին եկեղեցական դպրոցներում և համալսարաններում և Աստվածաշնչին և այլ աստվածաբանական աշխատություններին «սկզբնաղբյուրից» ծանոթանալու համար սովորում էին նաև հին հունարեն և լատիներեն լեզուները: Այդ լեզուների իմացությունը նրանց թույլ տվեց նաև հաղորդակցվելու հին հունական և հռոմեական փիլիսոփաների աշխատություններին և դրանցից տեղեկանալու հունական պոլիսների և հռոմեական կայսրության պետական կառուցվածքին, այդ թվում՝ տեղերում իշխանության կազմակերպման ու գործադրման համակարգին:

- Համայնքային գործերի կառավարումն իր էությունը տարբերվում է պետական կառավարումից,

- Համայնքային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք համայնքի, այլ ոչ թե պետության, մարմիններն են,

- Համայնքները պետությունից առանձին իրավաբանական անձինք են, և նրանց գործերին պետության ցանկացած անօրինական միջամտությունը համայնքի իրավունքների խախտում է:

Տեղական ինքնակառավարման անկախության գաղափարը վաղ բուրժուական ժողովրդավարության խոշոր տեսական ձեռքբերումն էր:

19րդ դարի առաջին կեսերին մշակվում են տեղական ինքնակառավարման ուսմունքի առաջին տեսական հիմքերը: Ալեքսիս դե Թոքվիլն առաջիններից էր, որ 19րդ դարում ուշադրություն դարձրեց դրա հիմնախնդիրների վրա: Իր «Ժողովրդավարությունն Ամերիկայում» հանրահայտ աշխատության մեջ նա գրում էր. «Համայնքային ինստիտուտները... ժողովրդի առջև ճանապարհ են բացում դեպի ազատություն և սովորեցնում են նրան օգտվել այդ ազատությունից, հաճույք ստանալ դրա խաղաղ բնույթից: Ազգը կարող է ազատ կառավարություն ստեղծել առանց համայնքային ինստիտուտների, սակայն ազատության իրական ոգի նա այդպես էլ չի ձեռքբերի: Անցողիկ կրքերը, այսրոպեական շահերը, պատահական պարտավորությունները կարող են ընդամենը անկախության տեսանելիություն ստեղծել, սակայն հասարակական օրգանիզմի մեջ թաքնված դեպոսիտները նորից ջրի երես դուրս կգա»³⁵:

Ալեքսիս դե Թոքվիլի հայեցակարգի կենտրոնական գաղափարներից մեկը այն միտքն է, որ իշխանության սկզբնական աղբյուրը ոչ թե պետությունն է կամ նույնիսկ՝ ժողովուրդը, այլ կամավորապես միավորված անհատները, որոնք ինքնուրույն են կառավարում իրենց գործերը: Նրա կարծիքով հենց այդ պայմաններում է մարդկանց մոտ ձևավորվում իրական քաղաքացիական ինքնագիտակցություն, պատասխանատվության զգացում, մերձավորների շահերի հետ սեփական շահերը համադրելու և դրանք ներդաշնակեցնելու ընդունակությունը: «Ժողովրդավարական հանրապետության բովանդակությունը հիմնված է երեք սկզբունքների վրա՝ Դաշնային Սահմանադրություն, մունիցիպալ ինստիտուտներ և դատական իշխանություն»³⁶» Ալ.դե Թոքվիլի իդեալը այն հասարակությունն է, որը գործում է իբրև բազմաթիվ ազատ և ինքնակառավարվող միավորումներ և համայնքներ: Պետական ավտոկրատիայի իրական այլընտրանքը նա տեսնում էր ապակենտրոնացման և ինքնակառավարման սկզբունքների վրա հիմնված կառավարման համակարգերի մեջ: Վերլուծելով և բարձր գնահատելով ամերիկյան ժողովրդավարությունը՝ Ալ.դե Թոքվիլը պնդում էր, որ ինքնակառավարման պահանջունքների հետ համատեղելի իրավունքի համակարգը նախնաորոշ պետք է հիմնվի առավելապես բազմազանության, այլ ոչ թե՝ միատեսակության և սպառիչ կարգավորման վրա: Պատահական չէ, որ ԱՄՆ զինանշանի վրա լատիներեն գրված է. «In pluribus unum»՝ «բազմազանության մեջ է միաբանությունը»:

³⁵ Steu` Alexis de Tocqueville, Translated by Henry Reeve, Chapter V, part V, էջ 269270:

Токвиль А. Демократия в Америке. М., 1992. էջ 65:

³⁶³⁶ Steu` Նույն տեղում 17րդ Գլուխ, 17րդ Մաս, էջ 1293:

19րդ դարի առաջին կեսերին մեծ տարածում և ազդեցություն ստացավ *ազատ համայնքի տեսությունը*։ Այդ ժամանակաշրջանում համայնքային գործերը, գույքը տնօրինում էին վերևից նշանակված պետական պաշտոնյաները։ Այդ համակարգը համայնքային տնտեսությունը բերեց անկման։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր գիտականորեն հիմնավորել համայնքային տնտեսությունը բյուրոկրատական կենտրոնից անկախ կառավարելու համակարգի արդյունավետությունը։ Ազատ համայնքի տեսության հիմնական նպատակը հենց այս խնդրի լուծումն էր, որը հիմնադրվեց գերմանական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից՝ ընդօրինակելով ֆրանսիական և բելգիական իրավունքից։ Այս տեսության կողմնակիցներն ապացուցում էին, որ համայնքի՝ սեփական գործերի կառավարման իրավունքը նույնքան բնական և անօտարելի է, որքան մարդու բնական իրավունքներն ու ազատությունները։ Պետությունն ընդամենը պետք է ճանաչի և հարգի համայնքի տեղական ինքնակառավարման իրավունքը, քանի որ դրանք պետությունից շատ ավելի վաղ են ձևավորվել։ Հետևաբար այդ իրավունքը համայնքները ձեռք են բերել պատմականորեն, այլ ոչ թե՝ պետության շնորհման ակտի ուժով։

Համայնքի ինքնակառավարման իրավունքն արտափորձային (ապրիորի) եղանակով արտածվում էր համայնքի էությունից որպես այդպիսին։ Համայնքի ազատության և անկախության հիմնավորման համար այս տեսության կողմնակիցները բերում էին հին աշխարհի և միջնադարի ազատ քաղաքների պատմական օրինակները, դրանց պայքարը ֆեոդալիզմի դեմ։

Տեսության կողմնակիցները այս ելակետային դրույթներից արտածում էին տեղական ինքնակառավարման հետևյալ հիմնական հասկանիշները.

տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովիությունը համայնքի բնակչության կողմից,

համայնքի տնօրինած գործերի տարանջատումը սեփական գործերի և պետության կողմից պատվիրակված գործերի,

տեղական ինքնակառավարումն ընդգրկում է միայն սեփական գործերի կառավարումը, որոնք հիմնովին տարբերվում են պետության գործերից,

տեղական ինքնակառավարման մարմինները համայնքների և ոչ թե՝ պետական ապարատի, մարմիններն են,

պետական մարմիններն իրավունք չունեն միջամտել պետության իրավասություններին։ Նրանք կարող են միայն հետևել, որպեսզի համայնքը դուրս չգա իր իրավասության սահմաններից։

Ազատ համայնքի տեսությունը որոշակի ազդեցություն թողեց 19րդ դարի առաջին կեսի օրենսդրության վրա՝ արտացոլվելով Բելգիայի 1831թ. Սահմանադրության դրույթների մեջ որպես առանձնահատուկ «համայնքային» իշխանության ճյուղ, ինչպես նաև 1849թ. Ֆրանկֆուրտի Ազգային ժողովի կողմից մշակված Սահմանադրության մեջ, որը հողվածներ էր բովանաղակում համայնքների հատուկ հիմնական իրավունքների մասին։ Սակայն վերջինս այդպես էլ իրավաբանական ուժ չստացավ՝ մնալով սոսկ պատմական փաստաթուղթ։

Ազատ համայնքի տեսությանը բնորոշ համայնքների անօտարելիության և անձեռնմխելիության գաղափարը, սակայն, բավական խոցելի էր, քանի որ գյուղական և քաղաքային համայնքները չեն կարող համարվել տեղական ինքնակառավարման միակ հնարավոր տեսակը: Անհրաժեշտ է, որպեսզի տեսության հիմնադրությունները կիրառելի լինեն նաև պետության կողմից դրա մարմինների կամարտահայտության արդյունքում ստեղծված ավելի խոշոր վարչատարածքային միավորների, օրինակ՝ խոշոր ինքնակառավարվող վարչատարածքային միավորների (տարածաշրջաններ, շրջաններ և այլն) համար: Այդ համայնքները ստեղծվել են ոչ թե բնական էվոլյուցիոն զարգացման, այլ պետության համապատասխան իրավական ակտի ուժով: Հետևաբար դրանց ինքնակառավարման իրավունքի բնական էությունը նույնքան անխոցելի չէ, որքան պետականությունից առաջ ձևավորված համայնքների դեպքում: Այս տեսանկյունից ազատ համայնքի տեսությունը լիարժեք չի կարողանում հիմնավորել տեղական ինքնակառավարման օբյեկտիվ անհրաժեշտությունն իբրև բացարձակ ճշմարտություն:

Ազատ համայնքի տեսությունից հետո, երբ պարզ դարձավ, որ այն չի կարող լիարժեք համարվել ինքնակառավարման հիմնական հատկանիշ, անհրաժեշտություն առաջացավ փոխարինել այն մեկ ուրիշով:

Պատմականորեն ձևավորված հաջորդ տեսությունը կոչվում է **տնտեսական տեսություն**, որը փորձեց ինքնակառավարման իրավունքը հիմնավորել տնտեսական տեսանկյունից, այն է՝ դրա հեղինակներն ու կողմնակիցները տեղական ինքնակառավարումը ներկայացնում էին իբրև համայնքի սեփական և ոչ՝ պետական տնտեսության գործեր: Սակայն համայնքի տնտեսական տեսությունը դեռևս սաղմնային փուլում հիմնավոր և սուր քննադատության ենթարկվեց դրա հակառակորդների կողմից իր հակազիտական էության պատճառով: Իրական կյանքն ապացուցում էր, որ տնտեսական գործունեությունը չի եղել և չի էլ կարող հանդիսանալ տեղական ինքնակառավարման հիմնական բնորոշ գիծը, քանի որ գործունեության այդ տեսակը տեղական ինքնակառավարման ոչ թե հիմնական, այլն օժանդակ, ձևն է, ոչ թե նպատակ է, այլ՝ միջոց, որը գալիս է լրացնելու մյուս՝ հիմնական ձևերին (հասարակական կարգի պահպանությունը, սոցիալական, կոմունալկենցաղային ու սանիտարահիգիենիկ խնդիրները և այլն):

19րդ դարում տնտեսական տեսությանը զուգահեռ հասարակագիտության մեջ զգալի ազդեցություն ուներ նաև տեղական ինքնակառավարման **հասարակական տեսությունը**: Դրա կողմնակիցները ինքնակառավարման էությունը տեսնում էին նրանում, որ դրա իրավասության մեջ էին մտնում տեղական հանրությանկողմից այն խնդիրների լուծումը, որը վերջիններս դնում էին իրենց առջև:

Հասարակական տեսության առավել հետևողական ներկայացուցիչները ինքնակառավարվող միավորները նույնացնում էին մասնավոր իրավունքի սուբյեկտների՝ ձեռնարկությունների և բարեգործական հասարակական միությունների հետ: Իհարկե, այդ կազմակերպությունների գործունեությունը տարբերվում է պետության ադմինիստրատիվ գործունեությունից: Սակայն դրանց և ինքնակառավարվող միավորների միջև առկա են արմատական տարբերություններ: Նախ. Մասնավոր միությունների գոյությունը կրում է

ածանցյալ (ֆակուլտատիվ) բնույթ: Օրինակ, պետությունը բաժնետիրական ընկերություններից և գիտական միություններից չի պահանջում, որպեսզի դրանք «ստիպողաբար» ձևավորվեն և իրականացնեն այս կամ այն գործունեությունը: Մինչդեռ նույն պետությունը տեղական ինքնակառավարման մարմինների առջև դնում է մի շարք խնդիրներ, որոնց լուծումը պարտադիր բնույթ է կրում (պարտադիր լիազորություններ):

Բացի այդ, այս կամ այն գիտական, բարեգործական, հասարակական կամ առևտրային կազմակերպությանը մարդու անդամակցությունը կրում է բացառապես կամավոր և քանակական առումով՝ անսահմանափակ բնույթ: Մինչդեռ համայնքին պատկանելիությունը եզակի բնույթ ունի և դրա մարմիններին ենթարկվելու պարտականությունը սահմանվում է օրենքով:

Հասարակական տեսության կողմնակիցները պետական կառավարումից տարբերվող և տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա գործերի սպառիչ ցանկը կազմելու սպարոյուն ջանքեր էին գործադրում: Սակայն ինքնակառավարվող միավորների գործունեության պետական բնույթը համոզիչ կերպով հիմնավորվեց գերմանացի ականավոր գիտնականներ Լորենց Շտայնի և Ռուդոլֆ Գնեյստի կողմից:

Այսպես, Ռ.Գնեյստը Անգլիայում տեղական գործերի կառավարման բազմաթիվ օրինակների հիման վրա ապացուցեց, որ հասարակական կարգի պահպանությունը, պետական և տեղական հարկերի դասավորությունը, կապի և հաղորդակցության միջոցների կառավարումը, աղքատների կարեկցությունը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվում են պետության հանձնարարությամբ: Պետությունն այդ պարտականությունները դնում է համայնքների վրա նպատակահարմարության նկատառումներով, այսինքն՝ գտնում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի արդյունավետ կլուծեն տեղերում, քան՝ պետությունը: Այն բոլոր տարածքներում, ուր գոյություն չունեն տեղական ինքնակառավարման մարմիններ, ընդհանուր իրավասության գործերը տնօրինում են պետական մարմինները:

Այսպիսով հասարակական տեսությունը մի կողմից ճիշտ եզրահանգում էր կատարում այն մասին, որ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է առանձնացվեն ընդհանուր պետական վարչակազմի համակարգից, իսկ մյուս կողմից էլ՝ անհիմն առանձնացնում էր դրանք պետական իշխանությունից: Այս տեսությունն ուներ մեծաթիվ կողմնակիցներ, որոնք ձգտում էին համայնքի ինքնակառավարման ոչ պետական բնույթի հիմնավորման ճանապարհով դրա նկատմամբ պետական վարչակազմի վերահսկողության կապանքներից ազատվելու հիմքեր ստեղծել:

Պատմականորեն ձևավորված հաջորդ տեսությունը կոչվում է **տեղական ինքնակառավարման պետական տեսություն**: Այս տեսությունը նույնպես մեծ ազդեցություն ուներ 19րդ դարում, որի հիմնական դրոյթները մշակվել են գերմանացի ականավոր գիտնականներ Լորենց Շտայնի և Ռուդոլֆ Գնեյստի կողմից: Այս տեսության համաձայն ինքնակառավարումը տեղական պետական կառավարման ձևերից մեկն է: Մունիցիպալ մարմինների լիազորությունների սկզբնաղբյուրը պետական իշխանությունն է:

Բայց այդ դեպքում հարց է առաջանում՝ ինչպես կարելի է համատեղել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական կառավարման իրականացումը դրանց ինքնուրույնության հետ: Պետական տեսության կողմնակիցները այս հարցի տեսական լուծումը պատկերացնում էին երկու տարբեր հարթություններում: Գիտնականների մի խումբը տեղական ինքնակառավարման ինքնուրույնության չափանիշները տեսնում էին մունիցիպալ պաշտոնները զբաղեցնելու կառուցակարգերի առանձնահատկությունների մեջ, մյուսները նրանում, որ տեղական ինքնակառավարման մարմինները ոչ թե պետական կառավարման, այլ՝ տեղական բնակչության ներկայացուցիչներն են, որոնց պետությունը պարզապես պատվիրակում է իր լիազորությունների մի մասի իրականացումը:

Տեսության կողմնակիցները ինքնակառավարման մարմիններում պաշտոնները զբաղեցնելու կառուցակարգի բնութագրիչ առանձնահատկություններ էին համարում դրանց ընտրովիությունը, ինչպես նաև Անգլիայի օրինակով՝ աշխատանքի անհատույց և պատվավոր բնույթը:

Ինքնակառավարման նույնականացումը ընտրովի պաշտոնների հետ լայն տարածում էր գտել գիտական գրականության մեջ և մեծ հեղինակություն էր վայելում բնակչության շրջանում: Սակայն դժվար չէ հիմնավորել այն իրողությունը, որ արդյունավետ ինքնակառավարման գոյության համար միայն պաշտոնների ընտրովիությունը բավարար գործիք չէ: Կառավարչական գործառույթներ իրականացնող անձը տեղական պահանջուններին կարող է լիարժեք արձագանքել միայն այն դեպքում, երբ իր վրա դրված խնդիրների լուծման հարցում օգտվում է միջոցների ընտրության ինքնուրույնությունից: Մինչդեռ եթե նա հանդես է գալիս ուրիշների հանձնարարականների պասսիվ կատարողի դերում, ապա վերջինս ի վիճակի չի լինի օբյեկտիվորեն ներկայացնելու տեղական հանրության շահերը՝ անկախ իր պաշտոնի զբաղեցման ընտրովիության հանգամանքից: Այս հանգամանքը Ռուդոլֆ Գնեյստին դրդեց տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը հիմնավորող այլ նախադրյալների որոնումներին: Նա տեսակետ է առաջադրում այն մասին, որ պաշտոնյայի կախյալ կարգավիճակը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ծառայությունը վերջինիս համար հանդիսանում է գոյատևման աղբյուրը, քանի որ պաշտոնատար անձը իր վրա դրված պարտականություններին վերաբերվում է սոսկ որպես մի աշխատանք, որի համար նա ստանում է նյութական վարձատրություն: Այդ պատճառով էլ նա իր գործունեությունն իրականացնում է ոչ թե իր համոզմունքներով, այլ այնպես, ինչպես իրենից է դեկավարությունն է պահանջում: Ռ.Գնեյստը եզրակացնում է, որ ինքնուրույնության անհրաժեշտ պայման են հանդիսանում անվարձահատույց, պատվավոր պաշտոնները: Առանց վարձատրության աշխատող պաշտոնյան կառավարությունից տնտեսապես անկախ մարդ է և կաշկանդված չէ վերջինիս ցուցումներով: Սակայն նրանք պետք է նշանակվեն կառավարության կողմից, քանի որ տեղական ինքնակառավարման մարմինները լուծում են պետական կառավարման խնդիրներ:

Հազիվ թե կարելի է Գնեյստի բոլոր փաստարկների հետ համաձայնել: Պաշտոնավարությունը անձին կարող է զգալի անձնական շահ ապահովել՝ անկախ դրա վճարովիության սկզբունքից: Օրինակ՝ համայնքային սեփականության ձեռքբերման,

օտարման կամ տնօրինման գործընթացում համայնքի ղեկավարը կարող է որոշումները կայացնել ի նպաստ անձնական, ազգակցական կամ այլ շահերի և ամենին էլ պարտադիր չէ, որպեսզի նրա աշխատանքը վարձատրվող լինի: Հետևաբար պաշտոնը զբաղեցնելու և պահելու հարցում նա ոչ պակաս չափով է շահագրգռված, քան աշխատավարձ ստանալու պարագայում: Եվ քանի որ Գնեյստի պատկերացմամբ այդ նույն պաշտոնատար անձը պետք է նշանակվի պետության կողմից, ուստի անխուսափելի կլինի նրա անմիջական ենթակայությունը և հնազանդությունը կառավարությունից: Բացի այդ, չվարձատրվող պաշտոնյաների հասարակական հիմունքներով աշխատանքն ի վերջո կհանգեցնի նրան, որ տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվեն բացառապես սոցիալապես ապահովված խավի ներկայացուցիչներից, որոնք ի վիճակի կլինեն առանց վարձատրության աշխատելու:

Լորենց Շտայնն ավելի զարգացրեց պետական տեսությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության գլխավոր պայման սահմանելով հատկանիշը, որ թեև դրանք տեղերում իրականացնում են պետական կառավարման որոշակի խնդիրներ են իրականացնում, սկայն դրանք համայնքի, այլ ոչ թե՛ պետության մարմիններն են: 19րդ դարի երկրորդ կեսին այս տեսակետը գերիշխում էր իրավաբանական գիտության մեջ:

Այս տեսակետի համաձայն պետական կառավարման մարմինները պետական սպարատի մասն են և դրանց գոյության և գործունեության միակ նպատակը պետության կամքի իրականացումն է: Հետևաբար պետության և դրա առանձին մարմինների միջև չեն կարող հաստատվել փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանող իրավահարաբերություններ: Պետական մարմինները կոչված են արտահայտելու միայն պետության իրավունքները և կատարել միայն նրա պարտականությունները: Հենց այդ մարմինների գործունեության միջոցով և արդյունքում են լուծվում պետության առջև դրված խնդիրներն ու գործառույթները:

Այլ հարց են ինքնակառավարվող համայնքները: Ժողովրդաիշխանության իրացման համակարգում պետությունն ու համայնքները հանդես են գալիս իբրև հանրային իշխանության ինքնուրույն սուբյեկտներ՝ իրավաբանական անձինք: Թեև համայնքները մտնում են պետության կազմի մեջ և ենթարկվում են նրան, սակայն իրենց կարգավիճակով հատուկ իրավաբանական անձինք են՝ օժտված որոշակի իրավունքներով և պարտականություններով: Դրանք ունեն սեփականության իրավունք, իրենց հայեցողությամբ կարող են ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ստանձնել և կրել պարտականություններ, այդ թվում և՛ պետության հետ հարաբերություններում: Ի տարբերություն պետական մարմինների տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են ոչ միայն պետության գործառույթները, այլև տեղական նշանակության հարցերը: Դրանք ներկայացնում են համայնքի բնակչության շահերը: Հենց այդ պատճառով էլ Լ.Շտայնի կարծիքով պետության և համայնքի իրավասության, դրանց մարմինների լիազորությունների շրջանակն անհրաժեշտ է իրավական նորմերով բաժանել խմբերի: Տեղական ինքնակառավարման մարմինները չեն ենթարկվում պետության անմիջական ցուցումներին, հաշվետու և պատասխանատու չեն դրա

մարմինների առջև: Դրանք ինքնուրույն ընդունում են որոշումներ և կարգադրություններ, որոնք պետության կողմից ենթակա չեն հաստատման: Այլ կերպ ասած՝ Լորենց Շտայնի կողմից հիմնավորվեց համայնքը պետությունից, հետևաբար՝ դրանց մարմինները միմյանցից իրավաբանորեն հատակ տարանջատելու անհրաժեշտությունը, որպեսզի դրանք միմյանց հետ հարաբերությունները կառուցեն իրավահավասարության սկզբունքի հիման վրա՝ իբրև ինքնուրույն իրավաբանական անձինք:

Տեղական ինքնակառավարման պետական տեսությունը 1920րդ դարերում էական ազդեցություն ունեցավ տեղական ինքնակառավարման մասին ուսմունքի զարգացման գործում:

19րդ դարում որոշակի ազդեցություն ուներ նաև տեղական ինքնակառավարման պետական տեսության հիման վրա ձևավորված **իրավաբանական տեսությունը**: Դրա կողմնակիցները տեղական ինքնակառավարման էությունը հանգեցնում էին մեկ հիմնական հատկանիշին՝ ինքնակառավարվող միավորները պետությունից առանձնացված հանրային իշխանական սուբյեկտներ են՝ ինքնուրույն իրավաբանական անձինք: Նրանք գտնում էին, որ համայնքի տեղական ինքնակառավարման իրավունքը և դրանից բխող մարմինների լիազորությունները պետության համար անօտարելի ու անձեռնմխել են: Նրանց կարծիքով տեղական ինքնակառավարման մարմիններն արտահայտում են ոչ թե պետության, այլ՝ համայնքների կամքը, քանի որ համայնքների շահերն ու պահանջմունքները տարբերվում են պետության շահերից և պահանջմունքներից:

Այս տեսությունը, սակայն, մի շարք խոցելի մասեր ուներ.

տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների անձեռնմխելիությունը վերաբերվում է միայն կոնկրետ պետական մարմիններին և ոչ թե պետությանը, քանի որ վերջինս կարող է օրենսդրորեն փոխել դրանց բովանդակությունն ու ծավալը՝ ընդհուպ մինչև հետ վերցնելով դրանք,

ինքնակառավարման մարմինները պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում ենթակա են նաև պետական վերահսկողության,

գոյություն չունեն այնպիսի չափանիշներ, որոնցով հնարավոր լիներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող խնդիրների շարքից հստակ տարանջատել, թե դրանցից որոնք են համապատասխանում համայնքի կամ պետության շահերին (ինչպես վերը նշվեց, դրանց տարանջատման ապարդյուն փորձեր էին կատարել նաև հասարակական տեսության կողմնակիցները):

Ալեքսիս դե Թոքվիլի, Լորենց Շտայնի, Ռուդոլֆ Գնեյստի և 19րդ դարի մի շարք այլ գիտնականների աշխատություններում առաջադրված և հիմնավորված բազմաթիվ տեսական կանխադրյալներ ընկած են տեղական ինքնակառավարման և հասարակության կառավարման գործում դրա տեղի ու դերի մասին ժամանակակից հայացքների հիմքում:

Ներկայումս կարելի է տեղական ինքնակառավարման էությունը մեկնաբանող երկու հիմնական տեսություններ առանձնացնել՝ ***մունիցիպալ կառավարման դուալիզմի տեսությունը*** և ***սոցիալական սպասարկման տեսությունը***:

Մունիցիպալ կառավարման դուալիզմի տեսության համաձայն տեղական ինքնակառավարման մարմինները կառավարչական գործառույթներ իրականացնելիս դուրս են գալիս տեղական շահերի շրջանակից, ուստի պետք է գործեն որպես պետական վարչակազմի գործիքներ:

Սոցիալական սպասարկման տեսությունը հիմնական շեշտադրումը կատարում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչության սպասարկման վրա: Մունիցիպալ գործունեության հիմնական նպատակը համայնքի բնակչության բարեկեցությունն է: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության 104րդ հոդվածով որպես տեղական ինքնակառավարման նպատակ նշվում է «բնակչության բարօրությունը»:

Ներկայումս գիտնականների մեծ մասը տեղական ինքնակառավարումը մեկնաբանում են որպես տեղերում պետական կառավարման հարաբերականորեն ապակենտրոնացված ձև:

Ժամանակակից իրավունքի տեսությունը տեղական ինքնակառավարումը, որպես կանոն, մեկնաբանում է «ապակենտրոնացման» և «ապակոնցենտրացիայի» հասկացությունների լույսի ներքո:

Այսպես հայտնի ֆրանսիացի իրավագետ Ժ.Վեդերը ապակոնցենտրացիան ներկայացնում է որպես կազմակերպական հնարք, գործիք, երբ կենտրոնական իշխանության ներկայացուցիչների որոշումներ կայացնելու կարևոր լիազորություններ փոխանցվում են վարչատարածքային միավորների կամ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին: Այլ կերպ ասած՝ ապակոնցենտրացիան ոչ այլ ինչ է, քան կենտրոնի իրավասության մի մասի փոխանցումը այդ նույն կենտրոնի ստորադաս տեղական տարածքային օղակին:

Տարբերակում են ապակոնցենտրացման «ուղղահայաց» և «հորիզոնական» տեսակներ: Առաջին դեպքում կենտրոնի լիազորությունների մի մասը վերալիազորվում են կենտրոնական իշխանության շահերը ներկայացնող մեկ միասնական մարմին (երբեմն կենտրոնական իշխանության լիազորությունների և գործառույթների ապակոնցենտրացիան հոգուտ տեղական օղակներին հաճախ ուղեկցվում է տեղերում իշխանության կոնցենտրացիայով): Մինչդեռ հորիզոնական ապակոնցենտրացիայի դեպքում տեղական մակարդակով ձևավորվում են «իշխանության մի քանի կենտրոններ»՝ պետության գործառույթները բաշխելով ճյուղային հասկանիշով:

Ինչ վերաբերվում է ապակենտրոնացմանը, այս ինչպես նշում էր Ժ. Վեդերը, այս դեպքում որոշումներ ընդունելու իրավասությունը կենտրոնից փոխանցվում է ոչ թե վերջինիս տարածքային ներկայացուցիչներին, այլ կենտրոնի հետ իշխանական ենթակայական հարաբերությունների մեջ չգտնվող տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք ընտրվում են բնակչության կողմից:

Այսպիսով, ինչպես ապակոնցենտրացիայի, այնպես էլ՝ ապակենտրոնացման դեպքում ականատես ենք լինում նույն գործընթացին՝ պետության լիազորությունների և գործառույթների մի մասը կենտրոնից փոխանցվում է տեղերին, սակայն բովանդակային լուրջ տարբերությամբ: Ապակոնցենտրացիան ընդամենը կառավարման տեխնիկա է՝ միևնույն պետական ապարատի տարբեր օղակների միջև լիազորությունների գործառնական բաշխում:

Ապակոնցենտրացիան կենտրոնացման տարատեսակություններից է, այն որևէ առնչություն չունի կառավարման ժողովրդավարացման հետ, քանի որ իշխանության վերաբաշխում տեղի չի ունենում: Ապակոնցենտրացիան, ինչպես դիպուկ նշում է Գ.Բրեքանը, որպես բարեփոխում, կրում է գուտ կառավարչական և ոչ՝ քաղաքական, իմաստ: Աշխարհագրական առումով կառավարման ապարատը մոտենում է քաղաքացիներին, բայց դրանք ինքնին որևէ իշխանությամբ չեն օժտվում:

Ապակենտրոնացման դեպքում իրականացվում է լիազորությունների անմիջական օտարում պետությունից իբրև մեկ իրավաբանական անձ հոգուտ մեկ այլ իրավաբանական անձի՝ համայնքի:

Ապակենտրոնացված կառավարման համակարգի առավելությունների մասին դեռևս 19րդ դարի առաջին կեսին իր «Ժողովրդավարությունն Ամերիկայում» աշխատության մեջ գրում էր հայտնի Ալեքսիս դե Թոքվիլը: Նա պնդում էր, որ «այն կառավարությունը, որը հանդիսանում է ժողովրդական երջանկության միակ երաշխավորն ու արբիտրը, ընդամենը իր ամենակարողության պատրանք է ստեղծում բոլոր խնդիրների լուծման գործում: Նրան այլ բան չի մնում անելու, քան իր վրա վերցնել բոլորի փոխարեն մտածելու բեռը և ինքնուրույն հաղթահարելու բոլոր դժվարությունները»:

Ապակենտրոնացված կառավարման արդյունավետությունը հիմնավորվում է ինպես պրակտիկ փորձով այնպես էլ՝ ժամանակակից գիտության եզրահանգումներով՝ մասնավորապես, Կառլ Լյուդվիգ ֆոն Բերտալանֆիի համակարգերի ընդհանուր տեսության, ինչպես նաև Ժան Ուիլիամ Ֆրից Պիաժեի էվոլյուցիոն տեսության շրջանակներում³⁷: Ժ.Պիաժեն իր աշխատություններում ապացուցում է, որ ցանկացած համակարգ՝ ֆիզիկական, տրամաբանական և սոցիալական, ինքնակարգավորվող է: Ինքնակարգավորումը համակարգի գործողությունների համակցությունն է՝ ուղղված այդ համակարգի ինքնապահպանմանը և զարգացմանը: Որքան ավելի բարդ և դինամիկ են այն գործընթացները, որի մեջ ընդգրկված է ցանկացած համակարգ, այնքան ավելի մեծ ազատության պետք է տիրապետի այն՝ ընթացող փոփոխություններին արձագանքելու և ադապտացվելու և կայունություն պահպանելու համար: Այդ հիմնախնդրի լուծման միայն մեկ արդյունավետ լուծում կա՝ ընդհանուր համակարգի, իբրև ամբողջի, կենսունակության սահմաններում դրա բաղկացուցիչ մասը կազմող ենթահամակարգերի ինքնուրույնության ընդլայնումը: Սոցիալքաղաքական համակարգերի դեպքում դա նշանակում է, որ «վերևի» ճնշման թուլացում, ինքնակառավարման զարգացում և առաջին հերթին՝ տարածաշրջանային և տեղական՝ կառավարման համաժամանակյա ժողովրդավարացման պայմաններում:

Այսպիսով տեղական ինքնակառավարումը լուծում է երկու սոցիալական պահանջունքներ. Առաջին. Հանրային գործերի կառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունքի իրացումը, Երկրորդ. Տեղերում արդյունավետ իշխանության

³⁷ Стен ` Бергаланфи Л. фон. Общая теория систем — критический обзор // Исследования по общей теории систем: Сборник переводов / Общ. ред. и вст. ст. В. Н. Садовского и Э. Г. Юдина. — М.: Прогресс, 1969. С. 2382., ինչպես նաև

ստեղծումը, որն ընդունակ է ինչպես բավարարելու բնակչության կենսականորեն կարևոր պահանջումները, այնպես էլ՝ համապետական զարգացման շահերը:

2. Տեղական ինքնակառավարման հիմնական համակարգերը արտասահմանյան երկրներում:

Աշխարհում պաշտոնապես գրանցված շուրջ 200 ՄԱԿի անդամակցություն գոյություն ունի: Դրանց ճնշող մեծամասնությունը տեղերում իշխանության կազմակերպման և իրականացման իր ուրույն համակարգն է ստեղծել, որն իր մի շարք էական առանձնահատկություններով տարբերվում է մյուս երկրների տեղական ինքնակառավարման համակարգերից: Սակայն առավել կարևոր չափանիշների հիման վրա դրանք տեսության մեջ բաժանվում են երկու հիմնական համակարգերի՝ անգլոամերիկյան (անգլոսաքսոնական), մայրցամաքային (եվրոպական կամ ֆրանսիական): Առանձնացնում են նաև դրանց հիբրիդային տարբերակը՝ խառը համակարգը, երբեմն իբրև առանձին տարատեսակ նշվում է նաև սովետական համակարգը:

Հիմնական համակարգերն իրարից տարանջատելու համար հիմք է ընդունվում նախ. տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը և երկրորդ. տվյալ պետության վարչատարածքային բաժանման քանի մակարդակ գոյություն ունի և դրանցից որ մակարդակ(ներ)ում է իրականացվում տեղական ինքնակառավարում:

Ըստ առաջին չափանիշի անգլոամերիկյան իրավական համակարգի երկրներում համապատասխան օրենսդրական ակտով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանված են սպառիչ ցանկով և ցանկացած ինքնագործունեություն համարվում է օրենքի խախտում: Գրականության մեջ այս մոտեցումը լատիներեն լեզվով անվանում են «*intra vires*» (բառացի թարգմանած՝ լիազորություններից ներս) լիազորություններ:

Մայրցամաքային իրավական համակարգի երկրներում, ընդհակառակը, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սպառիչ ցանկով չեն սահմանվում (ինչը բնավ չի ենթադրում դրանց անսահմանափակություն) և օրենքով ուղղակիորեն չնախատեսված ինքնագործունեություն չի համարվում իրավախախտում: Գրականության մեջ այս մոտեցումը լատիներեն լեզվով անվանում են «*ultra vires*» (բառացի թարգմանած՝ լիազորություններից դուրս) լիազորություններ: Հայաստանի Հանրապետությանը այս մոդելի երկրներից է: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9րդ հոդվածի 1ին կետով սահմանվում է ընդհանուր իրավասության սկզբունքը՝ «համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»: Օրենքի 10րդ հոդվածով սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների 2 տեսակ՝ սեփական լիազորություններ և պետության կողմից պատվիրակված լիազորություններ: Սեփական լիազորություններն իրենց հերթին բաժանվում են կամավոր և պարտադիր որոնցից միայն կամավոր լիազորությունների համար նույն հոդվածի վերջին մասում նշվում է, որ դրանք օրենքով սպառիչ չեն թվարկված:

Ըստ երկրորդ չափանիշի անգլոամերիկյան իրավական համակարգի երկրների տեղական ինքնակառավարման համակարգը բնութագրվում է նրանով, որ դրա մեջ մտնող ցանկացած պետության վարչատարածքային բաժանման բոլոր մակարդակներում իրականացվում է բացառապես տեղական ինքնակառավարում:

Մայրցամաքային համակարգի երկրներում վարչատարածքային բաժանման բոլոր կամ որոշ մակարդակներում իրականացվում է տարածքային պետական կառավարում, իսկ մյուսներում տեղական ինքնակառավարում: Ընդ որում երկրների մի մասում, օրինակ՝ Ֆրանսիայում, վարչատարածքային բաժանման բոլոր մակարդակներում պետական կառավարումն ու տեղական ինքնակառավարումը զուգակցված են (ռեժիոն, դեպարտամենտ, շրջան և կոմունա), իսկ մյուս մասում, օրինակ՝ Հայաստանում, վարչատարածքային մեծ միավորման՝ մարզի, շրջանակներում իրականացվում է բացառապես տարածքային պետական կառավարում, իսկ մարզի տարածքում գտնվող քաղաքային և գյուղական համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

2. Տեղական իշխանության կազմակերպումը մինչխորհրդային Հայաստանում:

4. Տեղական իշխանության կազմակերպումը խորհրդային Հայաստանում:

5. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման սահմանադրական մոդելը Հայաստանի Հանրապետությունում:

ԲԱԺԻՆ II: ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գլուխ 4. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՅՅՈՒԹՅՈՒՆԸ, ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Տարածքային կառավարման հասկացությունը:

Լայն առումով կառավարումն ինչոր բանի (կամ ինչոր մեկի) ղեկավարումն է: Նման ըմբռնմամբ այն մեկնաբանվում է նաև մեր օրերում: Սակայն այդօրինակ սահմանմամբ սահմանափակվելը բավարար չէ: Առաջանում է այդ ղեկավարման բովանդակության, դրա գործառույթային նշանակության բացահայտման պահանջ:

Ընդհանուր տեսական մոտեցումները բավարար հիմքեր են տալիս հետևյալ եզրահանգումների համար.

1) կառավարումն ողջ համակարգի ներքին հատկանիշն է, որի հիմնական տարրերն են սուբյեկտը (կառավարող տարրը) և օբյեկտը (կառավարվող տարրը),

2) կառավարումը ենթադրում է համակարգը կազմող տարրերի ոչ միայն ներքին փոխգործակցություն: Գոյություն ունեն տարբեր աստիճանակարգային մակարդակի բազմաթիվ ամբողջական փոխգործակցող համակարգեր, ինչը ենթադրում է ինչպես ներհամակարգային, այնպես էլ միջհամակարգային բնույթի կառավարչական գործառույթների իրականացում: Միջհամակարգային բնույթի կառավարչական գործառույթների իրականացման դեպքում առավել բարձր կարգի համակարգը հանդես է գալիս իրենից ցածր կարգի համակարգի նկատմամբ կառավարման սուբյեկտի դերում, իսկ վերջինս, նման փոխգործակցության շրջանակներում, հանդիսանում է կառավարման օբյեկտ,

3) կառավարումն իր էությունը հանգում է օբյեկտի վրա սուբյեկտի կառավարող ներգործության, որի բովանդակությունը համակարգի կարգավորումն է, դրա գործառույթների իրականացման ապահովումը՝ այդ համակարգի գոյության և զարգացման օրինաչափություններին համապատասխան: Դա նպատակամետ կարգավորիչ ներգործություն է, որն արտահայտվում է սուբյեկտի և օբյեկտի միջև եղած կապերում, և իրականացվում է անմիջականորեն կառավարման սուբյեկտի կողմից,

4) կառավարումն իրական է, երբ առկա է օբյեկտի ենթակայությունը կառավարման սուբյեկտին, այսինքն՝ համակարգի կառավարվող տարրի ենթակայությունն իրեն կառավարող տարրին: Հետևաբար, կառավարող (կարգավորող) ներգործությունը կառավարման սուբյեկտի առանձնաշնորհն է:

Սրանք են կառավարում հասկացությունը բնութագրող հիմնական հատկանիշները, որոնք միանգամայն ընդունելի են նաև տեղական տարածքային ոլորտում տարածքային կառավարման ըմբռնման համար: Տարածքային կառավարման տեղն ու դերը՝ աշխատանքի բաժանման՝ կառուցակարգում (մեխանիզմում) պայմանավորված են հետևյալ բնութագրիչներով. .

ա) տարածքային կառավարումը միասնական պետական իշխանության կենսագործման ուղղությամբ իրականացվող գործունեության հստակ տեսակ է, որն ունի գործառույթային յուրահատկություն, որով տարբերվում է պետական իշխանության իրագործման այլ տեսակներից (ձևերից),

բ) տարածքային կառավարումը գործադիրկարգադրող բնույթի գործունեություն է: Դրա հիմնական ուղղությունը կատարումն է, այսինքն՝ օրենքներն ու ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը կյանքի կոչելը: Այդ նպատակն իրականացվում է անհրաժեշտ իրավաբանականիշխանական լիազորությունների գործադրման միջոցով,

գ) տարածքային կառավարումը հատուկ սուբյեկտների՝ տարածքային կառավարման մարմինների առանձնաշնորհն է,

դ) տարածքային կառավարումը ենթաօրենսդրական գործունեություն է, որն իրականացվում է «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի»:

Այդպիսին է տարածքային կառավարման ընդհանրացված բնութագիրը, որին կարելի է ավելացնել նաև դրա որոշ այլ առանձնահատկություններ, որոնց թվում են համակարգի

ուղղահայացությունը (ենթակարգությունը, աստիճանակարգությունը), սուբեկտներին պատկանող իրավաբանական իշխանական լիազորությունների իրականացումը վարչական, այսինքն՝ արտադատական կարգով, գործող օրենսդրությամբ նախատեսված վարչական իրավաստեղծ գործունեության (իրավակիրառման և իրավաստեղծման գուգակցման) հնարավորությունը:

Վերոշարադրյալը թույլ է տալիս ուշադրություն դարձնել ևս մեկ սկզբունքի: Տարածքային կառավարումը և դրա գործառույթներն իրականացնող մարմիններն առաջին հերթին պետական իշխանության միասնական կառուցակարգի բաղկացուցիչ տարրն են:

Տարածքային կառավարման կազմակերպմանը վերաբերող հիմնախնդիրները գրեթե բացառապես իրավաբանական բնույթ են կրում՝ իշխանության տեղական մարմինների իրավասությունը, վարչական ինստիտուցիաները և այլն:

Տեղին է հիշել Ալ. դե Թոքվիլի մեկ արտահայտություն. «Ես կարծում եմ, որ ժողովրդավարության դարաշրջանում, որն անպայման կգա, անձի ինքնուրույնությունը և տեղական ազատությունները կլինեն կառավարման արվեստի ստեղծագործություն: Կենտրոնացումը կդառնա կառավարման բնական ձևը»: Իրեն ներհատուկ կանխատեսման ունակությամբ, Ալ. դե Թոքվիլն ազդարարեց կենտրոնացման ուղղությամբ արդի էվոլյուցիան:

Կենտրոնացումը գործնականում ամենուրեք դարձավ, «կառավարման բնական ձև»: Սակայն, դրա հետ մեկտեղ, այն որոշ չափով գերակայություն ունի տեղական մարմինների գործունեության նկատմամբ:

«Ձտարյուն» կենտրոնացումը չի ճանաչում տեղերի ինքնավարությունը և նույնիսկ՝ տեղական կյանքը: Այն ներհատուկ է բռնապետական (ավտորիտար) վարչակարգերին, սակայն լայնորեն կիրառվում է նաև այն ժողովրդավարական վարչակարգերում, որտեղ կարծում են, թե քաղաքական ազատությունները պետք է ամրագրվեն միայն համազգային մակարդակով:

Սակայն, երբ պետությունը հասնում է որոշակի չափերի, անհնարին է դառնում հրաժարվել տեղական մարմինների գոյությունը թույլատրելուց: Այսպիսով, ապակոնցենտրացումը ներկայանում է որպես կենտրոնացման ձևերից մեկը և վերջինիս ավելորդություններից ապահովագրող միջոց: Ապակոնցենտրացումը ենթադրում է տեղական մարմինների առկայություն, որոնք, ըստ գործառույթի և իրենց պաշտոնատար անձանց ենթակայության կարգի, կախված են կառավարությունից: Պաշտոնատար անձանց կախվածությունը նշանակում է, որ տեղական մարմինների ղեկավարությունը նշանակվում է կենտրոնական կառավարության կողմից և նրա կողմից էլ կարող է պաշտոնանկ արվել: Գործառութային կախվածությունը նշանակում է, որ կենտրոնական իշխանությունը կարող է ճանաչել տարածքային կառավարման մարմինների բավականին լայն իրավասություններ, սակայն ցանկացած պահի կարող է վերանայել դրանք, փոփոխել կամ չեղյալ համարել այդ մարմինների ընդունած որոշումները՝ ինչպես օրինականությունը խախտելու պատճառով, այնպես էլ նպատակահարմարության նկատառումներով:

Ավելին, լինում են դեպքեր, երբ ապակոնցենտրացումը և ապակենտրոնացումը կարծես փոխվրադրվում են: Թերևս այս առումով ուսանելի օրինակ է Հայաստանը, ուր գոյակցում են

մարզը և համայնքը : Այդ իմաստով նշենք, որ ապակոնցենտրացում հասկացությունը չպետք է շփոթել ապակենտրոնացման հետ, թեև երկու դեպքում էլ դրվում է իրավասությունները, ինչպես նաև որոշ ծառայություններ և միջոցներ կենտրոնից տեղերին փոխանցելու հարցը: Կարելի է նշել, որ խոսքը վերաբերում է իշխանական լիազորությունների տարրալուծմանը: Ապակոնցենտրացումը և ապակենտրոնացումը, անկասկած, իշխանությունը կենտրոնից տեղերին փոխանցելու երկու տարբեր տեսակներ են: Մակայն, դրանց միջև առկա է նաև արմատական տարբերություն: Ապակոնցենտրացման հանգամանքում իշխանական լիազորությունները պետությունն է փոխանցում իր կառուցվածքային օղակներին, այսինքն՝ կառավարման կենտրոնական ապարատն իշխանությամբ է օժտում իր տարածաշրջանային ծառայություններին: Այս սկզբունքով, իրագործվում է պետության իշխանությունը տեղերում: Բայց այդ բարեփոխումն ունի կառավարչական, այլ ոչ թե քաղաքական իմաստ: Աշխարհագրական առումով կառավարման ապարատը մոտենում է քաղաքացիներին, բայց նրանք որևէ իշխանությամբ չեն օժտվում: Օղիլոն Բարրոյի հայտնի արտահայտությամբ՝ չարվածում է նույն, սակայն կարճ բռնակով մուրճը: Իսկ ապակենտրոնացման պարագայում, ընդհակառակը, իշխանական լիազորությունների փոխանցումն իրականացվում է մեկ իրավաբանական անձից մյուսին, պետության կողմից՝ տեղական կոլեկտիվին (համայնքին), որը կազմակերպորեն կապված չէ կենտրոնի հետ: Նման դեպքերում բարեփոխումը կարող է ձեռք բերել նաև քաղաքական իմաստ : Այդ տեսակետից ապակոնցենտրացումը դրսևորվում է տարածքային կառավարման միջոցով, իսկ ապակենտրոնացումը՝ տեղական ինքնակառավարման միջոցով:

2. Տարածքային կառավարման սկզբունքները:

2.1. Տարածքային կառավարման սկզբունքի հասկացությունը:

2.2. Տարածքային կառավարման ընդհանուր սկզբունքների տեսակները:

Սկզբունքը, որպես տեսական հասկացություն, պետական կառավարման համակարգում արտացոլում է այդ համակարգի օրինաչափությունները, հարաբերությունները, նրա տարրերի փոխադարձ կապերը: Դա յուրահաստուկ հասկացություն է, որը բովանդակում է ոչ այնքան բուն օրինաչափությունը, հարաբերությունը, փոխադարձ կապը, որքան դրանց իմացությունը: Սկզբունքը գիտական ճանաչողության արդյունքների արձանագրումն է՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Երբ խոսքը գնում է տարածքային կառավարման սկզբունքների մասին, ապա թվում է, որ դրանց հասկացությունը որպես աղբյուրներ, պետք է ունենա կառավարչական օբյեկտիվ երևույթներն ու գործընթացները, ճիշտ բացահայտի դրանց բնույթը և կառավարչական դերը, իրականության ստույգ պատկերման հիման վրա նկարագրի պետական կառավարչական իրողությունների օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը, արտացոլվի այն ձևով, որը համապատասխանում է դիալեկտիկական տրամաբանության պահանջներին,

ներկայացնի պետակառավարչական որոշակի երևույթի զարգացող էությունը, նպաստի կառավարման պրակտիկայում գիտական գիտելիքների արդյունավետ օգտագործմանը:

Տարածքային կառավարման սկզբունքների բացահայտման և հիմնավորման գործընթացը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

ա) արտացոլի տարածքային կառավարման ոչ թե ցանկացած, այլ՝ առավել էական, գլխավոր, օբյեկտիվորեն անհրաժեշտ օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը,

բ) բնութագրի տարածքային կառավարման կայուն օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը,

գ) ընդգրկի առավելապես տարածքային կառավարմանը՝ որպես ամբողջական սոցիալական երևույթի բնորոշ, այսինքն՝ ընդհանուր, այլ ոչ թե մասնավոր բնույթի օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը,

դ) արտացոլի տարածքային կառավարման յուրահատկությունը, դրա տարբերությունը կառավարման այլ տեսակներից:

Ուրեմն, տարածքային կառավարման սկզբունք՝ հասկացությունը կոչված է սկզբնապես գիտական, իսկ այնուհետև նաև իրավական ձևով արտացոլել տարածքային կառավարման մեջ օբյեկտիվորեն առկա դրա կազմակերպման և գործառնությունների իրականացման համար հատուկ նշանակություն ունեցող օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը:

Տարածքային կառավարման սկզբունքը ներկայացնում է հասարակականքաղաքական բնույթի և այլ տարրախմբերի օրինաչափությունը, հարաբերությունը կամ փոխադարձ կապը, որն արտահայտված է իրավունքով ամրագրված ու կառավարման ընթացքում մարդկանց տեսական ու պրակտիկ գործունեությունում կիրառվող որոշակի գիտական դրույթի տեսքով:

Տարածքային կառավարման սկզբունքների տարբերող հատկանիշների թվին են պատկանում դրանց դիալեկտիկական և դրա վրա հիմնված՝ համակարգային բնույթը: Յուրաքանչյուր օրինաչափություն, հարաբերություն և փոխադարձ կապ հատկանշվում է բարդ կառուցվածքով և երբեմն բովանդակում է հակասական, տարուղորդված պահեր: Տարբեր սկզբունքների միջև կարելի է հայտնաբերել որոշակի հակասություններ և, դրա հետ մեկտեղ՝ փոխընդհանրություններ: Այս կամ այն սկզբունքը բնութագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա փոխկապակցվածությունն այլ սկզբունքների հետ, համալրացումը վերջիններիս կողմից և դրանցից կախվածությունը: Սկզբունքների միջև բարդ փոխադարձ կապերը և փոխգործակցությունները գոյություն ունեն սկզբունքների ամբողջական համակարգի շրջանակներում, որտեղ դրանք հավասարակշռում կամ ուժեղացնում են միմյանց, լիովին բացահայտում իրենց բնույթը և կարգավորող ունակությունները: Հենց համակարգում յուրաքանչյուր սկզբունք, ըստ կառուցվածքի, ունի հատկացված իր տեղը, համակարգում և դրա միջոցով դրսևորում է նաև իր յուրահատկությունը: Համակարգը որոշում է նաև սկզբունքների հստակ կիրառման սահմանները, եղանակները և այլ դրսևորումներ: Նշանակում է, որ տարածքային կառավարման ցանկացած սկզբունքի բովանդակության և ներուժի լրիվ բացահայտումը հնարավոր է միայն նրա համակարգային կախվածությունների

շրջանակներում՝ հաշվի առնելով այդ վերջինները: Տարածքային կառավարման ընդհանուր համակարգային սկզբունքների առանձնացումն ու բնութագրումը պահանջում են խոր և նպատակատուղիված հետազոտություններ: Այդ պատճառով այստեղ առաջարկվում են տվյալ թեմայի վերաբերյալ սոսկ խորհրդածություններ, որոնք, հասկանալի է, չեն հավակնում բացարձակ ճշմարտության: Սա փորձ է տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնելու այն օրինաչափությունները, հարաբերությունները և փոխադարձ կապերը, որոնք բխում են հասարակության ու պետության բնույթների պայմանավորվածություններից և նշանակալի են ողջ պետական կառավարման համար: Դրանց թվին են պատկանում օբյեկտիվությունը, ժողովրդավարությունը, իրավական կարգավորվածությունը, օրինականությունը, իշխանությունների տարանջատումը, հրապարակայնությունը: Պետական կառավարման օբյեկտիվության սկզբունքը ելակետային է և պայմանավորում է կառավարչական բոլոր գործընթացներում օբյեկտիվ օրինաչափությունների (բնական և պատմահասարակական) պահանջներին և հասարակական ուժերի հնարավորություններին հետևելու անհրաժեշտությունը: Այն արտահայտում է տարածքային կառավարման կախվածությունը՝

ա) հասարակության բնույթից, զարգացման աստիճանից և օրինաչափություններից, առաջին հերթին նրա այն բաղադրիչներից, որոնք կառավարվող օբյեկտներ են հանդիսանում,

բ) պատմական տվյալ ժամանակահատվածում առաջադրված և լուծվող հասարակական նպատակներից,

գ) կառավարման մեջ ներդրման ենթակա առկա միջոցներից և ռեսուրսներից,

դ) կառավարման՝ որպես որոշակի համակարգային հասարակական երևույթի, գործառույթների իրականացման և զարգացման ներքին օրինաչափություններից:

Օբյեկտիվության սկզբունքն արտացոլում է նաև տարածքային կառավարման կազմակերպման, գործառույթների իրականացման և զարգացման օրինաչափությունների, հարաբերությունների ու փոխադարձ կապերի մի լայն շրջանակ, որը կապված է դրանում հասարակության, նպատակների, օբյեկտիվ պայմանների և սուբյեկտիվ գործոնի անդրադարձման և իրագործման հետ: Այդ սկզբունքի խախտումը, որը սովորաբար հետևանք է բնական և հասարակական օրինաչափություններից սուբյեկտիվ և կամայական շեղումների, հանգեցնում է հասարակության կյանքում մեծ կորուստների, նրա ջանքերը մղում է չիմնավորված կամ նեգատիվ ուղղությամբ, արգելակում է զարգացումը, առաջացնում մարդկանց կողմից պետակառավարչական ներգործությունների մերժում: Ժամանակակից պետությունում կառավարման իրականացման գործընթացում հիմնարար է տարածքային կառավարման ժողովրդավարության սկզբունքը: Այդ սկզբունքի հաստատումն արդյունք է ժողովուրդների բազմադարյան պայքարի՝ հանուն իրենց՝ որպես ինքնիշխանության կրողների, իշխանության միակ աղբյուրի ճանաչման և, համապատասխանաբար, հանուն յուրաքանչյուր մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովման: Ժողովրդավարության սկզբունքը վերարտադրվում է ժողովրդաիշխանության պետական կառավարման մեջ: Դա բարդ և բազմակողմանի սկզբունք է, որն առաջին հերթին պահանջում է հասարակության, պետության, հասարակության բոլոր բաղադրատարրերի և դրանց

անհրաժեշտ տարածքային կառավարման համակարգի բաղադրիչների միջև հաստատել խոր և մշտական փոխկապակցվածություն: Այն ենթադրում է մարդկանց (քաղաքացիների) կենսական պահանջմունքների, շահերի և նպատակների ներթափանցում տարածքային կառավարման բոլոր տարրերի (քաղաքականության, նպատակների, գործառույթների, կառուցվածքի, գործընթացի, կառավարման արդյունքների և այլնի) մեջ:

Եթե ընդունենք, որ պետությունը ծառայում է հասարակությանը, իսկ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը կողմնորոշված է դեպի մարդկանց կենսական պահանջմունքների, շահերի և նպատակների բավարարումը, ապա դժվար չէ եզրակացնել, որ տարածքային կառավարման մեջ ամեն ինչ դասվում է անհրաժեշտի կատեգորիային և չի կարող պատշաճորեն կարգավորված չլինել: Իրավական պետության էությունը նույնպես արտահայտվում է պետական կառավարման մեջ: Այսպիսով, հիմքեր կան խոսելու պետական կառավարման (տարածքային կառավարման) իրավական կարգավորվածության սկզբունքի մասին:

Այդ սկզբունքն օբյեկտիվորեն պայմանավորում է պետական կառավարման նպատակների, գործառույթների, կառուցվածքի, գործընթացի, հիմնական ասպեկտների և բուն սկզբունքների, գլխավորապես օրենսդրական, սահմանման անհրաժեշտությունը: Ընդ որում, նշված հարցերի լուծումը ոչ թե օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի, այլ հենց իրավական օրենքների (այստեղ նույնաբանություն չկա) միջոցով, որոնք բովանդակում են արդարության, մարդասիրության, համագործակցության, մարդկանց իրավունքների, ազատությունների և պարտականությունների ապահովման գաղափարները: Հայաստանի պատմության մեջ պետական կառավարման իրավական կարգավորման սկզբունքը հազվադեպ է վերարտադրվել, ժողովրդավարական իրավական ընթացակարգում ընդունված իրավական նորմի փոխարեն, սովորաբար շեշտադրվում է՝ աստվածատուր շնորհներով օժտված ղեկավարի կամքը, որը, իբրև, ընդունակ է լուծել հիմնախնդիրները:

Վերոգրյալ սկզբունքին է հարում և այն որոշակի լրացնում է պետական կառավարման օրինականության սկզբունքը: Իսկապես, եթե պետական կառավարման իրավական կարգավորվումը դրա նպատակահարմարության, գործունեության արդյունավետության ապահովման կարևոր նախապայմանն է և գործոնը, ապա դա, գործնականորեն, կարող է իրականացվել միայն այն ժամանակ, երբ պետական կառավարման մեջ կհաստատվի օրենքների ու այլ նորմատիվ իրավական ակտերի համատարած և ամբողջական կատարման՝ հստակ ըմբռնված և հետևողական իրագործվող գործելակերպ: Առանց օրինականության չկա իրավական պետություն, վերջինս ընտրարշավների ժամանակ դառնում է քաղաքական և տնտեսական ընտրախավի գայթակղիչ կարգախոսը: Օրինականության սկզբունքը պարունակում է մի շարք մեթոդական և գործնական դրույթներ, առաջին՝ այն ենթադրում է, որ տարածքային կառավարման գործառույթի իրականացումն ու զարգացումն ունեն իրավական ամուր հիմքեր, սահմանվում են օրենքով և հանգում դրա գործնական իրականացմանը, երկրորդ՝ օրինականության սկզբունքը պայմանավորում է պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բովանդակության, կազմակերպական կառուցվածքի, տարրերի փոփոխությունների

ժամանակին և ճիշտ իրավական կարգավորման հրատապությունը, երրորդ՝ այն պահանջում է դրանց նորմատիվ գործունեության՝ հատկապես իրավական ակտերի ընդունման ու կատարման, հստակ կարգավորում, և չորրորդ՝ հիմք է հանդիսանում պետական ծառայողների գործունեության մեջ գիտակցական կարգապահության ձևավորման և պահպանման համար:

Ընդհանուր համակարգային սկզբունքների մեջ հիմքեր կան, վերջապես, առանձնացնելու պետական կառավարման հրապարակայնության սկզբունքը: Այն նույնպես վերարտադրում է ժողովրդավարական, իրավական (եթե այդպիսին առկա է) պետականությունը և ապահովում պետական կառավարման կապը հասարակության, քաղաքացիների հետ: Այդ սկզբունքը հիշեցնում է բազմաթիվ հրապարակումներում հոլովվող բացախտությունը, հասարակական կարծիքը հաշվի առնելու սկզբունքը: Բայց արտացոլվող երևույթների ընդգրկմամբ այն ավելի ընդարձակ է, քանի որ ներառում է.

ա) քաղաքացիների համար պետական կառավարման մատչելիությունը, ինչը կապված է նրանց կողմից համապատասխան մարմինների կազմի ընտրության և դրանց գործունեությանը մասնակցելու իրավունքի հետ,

բ) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը (այն ավելի տարողունակ է, քան հրապարակայնությունը),

գ) պետակառավարչական հիմնական գործընթացների հասարակական վերահսկողությունը, այդ թվում նաև զանգվածային լրատվության միջոցների օգտագործմամբ,

դ) պետական կառավարման գործընթացներում սահմանադրորեն ամրագրված հասարակական շահերի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանման դատական վերահսկողությունը: Ընդհանուր համակարգային սկզբունքներից հետո ու բարդ խումբ են կազմում կառուցվածքային սկզբունքները, որոնցից հնարավոր է առանձնացնել հետևյալները:

Պետական կառավարման կառուցվածքային նպատակային սկզբունքներն են.

1) պետական կառավարման նպատակների փոխհամաձայնեցվածությունը և դրանց ոչ հակասականությունը,

2) նպատակների փոխհամալրելիությունը, երբ նպատակը նպաստում է մյուսին և ուժեղացնում այն,

3) մասնավոր, տեղական նպատակների համատեղումն ընդհանուր (ռազմավարական) նպատակներին, այսինքն՝ պետական կառավարման նպատակների համակարգում դրանց աստիճանակարգումը,

4) այս կամ այն նպատակների իրականացան արդյունքների փոխակերպումն այլ նպատակների աղբյուրների, այսինքն՝ պետական կառավարման նպատակների համակարգում ներկայացված նպատակների ամբողջության իրագործմանը նպատակատուղված գործողությունների հաջորդականությունը,

5) նպատակների բաշխվածությունն ըստ պետական կառավարման գործառույթների և պետական մարմինների կառավարչական գործառույթների:

Պետական կառավարման գործառնությանին կառուցվածքը ձևավորող պետական կառավարման կառուցվածքայինգործառնությանին սկզբունքներից կարելի է թվարկել հետևյալները.

- 1) գործառնությունների տարբերակում (դիֆերենցիացիա) և արձանագրում,
- 2) համատեղելիություն,
- 3) համակենտրոնացում, որը պայմանավորում է որոշակի մարմնին այնպիսի կառավարչական գործառնությունների ու համապատասխան ռեսուրսների տրամադրման անհրաժեշտությունը, որոնք հնարավորություն կընձեռեն, որպեսզի այդ մարմնի պետականկառավարչական ներգործությունները լայնորեն և ուժգնորեն ուղղորդեն, կազմակերպեն և կարգավորեն կառավարվող օբյեկտները,
- 4) համակցում, որի նպատակն այն է, որպեսզի կառավարող տարբեր բաղադրիչների կառավարչական գործառնությունների որոշակի ամբողջությունը՝ իր ինքնակազմակերպման մեջ, բացառի կրկնօրինակումը և գուգահեռականությունը,
- 5) բավարար բազմազանություն, որը պահանջում է, որպեսզի կառավարման համակարգի այս կամ այն բաղադրիչի կառավարչական գործառնությունը (ներգործությունները) իրենց քանակով և բովանդակությամբ բավարարեն վերջինիս կառավարչական տարբեր պահանջմունքները,
- 6) կառավարող ներգործությունների համապատասխանեցումը կառավարվող բաղադրիչների, գլխավորապես կառավարվող օբյեկտների իրական պահանջմունքներին:

Պետական կառավարման կազմակերպական կառուցվածքի ձևավորմանը դասվող պետական կառավարման կառուցվածքային կազմակերպական սկզբունքների շարքում առանձնացվում են հետևյալները.

- 1) պետական կառավարման համակարգի միասնությունը, որն ապահովում է պետականկառավարչական գործընթացների ամբողջականությունը, համաձայնեցվածությունը և գործունեությունը մարզերում,
- 2) տարածաճյուղայինը, որը պայմանավորում է կազմակերպական կառուցվածքների կախվածությունը տարածաշրջանից,
- 3) կազմակերպական կապերի բազմազանությունը.
- 4) կոլեգիալության և միանձնյա ղեկավարման գուգորդումը:

Պետականկառավարչական գործունեությունը կազմակերպող կառուցվածքայինգործընթացային՝ լայն կիրառում ունեցող սկզբունքներն են.

- 1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կառավարչական գործունեության տարրերի (մեթոդների, ձևերի և փուլերի) համապատասխանությունը նրանց գործառնություններին և կառուցվածքին,
- 2) կառավարչական գործունեության հստակեցումը և այդ գործունեության արդյունքների համար անձնական պատասխանատվությունը,
- 3) կառավարչական նպատակահարմար և արդյունավետ գործունեության իրականումը :

3. Տարածքային կառավարման մարմինների խնդիրները

3.1. Տարածքային կառավարման մարմինների խնդիրների հասկացությունը:

3.2. Տարածքային կառավարման մարմինների խնդիրների դասակարգումը:

Տարածքային կառավարման մարմինների խնդիրներն ընդգրկում են այն ամենի կատարումը, ինչի իրագործումն ապահովվում կամ պետք է ապահովվի նրանց կողմից:

Գործնականում այդ խնդիրները սերտորեն փոխկապակցված են պետական և մունիցիպալ կառավարման գիտության մյուս հիմնարար կատեգորիաների և հասկացությունների հետ: Առաջին հերթին դրանք կախված են.

ա) կազմակերպումից, քանի որ կազմակերպական կառուցվածքները մշտապես պետք է ինստիտուտացվեն՝ պայմանավորված նրանց առջև դրված խնդիրներով, այսինքն՝ պետք է հարմարվեն այդ խնդիրներին,

բ) խնդիրները կախված են նաև մակարդակից (կենտրոնական կամ տարածքային կառավարման մեջ), այսինքն՝ խոսքը խնդիրների և մակարդակների հարաբերական համապատասխանության անհրաժեշտության մասին է: Եվ հենց դրանում է կայանում կոնցենտրացման, ապակոնցենտրացման և ապակենտրոնացման ողջ հիմնախնդիրը:

Տարածքային կառավարման խնդիրների որոշումը դյուրին կդառնա, եթե ձեռնարկվի ցանկացած հասարակությունում հիմնական որոշումները կայացնող մարմնի գործառույթների ներքին վերլուծություն, անկախ այն հանգամանքից, թե դա միասնական մարմին է՝ ինչպես բռնապետական վարչակարգերում, թե՛ գործադիր՝ մարմին՝ ինչպես իշխանությունների տարանջատման պայմաններում: Այդ մարմինները պետության գործառույթների իրականացման գործընթացում սկզբնական իշխանության, ազատության կրողներն են, այնպես որ անհրաժեշտություն չկա ձևակերպել նրանց դիրքորոշումները պետության դերի նկատմամբ: Պարզ է, որ տարածքային կառավարման խնդիրները երբեք առաջնային չեն, դրանք մշտապես ածանցյալ են և կատարում են կառավարման մարմինների հանձնարարությունները, և, դրան համապատասխան, լուծում մասնավոր հարցեր: Այդ դիրքերից պետության և տարածքային կառավարման խնդիրների սահմանազատումը կատարվում է ոչ թե ուղղահայաց, այլ՝ հորիզոնական: Քաղաքական փիլիսոփայությունը սովորեցնում է, որ դարաշրջանների փոփոխմամբ, փոխվում են նաև պահանջումները, և պետության խնդիրները կարող են անվերջ տարատեսակվել, այն դեպքում, երբ տարածքային կառավարման խնդիրներն իրենց էությամբ մնում են անփոփոխ և կայանում են իշխանությունը կրողների հանձնարարությունների կատարման և տեղերում կենտրոնի քաղաքականության իրականացման մեջ:

Եթե սկզբունքորեն առաջադրվի տարածքային կառավարման կողմից լուծվող խնդիրների կարևորության և անհրաժեշտության հարցը և վերլուծվի այն, ապա պարզ կդառնա, որ այդ խնդիրները գոյություն ունեն և նույնն են՝ անկախ քաղաքական ռեժիմից ու պետական կառուցվածքից:

Մյուս կողմից, ամբողջությամբ վերցրած, պետական կառավարման խնդիրները կարող են էապես փոխվել ինչպես գործառության, այնպես էլ կառուցվածքային առումով, դա կախված է նրանից, թե ինչպիսի պետության մասին է խոսքը՝ միասնական (ունիտար) թե՛ դաշնային, որի դեպքում տեղական իշխանություններն օժտված են վարչական որոշ ինքնավարությամբ: Վարչակազմի (ադմինիստրացիայի) խնդիրների հիմնահարցը՝ տարածքային կառավարման կիրառմամբ, առանձնակի կարևորություն է ստանում: Իհարկե, խոսքն առաջին հերթին կվերաբերի կազմակերպական խնդիրներին, սակայն հարցն սկզբունքորեն հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ տեղական մակարդակում վարչակազմի խնդիրները հանդես են գալիս իրենց անխաթար տեսքով: Այդ պատճառով խնդրո առարկա հարցի լուծման դժվարությունները, որոնք բխում են այն հանգամանքից, որ ցանկացած պահի հնարավոր է պետության և վարչակազմի (քաղաքական և վարչական իշխանությունների) խնդիրների միախառնումը, տեղական մակարդակում բացակայում են: Տեղական մակարդակում վարչակազմն ինքնուրույն է հանդես գալիս և նրա ու կառավարության խնդիրների միահյուսման հարց չի առաջանում: Այլ կերպ ասած՝ տեղական վարչակազմն իրական օբյեկտ է տարածքային կառավարման խնդիրների ուսումնասիրության համար:

Անկասկած, երբ գործ ունենք պարզ ապակոնցենտրացման հետ, ինչպես մեր երկրում, ապա իրականում ոչ մի հիմնախնդիր չի ծագում: Պարզ և փոքր երկրի շրջանակներում անհրաժեշտ է տարբերակել կենտրոնական վարչակազմի՝ կառավարության խնդիրները և տեղական՝ տարածքային կառավարման մարմիններին փոխանցված խնդիրները՝ նկատի ունենալով, որ տեղական մարմիններն ըստ գործառույթների՝ կախված են կենտրոնական իշխանություններից:

Հատկանշական է, որ հազվադեպ է ձեռնարկվել վարչակազմի խնդիրների ուսումնասիրություն: Վիվյենն իր 'Ակնարկներ վարչակազմի մասին' աշխատությունում այսպես է սահմանել նրա խնդիրները. 'Վարչակազմը պետության մարմնավորումն է և հասարակական կյանքը կարգավորում է՝ ելնելով սեփական շահերից: Դա իշխանության մշտարթուն, ամենատես, յուրաքանչյուր շարժմանը հետևող աչքն է: Վարչակազմը ղեկավարում է ընդհանուր գործերը և, խնամակալի իրավունքով, միջամտում տեղական գործերի կառավարմանը...': Տալով նման սահմանում՝ հեղինակը չի փորձում բացահայտել վարչակազմի խնդիրները, այլ գլխավորապես ուսումնասիրում է նրա միջոցները և կազմակերպական կառուցվածքը: Շատ հեղինակներ այսօր էլ են նման մոտեցում ցուցաբերում: Նրանք շարունակում են ուշադրությունը բնեռել կամ հարցի կազմակերպական կողմին և (կամ)՝ աշխատանքի մեթոդներին: Երկու դեպքում էլ վարչակազմի խնդիրների սահմանումը համարվում է, կարծես, ինքնին հասկանալի: Պնդում են, թե հիմնականում կարևոր է վերլուծել հիմնախնդրի կազմակերպական և մարդկային գործոնները:

Դասական շրջանի ամերիկյան հեղինակները (մասնավորապես Լեոնարդ

Դ. Ուայթը), կառավարման խնդիրները բաժանում էին երեք խմբի: Դրանց կատարումն ապահովվում էր ինքնուրույն վարչական ստորաբաժանումներով՝

'գծային ստորաբաժանումներ'՝ գործառության խնդիրներ,

‘օժանդակ ստորաբաժանումներ’ օժանդակ խնդիրներ,

‘շտաբային ստորաբաժանումներ’ ղեկավարման խնդիրներ:

Հիմնականը՝ կառավարման գործառույթային խնդիրներն են: Դրանք վերաբերում են, օրինակ՝ պետական ինքնիշխանության (պաշտպանություն, հասարակական կարգի պահպանում) իրականացման հետ կապված, ինչպես նաև կրթության, սոցիալական ծառայության (առողջապահություն, սոցիալական ապահովություն), տնտեսական գործունեության ոլորտների խնդիրներին: Դրանց օգնությամբ վարչակազմը հասարակությանն ուղղակիորեն ապահովում է այն ամենով, ինչը նրան անհրաժեշտ է:

Օժանդակ խնդիրները կոչված են նպաստել գլխավոր խնդիրների կատարմանը, սակայն այն անձինք, ովքեր դրանք իրականացնում են, լայն հասարակայնության հետ անմիջականորեն չեն շփվում, այլ միայն ապահովում են վարչական միավորների աշխատանքը՝ կադրերի, գույքի կառավարումը, բյուջեի և հաշվետվությունների կազմումը, փաստաթղթերի մշակումը, իրավական ծառայությունը և այլն:

Հրամայական կամ շտաբային գործառույթներն իրականացվում են քաղաքական իշխանության հետ սերտ համագործակցմամբ: Դրանց բովանդակությունը՝ վարչական միավորների անմիջական ղեկավարումն է ու ծառայությունների քաղաքական ուղեգծի մշակումը:

Իրականացված վերլուծությունը հիմնախնդրի հայեցակարգային մշակման տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում: Բացի այդ, թեև տվյալ հայեցակետը դարձել է դասական, սակայն թերությունն այն է, որ չափազանց սերտորեն է կապված կառավարման կազմակերպման հետ, մի հանգամանք, որը խոչընդոտում է վարչակազմի խնդիրների տեսական սահմանումը:

Որոշումների ընդունման գործընթացի տեսանկյունից հետաքրքիր հնարավորություններ է բացում տարածքային կառավարման խնդիրների վերլուծությունը:

Ելնելով այն կանխադրությից, թե վարչակազմի դերը միշտ երկրորդային է, վարչակազմի բոլոր հիմնական խնդիրները, կարծում ենք, կարելի է խմբավորել.

ա) տեղեկությունների հավաքում. տարածքային կառավարումը կոչված է նախապես իրականացնել այդ առաջին խնդիրը: Այն ելակետ է կառավարչական հետագա գործունեության, ինչպես նաև մարզերում կառավարության քաղաքականության մշակման համար: Արդյոք ինքնաբերաբաժնի են տրամադրվում տեղեկությունները, թե հավաքվում են հանրային իշխանությունների պահանջով, շոշափում են կառավարվողների մասնավոր կարիքները, թե անհրաժեշտ են խոշոր բարեփոխումներ իրականացնելու համար, անկախ այդ ամենից, դրանք կազմում են ցանկացած մակարդակի կառավարչական գործունեության հիմքը: Անկասկած, պետք է գոյություն ունենան տեղեկատվության որոնման և հավաքման մասնագիտացված ծառայություններ, բայց և դրանցից անկախ, բոլոր կառավարչական հիմնարկները, գործելուց առաջ, սկսում են տվյալներ հավաքել,

բ) ուսումնասիրություն. այս փուլն անպայման հաջորդում է տեղեկատվության հավաքմանը և նախորդում որոշման ընդունմանը, անկախ նրանից՝ ընդհանուր, թե՛ մասնավոր հիմնախնդրի մասին է խոսքը: Նշենք, որ ուսումնասիրությունը նաև մարզերում՝

կենտրոնի քաղաքականությունը որոշող կարևոր գործոն է: Այս դեպքում էլ կարող են ստեղծվել մասնագիտացված մարմիններ (ուսումնասիրող հանձնաժողովներ, հետաքննող կոմիտեներ, օրենսդրական բյուրոներ), սակայն այս կամ այն չափով նշված ոլորտը մշտապես առկա է տարածքային կառավարման կողմի առջև ծառայած խնդիրների լուծման գործընթացում,

զ) որոշումների նախապատրաստում. բուն որոշումը կարևոր դեպքերում կայացվում է քաղաքական իշխանության մարմինների կողմից: Մյուս բոլոր դեպքերում կառավարման մարմինները գործում են ինքնուրույնաբար, սակայն քաղաքական իշխանության կողմից լիազորություններ ստանալու պարագայում (մենք կողմնակից ենք, որպեսզի մարզպետները դիտվեն որպես տեղերում քաղաքական իշխանության ներկայացուցիչներ, այլ ոչ թե պարզապես կառավարող աստիճանավորներ): Բայց, դրա փոխարեն, որոշումների նախապատրաստումը մշտապես դրվում է կառավարման մարմինների վրա, ինչը և պայմանավորում է որոշումների ընդունման գործընթացի ուսումնասիրության կարևորությունը,

դ) կատարում & կիրառում. սրանք տարածքային կառավարման կարևոր խնդիրներն են, քանի որ հենց այստեղ է, որ վերջինս անմիջականորեն շփվում է մարդկանց հետ: Կատարումը և կիրառումն իրականացնելիս բոլոր նախորդող գործընթացներն անվերջ կրկնվում են նույնիսկ այն դեպքում, երբ վարչակազմի միջամտությունը հասցված է նվազագույնի:

Հավանաբար, լուծելով մասնավոր դեպքի նկատմամբ ընդհանուր լուծում կիրառելու խնդիրը, տարածքային կառավարման մարմինն երբեմն ստիպված է լինում շեղվել ընդունված որոշման ընդհանուր սահմաններից: Նման հանգամանքներում վարչական և մունիցիպալ իրավունքը պարտավոր են վերականգնել խախտված իրավական նորմը, իսկ այն դեպքերում, երբ շեղումները կատարվել են ընդունված որոշման առավել արդյունավետության նկատառումներով, դրանք դառնում են պետական և մունիցիպալ կառավարում գիտության ուսումնասիրության առարկա:

Գլխավոր խնդիրների հետ մեկտեղ, տարածքային կառավարումն իր վրա է վերցնում նաև (և գնալով ավելի ու ավելի) ածանցյալ հարցեր, օրինակ՝ բնակչության իրազեկումը, հասարակայնության հետ կապերի կազմակերպումը, և այդ նպատակով իսկ օգտագործվում են աշխատանքի նոր մեթոդներ և ստեղծվում հատուկ ծառայություններ: Սակայն այդ ածանցյալ գործառույթները չեն նսեմացնում հիմնական խնդիրների նշանակությունը:

4. Տարածքային կառավարման մարմինների գործառույթները

4.1. Տարածքային կառավարման մարմինների գործառույթների հասկացությունը:

4.2. Տարածքային կառավարման մարմինների գործառույթների դասակարգումը:

Տարածքային կառավարման մարմինների գործառույթների էության ըմբռնումը բխում է տարածքային կառավարման էությունից: Կառավարման գործառույթը կառավարվող երևույթի, հարաբերության, վիճակի վրա իրական, ուժային, նպատակամետ, կազմակերպչական և կարգավորիչ ազդեցությունն է:

Կառավարման գործառնությունների առարկան մատնանշում է հասարակական համակարգի՝ պետության (նրա մարմինների) կառավարող ազդեցությանը ենթակա կողմերը, ասպեկտները և դրսևորումները: Կառավարման գործառնությունների բովանդակությունն արտահայտում է կառավարող ներգործության իմաստն ու բնույթը: Իրագործման եղանակը բացահայտում է տվյալ գործառնություն ներառված կառավարչական փոխադարձ կապերի պահպանման կամ վերափոխման միջոցները (հնարավորությունները): Կարգավորման գործառնություն դա մարդկանց միջև հարաբերությունների կարգավորման ունակությունն է՝ նրանց գիտակցության, վարքագծի և գործունեության վրա ներագդելու միջոցով:

Ըստ հարաչափերի յուրահատկության՝ տարածքային կառավարման մարմինների գործառնություններն ստորաբաժանվում են տեսակների:

Ինչպես հայտնի է, պետությունը բնութագրվում է մարմինների բարդ աստիճանակարգմամբ, որի հետևանքով անհրաժեշտ է կառավարել հենց այդ կառավարող համակարգը, ինչը, երբեմն ոչ պակաս դժվար է, քան պետական մարմինների կողմից կառավարվող օբյեկտների կառավարումը: Դրանով իսկ, կախված ներգործության ուղղվածությունից և տեղից, կարելի է առանձնացնել կառավարման ներքին և արտաքին գործառնությունները:

Կառավարման ներքին գործառնությունները մարմնավորում են կառավարումը պետական կառավարման համակարգի ներսում: Դրանց գոյությունը պայմանավորված է տարածքային կառավարման օղակի՝ որպես կառավարման սուբյեկտի, բազմամակարդակ և բազմաբաղադրիչ կառուցվածքով, դրա ենթահամակարգերի և օղակների գործողությունների կարգավորման և ակտիվացման հրատապությամբ: Այդ գործառնությունների նպատակային կողմնորոշումը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ներքին կառույցի հաղորդվի կառավարման հարաշարժություն (դինամիկա) և օրինականություն, որպեսզի այն կատարելագործվի և զարգանա, փոխակերպվի կառավարման գործընթացում հասարակական պահանջունքներին համապատասխանող վիճակի:

Կառավարման արտաքին գործառնությունները բնութագրում են անմիջականորեն հասարակական գործընթացների (կառավարվող օբյեկտների) տարածքային կառավարման մարմինների ներգործության գործընթացը: Գրանցում են տարածքային կառավարման հիմնական իմաստն ու բովանդակությունը, նրա հասարակական նշանակությունը: Պետական մարմինների կառավարման արտաքին գործառնությունների համակարգը բնութագրվում է, մի կողմից՝ պետության կազմակերպական կառուցվածքի ուղղահայաց և հորիզոնական կառույցով, իսկ մյուս կողմից՝ կառավարվող տարբեր օբյեկտների գործունեության նպատակների և բովանդակության առանձնահատկություններով:

Ըստ ներգործության բովանդակության բնույթի և ծավալի չափանիշի՝ կառավարման գործառնությունները լինում են ընդհանուր և հատուկ:

Ընդհանուր են կառավարման այն գործառնությունները (ներքին և արտաքին), որոնք արտացոլում են պետական կառավարման էական պահերը, նրա հիմնական, օբյեկտիվորեն անհրաժեշտ փոխադարձ կապերը: Կառավարման այդ գործառնությունները գործնականորեն

առկա են պետական մարմինների միջև, ինչպես նաև նրանց և կառավարվող օբյեկտների միջև կառավարչական ցանկացած փոխգործակցության մեջ և բնորոշ են պետական կառավարման սուբյեկտի բոլոր բաղադրիչների գործունեությանը:

Ընդհանուր գործառնությունների թվում գիտական գրականության մեջ նշվում են տարբեր գործառնություններ. Ռոբերտ Մ. Ֆալմերը գրում է պլանավորման, կազմակերպման, կատարման, վերահսկողության մասին, Կ. Կիլենն առանձնացնում է պլանավորումը, կազմակերպումը, ղեկավարումը, դրդապատճառները, վերահսկողությունը, Գ.Կունցը, Ս. Օ. Դոնելը՝ պլանավորումը, կազմակերպումը, հաստիքների համալրումը, ղեկավարումը և առաջնորդումը : Հատկանշական է, որ կառավարմանը նվիրված գրեթե յուրաքանչյուր գիտական աշխատությունում կառավարման գործառնությունների դիտարկումն սկսվում է պլանավորման գործառնությից, ինչը վկայում է արդիականության և անհրաժեշտության անվերապահ ճանաչումը: Կարծում ենք, որ ըստ գործողությունների բնույթի և հաջորդականության՝ կառավարման ընդհանուր գործառնությունների շարքին նպատակահարմար է դասել հետևյալները. կազմակերպում, պլանավորում, կարգավորում, կադրային ապահովում, վերահսկողություն:

Այս կամ այն գործընթացի կառավարումը սովորաբար սկսվում է նրանից, որ այն առանձնացվում է որպես որոշակի գոյացություն, որին հաղորդվում է հրատապ նպատակների իրագործման հետ կապված համապատասխան կազմակերպում: Եթե չկա ընդհանուր նպատակով միավորված մարդկանց կազմակերպություն, ապա պլանավորելու բան էլ չի կարող լինել, քանի որ պլանավորումը դեպի տվյալ կազմակերպության առջև դրված նպատակները տանող ուղիների չափանշումն է: Երբ կազմակերպությունն ստեղծված է և առկա են դրա սոցիալական ակտիվության պլանները, առաջանում է կազմակերպության շրջանակներում կարգավորման և նախատեսված պլանային հարաչափերին համապատասխան նրա յուրաքանչյուր անդամի վարքագծի և գործելակերպի կանոնների սահմանման անհրաժեշտություն: Կազմակերպության նպատակներից, դրանց իրագործմանը նպատակաուղղված պլաններից և վարքագծի ու գործելակերպի նորմերից բխող պահանջներին համապատասխան ընտրվում է նախանշվածն իրականացնելու ունակ անձնակազմ: Ձևավորվում է կառավարման հարաշարժությունը (դինամիկան), որը մշտապես պետք է վերահսկվի: Կառավարման բոլոր նշված ընդհանուր գործառնությունները կարելի է ներկայացնել նաև այլ հաջորդականությամբ, քանի որ դրանց դասավորությունը թելադրվում է կառավարչական կոնկրետ իրադրությամբ:

Կառավարման հատուկ գործառնությունն արտացոլում են առանձին ներգործությունների հատուկ բովանդակությունը, որը պայմանավորված է կառավարման ընթացքում բազմաթիվ փոխգործակցող բաղադրիչների բազմազանությամբ: Որպես կանոն, դրանք իրագործվում են տարածքային կառավարման առանձին ոլորտներում, ճյուղերում կամ հատվածներում և հիմնականում պայմանավորված են կառավարող օբյեկտների պահանջներով: Կարելի է առանձնացնել կառավարման յուրահատուկ գործառնությունների ենթախմբեր՝ ըստ կառավարվող օբյեկտների տեսակների, քանի որ տնտեսական օբյեկտների կառավարումը պահանջում է բոլորովին այլ ներգործություններ, քան հոգևոր օբյեկտների

կառավարումը և այլն: Կառավարման նույնիսկ այնպիսի յուրահատուկ գործառույթներ, ինչպիսիք են՝ ֆինանսավորումը, հարկումը, լիցենզավորումը, աշխատանքի և աշխատավարձի կարգավորումը, վարկավորումը և այլն, կառավարվող օբյեկտների յուրաքանչյուր տեսակում և համապատասխան յուրաքանչյուր կառավարվող ենթահամակարգում գտնում են իրենց կոնկրետ անդրադարձը: Առևտրային և բյուջետային կառուցվածքները չի կարելի ֆինանսավորել միևնույն ձևանմուշով: Կառավարման յուրահատուկ գործառույթների հատուկ ենթախումբ են կազմում տարածքային կառավարման մարմինների կառավարչական ներքին գործառույթները՝ օրինականության ապահովումը, ծառայողների պատրաստումը և նրանց որակավորման բարձրացումը, համակարգչավորումը, տեղեկատվական ապահովումը և այլն :

Գլուխ 5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՉԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տարածքային կառավարման ենթակայությունը քաղաքական իշխանությանը և այդ ենթակայության սահմանները:

Քաղաքական իշխանությունը և տարածքային կառավարումը սերտորեն կապված են միմյանց հետ, սակայն երբեք չեն նույնացվում: Լայն իմաստով քաղաքական իշխանության գործառույթը նախաձեռնությունն է, գնահատումը, դեկլարումը և խորհուրդը: Այլ կերպ ասած՝ քաղաքական իշխանությունը գլուխն է, իսկ կառավարում իրականացնող մարմինները՝ վարչակազմը՝ ձեռքերը:

Ինչպես կենտրոնական, այնպես էլ՝ տարածքային կառավարման մարմինները քաղաքական իշխանության նկատմամբ պետք է ստորադաս վիճակում գտնվեն: Հակառակ իրավիճակը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունում հաստատվել է այսպես կոչված՝ կառավարչական ամբողջատիրություն: Նման դեպքերը հաճախ հանդիպում են ժամանակակից աֆրիկյան և լատինաամերիկյան երկրներում: Դրանցից շատերում թեև սահմանադրությամբ հռչակվում են իշխանությունների տարանջատման, քաղաքական բազմակարծության, ազատ ընտրությունների և այլ ժողովրդավարական ինստիտուտներ, սակայն իրականում ողջ իշխանությունը կենտրոնացված է միանձնյա (ցմահ պրեզիդենտի) կամ էլ կոլլեգիալ (իսպ. խունտա բառացի նշանակում է ժողով, միավորում) բռնակալների ձեռքում: Պետության և հասարակության համար շատ ավելի վտանգավոր է, երբ քաղաքական իշխանությամբ են օժտվում կառավարման առանձին բաղադրիչներ: Միջնադարյան ավատատիրական հասարակարգի բոլոր պետություններում քաղաքական իշխանության կենտրոնացումը առանձին կառավարչական ինստիտուտների ձեռքում նախ բերեց այդ պետությունների փաստացի տրոհմանը առանձին ինքնիշխան իշխանությունների, իսկ հետո այդ տրոհումն իրավաբանորեն ամրագրվեց:

Ներկայումս քաղաքական իշխանությունը ճանաչվում և սահմանադրորեն ամրագրվում է որպես ժողովրդի կողմից իր իշխանության իրականացումը անմիջականորեն

կամ էլ ընտրովի մարմինների միջոցով: Ուստի կառավարչական գործունեության ենթարկվածությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ վարչակազմը, որպես կառավարման օբյեկտ, քաղաքական պարտականություն ունի ենթարկվելու քաղաքական իշխանությանը, այլև այդ պարտականությունը իրավական ամրագրման ուժով նաև իրավական բնույթ ունի:

Հարկ է նշել, որ նման ենթարկվածությունը միաժամանակ կառավարչական գործունեության բարոյական պարտքն է: Եթե իշխանությունը բխում է ժողովրդից և պատկանում է նրան, ապա կառավարման գործառույթները կոչված են կազմակերպելու և իրականացնելու ժողովրդի կամքը և շահերը, այլ ոչ թե կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կամայական ցանկությունները: Իսկ եթե ստացվի այնպես, որ քաղաքական իշխանության փոխարեն կարևոր որոշումները կայացնում է վարչակազմը, ապա դա նշանակում է, որ պարտականությունները և գործառույթները սխալ են բաշխված: Վարչական աշխատողը քաղաքականության մշակմամբ չպետք է զբաղվի: Նա առաջին հերթին պարտավոր է իր գործառույթներն իրականացել՝ պահպանելով լիակատար չեզոքություն: Այսինքն՝ նա կրում է վերադասի ցուցումները և հանձնարարականները անվերապահ կերպով կատարելու առաքելությունը: Ելնելով այս իրողությունից՝ Քաղաքացիական ծառայության մասին՝ ՀՀ օրենքի 23 հոդվածն ամրագրում է, որ քաղ. ծառայողի հիմնական պարտականություններից մեկն էլ վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տրված հանձնարարականները և ընդունած որոշումները կատարելն է (1 մաս, դ) կետ): Ընդ որում նույն օրենքի 25 հոդվածի համաձայն քաղ. ծառայողը պարտավոր է կատարել նաև վերադասի այն հանձնարարականները և ընդունած որոշումները, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին, կամ եթե նույնիսկ դրանք հանձնարարական տվողի և կատարողի լիազորությունների շրջանակից դուրս են: Որպես բացառություն նշվում են այն դեպքերը, երբ հանձնարարականների կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրությամբ սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության: Մինևնույն ժամանակ քաղ. ծառայողին երաշխավորելու նպատակով հոդվածում նշվում է, որ քաղ. ծառայողի կողմից այդ հանձնարարականի կատարման համար պատասխանատվությունը կրում է հանձնարարականը գրավոր հաստատած անձը:

Փաստորեն միայն քաղաքական իշխանությունը ժողովրդի անունից իրականացնող պաշտոնատար անձինք (ՀՀ՝ Նախագահ, վարչապետ, նախարար, պատգամավոր) և պետական մարմիններն (Կառավարություն, Ազգային ժողով) են իրավասու քաղաքական որոշումներ ընդունել և դրանց համար քաղաքական, իսկ առանձին դեպքերում նույնիսկ՝ իրավական պատասխանատվություն կրել:

Մինչդեռ վարչակազմի ծառայողի խնդիրները վերադասի հրամանի բարեխիղճ և անվերապահ կատարումն է, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ հրամանը թվում է անհեթեթ և անօրինական: Ընդ որում այդ հրամանը պետք է կատարվի նույն բարեխիղճությամբ, կարծես այն համընկնում է սեփական համոզմունքներին: Այսպիսի կարգապահության խախտման դեպքում աշխատակազմի գոյությունը կորցնում է իր իմաստը:

Սակայն վարչակազմի ենթարկումը քաղաքական իշխանությանը ամենևին չպետք է նշանակի վարչակազմի քաղաքականացում: Քաղաքականացված վարչակազմը բնորոշ է ավտորիտար վարչակարգերին: Դրանցում վարչակազմի նկատմամբ իշխանությունն ապահովվում է ոչ թե կառավարման աստիճանակարգային համակարգի, այլ առավելապես վարչակազմի աշխատակիցների, նրանց ղեկավարների անձնական, կլանային, կուսակցական քաղաքական հավատարմության կապերով: Վարչակազմի աշխատողների և ղեկավարների այդպիսի քաղաքականացումը կարող է տարբեր ձևեր ընդունել՝ հավատարմության երդում, անդամակցությունը միակ կուսակցությանը: Կարող են լինել նաև այլ՝ համեմատաբար նոր ձևեր՝ ղեկավար պաշտոններում (օրինակ՝ աշխատակազմի ղեկավար, վարչության, բաժնի պետ) իշխող կուսակցությունների ներկայացուցիչներին նշանակելը, կառավարչական աշխատակազմում քաղաքական տեղեկատվության հավաքման, քաղաքական վերահսկողության նպատակով կազմակերպություն ստեղծելը և այլն:

Դրան հակառակ, ժողովրդավարական վարչակարգերում քաղաքականացումը մերժվում է, և որպես կանոն, կառավարչական աշխատակազմը դրսևորում է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ինչպես իշխող, այնպես էլ՝ ընդդիմադիր կուսակցության նկատմամբ: Այսպես՝ Քաղաքացիական ծառայության մասին՝ ՀՀ օրենքի 5 հոդվածով որպես քաղ. ծառայության հիմնական սկզբունք է ճանաչվում քաղ. ծառայողների քաղաքական զսպվածությունը, իսկ 24 հոդվածով ուղղակի ամրագրված է, որ քաղ. ծառայողն իրավունք չունի իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական, միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել:

Մինևույն ժամանակ հասկանալի է, որ վարչական բարձրագույն պաշտոններում բնականաբար կատարվում է քաղաքականության և կառավարման համատեղում: Տարածքային կառավարման մակարդակում այդպիսի ինստիտուտ է մարզպետի պաշտոնը: Այդ պատճառով էլ ցանկալի է, որպեսզի կառավարման ղեկավար հանձնարարականները կատարող վարչական պաշտոնյաները անմիջական շփումներ և կախվածություն ունենան քաղաքական իշխանությունից, բայցև միաժամանակ նրանց նշանակումը և ազատումը կայունության որոշակի երաշխիքներով ապահովված լինի:

Այս կապակցությամբ Քաղաքացիական ծառայության մասին՝ ՀՀ օրենքով (3 հոդվ., 3 կետ) մարզպետի պաշտոնը ճանաչվում է հայեցողական պաշտոն: Իսկ նույն հոդվածի 1 կետի ժդ) ենթակետի համաձայն հայեցողական է համարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվող պաշտոնը, որն զբաղեցնող պաշտոնատար անձը, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը, կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

ՀՀ մարզերում պետական կառավարման մասին՝ ՀՀ նախագահի հրամանագրի 1.5 կետով նախատեսվում են մարզպետի և կառավարության միջև փոխհարաբերակցության մի

շարք ուղղություններ: Այսպես՝ մարզպետը խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, մասնակցում է պետական բյուջեի նախագծի և տարածքային քաղաքականության մշակման գործընթացներին, վարչապետի և կառավարության քննարկմանն է ներկայացնում նրանց իրավասությանը վերաբերող և մարզին առնչվող հարցեր և այլն:

Մարզպետի կախվածությունը քաղաքական իշխանությունից դրսևորվում է նրանում, որ մարզպետին նշանակում և ազատում է կառավարությունը (Երևանի քաղաքապետին՝ վարչապետի ներկայացմամբ ՀՀ նախագահը): Բացի այդ, մարզպետը ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն՝ իր գործունեության և մարզի ընդհանուր սոցիալտնտեսական վիճակի մասին, ընթացիկ հաշվետվություններ ներկայացնում վարչապետին:

Ակնհայտ է, որ այդպիսով կատարվում է քաղաքական իշխանության և վարչակազմի՝ ի դեմս մարզպետի, համատեղում: Բոլոր դեպքերում նույնիսկ ազդեցիկ վարչակազմը չի կարող քաղաքական իշխանությանը պարտադրել իր պահանջները:

2. Տարածքային կառավարման «անկախությունը» քաղաքական իշխանությունից

Վարչակազմի ենթարկվածությունը քաղաքական իշխանությանը, որքան էլ տարօրինակ թվա, գործնական կյանքում հաջողությամբ զուգակցվում է վարչակազմի անկախության հետ: Ակնհայտ է, որ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները (իրավունքներն ու պարտականությունները) արդյունավետ իրականացնելու համար վարչակազմը պետք է օժտված լինի որոշակի նախաձեռնության և ինքնուրույն գործունեություն իրականացնելու հնարավորությամբ:

Մեր հանրապետությունում այս ուղղությամբ կատարված հսկայական առաջընթաց պետք է համարել՝ Քաղաքացիական ծառայության մասին՝ ՀՀ օրենքի և ընդհանրապես պետական ծառայության մասին օրենսդրության ընդունումը:

Մասնավորապես՝ Քաղաքացիական ծառայության մասին՝ ՀՀ օրենքով հստակ իրավական կարգավորման ենթարկվեցին ՀՀ-ում քաղ. ծառայության հիմնական սկզբունքների, քաղ. ծառայության պաշտոնների դասակարգման և քաղ. ծառայության դասային աստիճանների, պաշտոններում նշանակման և ազատման, ատեստավորման և վերապատրաստման, քաղ. ծառայողների իրավական վիճակի և դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Արդյունքում ներկայումս ձևավորվել և կյանքի են կոչվում քաղ. ծառայության անկախության երաշխիքները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբերի.

1) ծառայողների նկատմամբ քաղաքական իշխանության միջամտությունը կարող է արտահայտվել միայն օրենսդրության շրջանակներում,

2) ծառայողները իրենց համոզմունքների, քաղաքական կողմնորոշման համար կամ այլ խտրականության հիմքերով չեն կարող ազատվել պաշտոնից,

3) արդյունքում հաստատվում է աշխատակազմի գործունեության որոշակի հաջորդայնություն, որը գրեթե բացառում է ժամանակավոր քաղաքական գործընթացների ազդեցությունը աշխատակազմի բնականոն, օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում ծրագրավորված գործունեության նկատմամբ:

Ելնելով նշվածից՝ Քաղաքացիական ծառայության մասին՝ ՀՀ օրենքի 3 հոդվածով սահմանվում է, որ քաղաքացիական ծառայությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն է, որն իրականացվում է համապատասխան պետական մարմիններում վերջիններիս վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացման նպատակով: Բացի այդ օրենքի 5 հոդվածում ամրագրված քաղ. ծառայության հիմնական սկզբունքները, իրենց արտացոլումն են գտել օրենքի կոնկրետ դրույթներում՝ կայուն երաշխիքներ ստեղծելով քաղ. ծառայության համար: Այդպիսի սկզբունքներից են՝ քաղ. ծառայության կայունությունը, հրապարակայնությունը, քաղաքական զսպվածությունը, իրավահավասարությունը և այլն:

Իր պրոֆեսիոնալիզմի, որոշակի տեղեկություններին իրազեկության և չեզոքության շնորհիվ քաղ. ծառայողը ընդունելի է ցանկացած նոր կազմավորվող վարչակարգին, քանի որ հանդիսանում է սուսկ կառավարման կառուցակարգի գործառույթների իրականացումն ապահովող տարրերից մեկը:

Փաստորեն վարչակազմի անկախությունը քաղաքական իշխանությունից դիտարկվում է բացառապես գործառույթների մակարդակով: Սա թույլ է տալիս քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում ապահովել կառավարման ընթացիկ խնդիրների անխափան իրագործումը, ինչպես նաև կադրային քաղաքականության իրականացումը բացառապես մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների չափանիշի հիման վրա:

Գլուխ 6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Մարզպետը որպես կառավարության ներկայացուցիչը մարզում:

Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման ոլորտի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ (7 Գլխով), օրենքներով («Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչատարածքային բաժանման մասին» և ՀՀ այլ օրենքներով), «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի թիվ ՆՇ728 հրամանագրով և այլ իրավական ակտերով:

Պետական կառավարումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

Պետական կառավարումը մարզերում իրականացվում է համապետական և տեղական շահերի ներդաշնակման, ինչպես նաև մարզպետների և կառավարման բարձրագույն մարմինների ու վերջիններիս տարածքային ծառայությունների համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա:

Պետական կառավարումը մարզերում իրականացնում է մարզպետը: Մարզպետը պաշտոնում նշանակվում և ազատվում է ՀՀ կառավարության կողմից: Մարզպետը հաշվետու և պատասխանատու է կառավարության առջև (հրամանագրի 1.7. կետ):

Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

- ֆինանսներ,
- քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն,
- տրանսպորտ և ճանապարհաշինություն,
- գյուղատնտեսություն և հողօգտագործում,
- կրթություն,
- առողջապահություն,
- սոցիալական ապահովություն
- մշակույթ և սպորտ,
- բնության և շրջակա միջավայրի պահպանություն
- առևտուր, հանրային սնունդ և սպասարկում:

Տարածքային քաղաքականությունը նշված բնագավառներում մարզպետն իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով:

Մարզպետը համակարգում է ներքին գործերի և ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Մարզում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը, մարզպետին օրենսդրությամբ վերապահված իրավասության սահմաններում, ընդգրկում է՝

- ա) հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզպետարանի աշխատակազմի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության կազմակերպումը,
- բ) մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված կարգով տեղեկատվության ստացումը,
- գ) այլ լիազորությունների իրականացումը:

Հրամանագրի 1.4. կետի համաձայն մարզերում պետական կառավարումն իրականացվում է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, ինչպես նաև

մարզպետների և հանրապետական գործադիր մարմինների ու վերջիններիս տարածքային ծառայությունների համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա:

- Մարզպետը մասնավորապես իրականացնում է հետևյալ կարևոր գործառնությունները՝
- ա) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը,
 - բ) խորհրդակցական ձևերի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին,
 - գ) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի միջոցով կառավարության և վարչապետի քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերը,
 - դ) համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերը,
 - ե) սահմանված կարգով նախապատրաստում և առաջարկություններ է ներկայացնում կառավարություն՝ մարզում պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ,
 - զ) սահմանված կարգով մասնակցում է պետական բյուջեի նախագծի, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին,
 - է) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն՝ իր գործունեության և մարզի ընդհանուր սոցիալտնտեսական վիճակի մասին, ընթացիկ հաշվետվություններ է ներկայացնում վարչապետին,
 - ը) պարտադիր քննության է առնում հանրապետական գործադիր մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի, կառուցվածքային ստորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքի վերաբերյալ առաջարկությունները և սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում ձեռնարկված միջոցների մասին,
 - թ) ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան՝ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կառավարություն,
 - ժ) իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների իրավունքները և ազատություններն ապահովելու համար,
 - ժա) օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների՝ օրենսդրությանը հակասող իրավական ակտերը,
 - ժբ) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ,
 - ժգ) օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրամադրում է լիցենզիաներ (հանվել է, 16.03.02թ. թիվ ՆՀ1065 հրամանագրով)

ժդ) սահմանված կարգով տեղեկություններ է տալիս համապատասխան հանրապետական գործադիր մարմնին իր կողմից տվյալ բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման վերաբերյալ,

ժե) օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկում է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտագիր լիազորությունների կատարումը,

ժզ) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

ժէ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանի աշխատակազմում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին:

1.1. Մարզպետի իրավական վիճակը:

Ցանկացած սուբյեկտի իրավական կարգավիճակը նրա իրավունքների ու պարտականությունների, երաշխիքների և սահմանափակումների ամբողջությունն է: Մարզպետի հանրային ծառայության պաշտոնների համակարգում համարվում է հայեցողական պաշտոն: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4րդ հոդվածի 6րդ կետի համաձայն «Հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում»: Նույն հոդվածի 7րդ կետով թվարկված են բոլոր հայեցողական պաշտոնները, որոնց թվում նաև մարզպետի, նրա տեղակալների, մարզպետի խորհրդականների և մամուլի քարտուղերների պաշտոններն են:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5րդ Գլխի նորմերով (2027րդ հոդվածներ) սահմանվում են հանրային ծառայողների իրավական վիճակի հիմունքները, որոնք հավասարապես վերաբերվում են նաև մարզպետի ինստիտուտին, այնքանով, որքանով չեն հակասում այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

Մարզպետի կարգավիճակը փորձենք պարզաբանել հայեցողական պաշտոնի հասկացության սահմանման մեջ առկա դրույթների մեկնաբանության շրջանակներում:

1. (նշանակովիությունը) ՀՀ Սահմանադրության 88.1.րդ հոդվածի համաձայն մարզպետին պաշտոնում նշանակում և ազատում է ՀՀ կառավարությունը համապատասխան որոշման ընդունմամբ: Այս պաշտոնի կարևորությունից ելնելով՝ նույն հոդվածով սահմանվում է, որ ՀՀ կառավարության այդ որոշումները վավերացվում են ՀՀ նախագահի կողմից:

2. (վերապահված լիազորությունների շրջանակը) Սահմանադրության 88.1.րդ հոդվածով սահմանվում է մարզպետի գործունեության հիմնական ուղղությունները՝ կառավարության տարածքային քաղաքականության իրագործումը և գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը: Ինչ վերաբերվում է

կոնկրետ ոլորտներին ու դրանց առնչվող լիազորություններին, ապա դրանք մանրամասնվում են «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» Հանրապետության նախագահի հրամանագրով:

3. (որոշումներ ընդունելու և դրանց կատարումը համակարգելու իրավասությունը) Մարզպետն իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, անշուշտ, որոշումներ ընդունում է, որոնք բացառապես ենթաօրենսդրական բնույթ ունեն: Մակայն մարզի տարածքում պետական քաղաքականությունը սահմանելու բացառիկ իրավասությունը վերապահված է կառավարությանը՝ Սահմանադրության 85րդ հոդվածի համաձայն Հանրապետության ներքին քաղաքականությունը մշակում և իրականացնում է ՀՀ կառավարությունը: Ուստի մարզպետի որոշումներով կարգավորվում է դրա իրականացումը, ինչպես նաև դրա կատարման համակարգումը:

4. (պաշտոնի փոփոխելիությունը) Մարզպետի պաշտոնավարման ժամկետ օրենսդրությամբ չի նախատեսվում: Մակայն քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխման ժամանակ (ՀՀ նոր նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նոր կազմի ընտրությունը և ՀՀ կառավարության նոր կազմի ձևավորումը) մարզպետի պաշտոնավարության շարունակության հարցը որոշվում է դրա նշանակման լիազորություն ունեցող սուբյեկտների հայեցողությամբ՝ անկախ նախորդող ժամանակաշրջանում նրանց գործունեության արդյունավետությունից:

Վերը նշված հիմնական չափանիշներով է կանխորոշված մարզպետի իրավական կարգավիճակը՝ ՀՀ կառավարության, վարչապետի և այլ պետական մարմինների հետ փոխհարաբերությունների բնույթը, իսկ դրանով պայմանավորված նաև՝ լիազորությունների տեսակը, բնույթն ու շրջանակները:

Մարզպետը չի կարող լինել համայնքի ավագանու անդամ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի մանկավարժական, գիտական և ստեղծագործական աշխատանքից, և զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

1.2. Մարզպետին պաշտոնում նշանակման և ազատման կարգը:

Ինչպես վերը նշվեց, մարզպետին նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ կառավարությունը և այդ որոշումները վավերացվում են Հանրապետության նախագահի կողմից: Մարզպետների գործունեության ժամկետ օրենսդրությամբ չի նախատեսվում: Սովորաբար այն համընկնում է կառավարության գործունեության ժամանակահատվածի հետ, երբեմն՝ ավելի երկար, քանի որ այն հայեցողական պաշտոն է և քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունը մարզպետի լիազորությունների դադարեցման պարտադիր պայման չէ: Փաստորեն մարզպետը անմիջականորեն ենթակա չէ քաղաքական պատասխանատվության, սակայն նրա լիազորությունները Կառավարության հայեցողությամբ կարող են դադարեցվել նաև քաղաքական դրդապատճառներով: Մակայն

մարզպետը կարող է պաշտոնից ազատվել նաև իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժի հետևանքով:

1.3. Մարզպետի խրախուսման և պատասխանատվության միջոցները:

Հրամանագրի 1.61. և 1.62. կետերով սահմանվում են մարզպետի խրախուսման և կարգապահական տույժի տեսակները. «Պաշտոնեական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում մարզպետի կամ նրա տեղակալի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

- ա) նկատողություն,
- բ) խիստ նկատողություն,
- գ) պաշտոնից ազատում:

Պաշտոնեական պարտականությունները բարեխիղճ և օրինակելի կատարելու համար մարզպետի կամ նրա տեղակալի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման քի հետևյալ միջոցները՝

- ա) շնորհակալագրով պարգևատրում,
- բ) հուշանվերով կամ թանկարժեք նվերով պարգևատրում,
- գ) հուշամեդալով պարգևատրում:

Հրամանագրի 1.61րդ և 1.62րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը և խրախուսման քի միջոցները կիրառում են Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարը, իսկ 1.61րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պետական մարմինը կամ պաշտոնատար անձը:

1.4. Մարզպետի իրավական ակտերը:

Իր լիազորությունների կատարումն ապահովելու նպատակով՝ մարզպետն իր իրավասության սահմաններում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ընդունում է **որոշումներ և արձակում կարգադրություններ**, այդ թվում՝ նորմատիվ բնույթի ակտեր՝ ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով նախագահի հրամանագրերով, կառավարության վարչապետի որոշումներով **ուղղակի** նախատեսված դեպքերում և սահմաններում: Մարզպետներն ու Երևանի քաղաքապետը կարող են ընդունել միայն նորմատիվ կամ անհատական որոշումներ և կարգադրություններ՝ միայն անհատական բնույթի: Մարզպետի նորմատիվ իրավական ակտերը ենթաօրենսդրական են, ուստի դրանք ևս ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով (ՀՀ Սահմանադրության 6րդ հոդվածի 5րդ մաս):

Մարզպետի՝ օրենսդրությանը հակասող որոշումները և կարգադրությունները ուժը կորցրած են ճանաչվում երկու եղանակով՝ վարչապետի կամ դատարանի որոշմամբ:

Ընդ որում վարչապետի կողմից վերադասության կարգով կարող է կասեցվել կամ վերացվել մարզպետի ցանկացած որոշում՝ առանց հիմնավորման պահանջի, թեկուզ՝ նպատակահարմարության հիմքով:

Մինչդեռ դատական կարգով վերացման համար անհրաժեշտ պայմանը իրավական հակասությունն է այլ՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերից: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4րդ հոդվածի համաձայն ՀՀ իրավական ակտերի համակարգում մարզպետի որոշումներն ու կարգադրությունները ավելի ցածր իրավաբանական ուժ ունեն, քան օրինակ՝ նախարարի հրամանները, սակայն ավելի բարձր, քան համայնքի ավագանու և ղեկավարի որոշումները:

2. Մարզպետը և մարզպետարանը:

2.1. Մարզպետարանի կառուցվածքը:

2.2. Մարզպետարանի կազմակերպման և գործունեության հիմքերը:

Մարզպետն այն պաշտոնատար անձն է, որը մարզի տարածքում միանձնյա կերպով իրականացնում է պետական կառավարում: Այդ մասին անմիջականորեն նշվում է ՀՀ Սահմանադրության 88.1 հոդվածում:

Մարզպետին պաշտոնի է նշանակում և ազատում կառավարությունը: Ընդ որում սա միակ դեպքն է, երբ ՀՀ Նախագահի կողմից ՀՀ կառավարության որոշումների վավերացման պահանջը Սահմանադրությամբ պահպանվել է: Մարզպետը հաշվետու և պատասխանատու է կառավարության առջև:

Թեև ՀՀ Սահմանադրության 88.1 հոդվածի, ինչպես նաև «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրից բխում է, որ մարզպետը մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունը իրականացնում է միանձնյա կերպով, սակայն հասկանալի է, որ նրա գործունեությունը հնարավոր չէ առանց համապատասխան օժանդակ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ ՀՀ նախագահի 1997թ. թիվ ՆՉ728 հրամանագրի 1.7 կետով սահմանված է. Մարզպետը գլխավորում է մարզպետարանը, որի միջոցով իրականացնում է մարզում պետական կառավարումը:

Իսկ ինչ է իրենից ներկայացնում մարզպետարանը:

Սահմանադրության մեջ այս ինստիտուտն ընդհանրապես չի հիշատակվում, իսկ Նախագահի հրամանագրում թեև բազմիցս նշվում է դրա մասին, սակայն հասկացությունը պարզաբանվում է մեկ այլ իրավական ակտով: Այսպես, «Մարզպետարանի օրինակելի կանոնադրության մասին» ՀՀ կառավարության 02.05.2002թ. թիվ 18 արձանագրային որոշման 1 կետի 3 ենթակետի համաձայն ***մարզպետարանը կազմված է մարզպետից և մարզպետարանի աշխատակազմից: Մարզպետարանի համակարգում ընդգրկվում են պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնարկներ և մարզային ենթակայության այլ կազմակերպություններ:***

Մինչույն ժամանակ 1997թ. հրամանագրի 1.8. կետով սահմանվում է, որ մարզպետարանի գործունեությունն իրականացվում է Մարզպետի տեղակալի (տեղակալների), խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի և մարզպետարանի աշխատակազմի միջոցով: Փաստորեն ՀՀ օրենսդրության մեջ միասնական մոտեցում չի ձևավորվել այն հարցի շուրջ, թե ինչ ինստիտուտ է մարզպետարանը:

Փաստորեն թեև մարզպետի տեղակալները, օգնականները, խորհրդականները, մամուլի քարտուղարները մարզպետարանի ինստիտուցիոնալ կառույցի մեջ չեն մտնում, սակայն հենց դրանց և մարզպետարանի աշխատակազմի հավաքական աշխատանքի միջոցով էլ ապահովվում է մարզպետարանի գործունեությունը:

Մարզպետները ունեն տեղակալներ: Նրանք մինչև քաղ. ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգի հաստատումը պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում ՀՀ վարչապետի կողմից՝ մարզպետի առաջարկությամբ: Չնայած հրամանագրով հղում է կատարվում քաղ. ծառայության օրենսդրությանը, սակայն նշենք, որ այդ օրենսդրությամբ մարզպետի նշանակումը մրցույթի հետ չի կապվում, քանի որ վերջինս հայեցողական պաշտոն է:

Հաշվի առնելով մարզպետի և նրա տեղակալի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները և հատկապես նրանց լիազորությունները տարածքային կառավարման բնագավառում, հիշյալ հրամանագրերով նրանց արգելվում է լինել համայնքի ավագանու անդամ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք և զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Մարզպետի բացակայության ժամանակ տեղակալը փոխարինում է նրան, իրականացնում մարզպետարանի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները: Տեղակալը մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է նաև այլ լիազորություններ: Այսպես, մարզպետի տեղակալն ունի հետևյալ լիազորությունները՝

ա) համակարգում է մարզպետարանի աշխատանքները՝ մարզպետի կողմից իրականացվող քաղաքականության՝ իրեն հանձնարարված բնագավառում.

բ) իր լիազորությունների սահմաններում համակարգում է մարզպետին վերապահված բնագավառում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքները՝ տալով ցուցումներ և հանձնարարականներ.

գ) մարզպետարանի աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառի մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներին կոնկրետ հանձնարարականների ու առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

դ) մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է մարզպետի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

ե) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից իրականացվող աշխատանքների

մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

զ) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

է) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակումը և իրականացումը.

ը) մարզպետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իր կողմից համակարգվող բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

թ) ապահովում է իր կողմից համակարգվող բնագավառներում մարզպետի կարգադրությունների ու որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում մարզպետին.

ժ) մարզպետին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

ժա) մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

Ինչպես արդեն նշել ենք՝ Մարզպետն ունի նաև խորհրդական, օգնական և մամուլի քարտուղար, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է անձամբ մարզպետը: Մարզպետի խորհրդականին, մամուլի քարտուղարին և օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետը: Սրանք քաղաքացիական ծառայության պաշտոններ չեն: Այդ իսկ պատճառով ի տարբերություն քաղ. ծառայության պաշտոնների, վերջիններս չեն համալրվում մրցութային կարգով: Մարզպետի խորհրդականների, օգնականների և մամուլի քարտուղարի պաշտոնները և թվաքանակը սահմանվում է մարզպետարանի կանոնադրությամբ:

Մարզպետը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատմանն է ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը:

Մարզպետարանի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատում է կառավարությունը, իսկ աշխատողների թվաքանակը՝ վարչապետը:

Մարզպետի նստավայրը և մարզպետարանի շենքը գտնվում են մարզի վարչական կենտրոնում: Մարզպետարանի շենքի վրա և մարզպետի աշխատասենյակում տեղադրվում են ՀՀ դրոշը և ՀՀ զինանշանը:

3. Մարզպետարանի աշխատակազմը

3.1. Մարզպետարանի աշխատակազմի իրավական վիճակը:

3.2. Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը:

3.3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի լիազորությունները:

3.4. Պետական ծառայությունը մարզպետարանի աշխատակազմում:

Ինչպես արդեն նշվեց՝ մարզպետարանի գործունեությունն իրականացվում է նաև մարզպետարանի աշխատակազմի միջոցով: Ըստ էության մարզպետարանի կատարված աշխատանքի առյուծի բաժինը ընկնում է հենց աշխատակազմի վրա:

Իսկ ինչպիսի իրավական կարգավիճակ ունի մարզպետարանի աշխատակազմը: Մինչև ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի ընդունումը (1999թ.) բոլոր պետական մարմինները, այդ թվում և՛ մարզպետարանները, ունեին իրավաբանական անձի կարգավիճակ: Սակայն օրենսգրքի ընդունումից հետո հիմք ընդունվեց այն հայեցակետը, որ միակ իրավաբանական անձը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ պետական մարմիններն ընդամենը նրա անունից հանդես եկող պետական կառավարչական հիմնարկներ են:

Այսպես, 2001 նոյեմբերի 19ին ընդունված «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի համաձայն մարզպետարանի աշխատակազմը իրավաբանական անձի կրգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնակ է, որը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից: Դրա հիմնադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ կառավարության:

Մասնավորապես մարզպետարանի աշխատակազմն իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Այդ պատճառով էլ «Մարզպետարանի օրինակելի կանոնադրության մասին» ՀՀ կառավարության 2002թ. արձանագրային որոշման 12 կետի համաձայն մարզպետարանի աշխատակազմի բոլոր պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

Մինևույն ժամանակ մարզպետարանի աշխատակազմը որպես պետական կառավարչական հիմնարկ չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Մարզպետարանի աշխատակազմն իր կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձել միայն պետական տուրք՝ այն էլ միայն օրենքով սահմանված չափով և կարգով:

Մարզպետարանի աշխատակազմի միակ նպատակն ու խնդիրը մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումն է, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին մարզպետի մասնակցությունը:

Մարզպետարանի աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Օրինակ բոլորովին վերերս հայտարարված մրցույթի արդյունքներով հաստատվեցին Երևալմի քաղաքապետարանի զինանշանը, օրհներգը և դրոշը:

Մարզպետարանի աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Մարզպետարանի աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Մարզպետարանի աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև մարզպետի լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Մարզպետարանի աշխատակազմի անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության օրինակ՝ Արարատի մարզպետարանի աշխատակազմ:

Մարզպետարանի աշխատակազմի կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը և մարզպետը՝ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Մարզպետարանի աշխատակազմի գործունեության կազմակերպումն ու ղեկավարումն իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը («Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 10 հոդվ. և Հրամանագրի 1.9 կետ):

Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) վերակազմակերպում և դադարեցնում է մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը.

բ) հաստատում է մարզպետարանի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

գ) որոշում է մարզպետարանի աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

դ) հաստատում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը.

ե) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված այլ լիազորություններ:

Իր հերթին **մարզպետարանի աշխատակազմի ղեկավարն** օրենքով, այլ իրավական ակտերով, մարզպետի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է մարզպետարանի աշխատակազմի ընթացիկ գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և մարզպետի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, մարզպետի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները և կարգադրությունները:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարիության դեպքում նրան փոխարինում է նրա

տեղակալը, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձ՝ մարզպետի որոշմամբ:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը՝

ա) իր լիազորության շրջանակում կազմակերպում է մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը և իրականացնում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների վարչական համակարգումը:

բ) ապահովում է մարզպետի որոշումների, կարգադրությունների և հանձնարարականների կատարման ընթացքը և զեկուցում մարզպետին:

գ) մշակում և մարզպետի հաստատման է ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման ժամկետայնության նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է մարզպետին:

դ) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին՝ «Քաղաքացիական ծառայության մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ե) ապահովում է մարզպետարանի աշխատակազմի բյուջետային ծախսերի կատարումը:

զ) կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների՝ սահմանված կարգով քննարկումը:

է) օրենքով նախատեսված այլ լիազորություններ: Այսպես օրինակ՝

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը՝

ա) իր իրավասության սահմաններում, առանց լիազորագրի, հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորությունների սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար:

բ) օրենքով, այլ իրավական ակտերով հիմնադրի և սույն կանոնադրություններով սահմանված կարգով տնօրինում է մարզպետարանի աշխատակազմին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

գ) իր իրավասության սահմաններում տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է մարզպետարանի աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ:

ե) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

զ) մարզպետի հաստատմանն է ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար:

է) մարզպետին ներկայացնում է առաջարկություններ մարզպետարանի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

ը) կազմակերպում է մարզպետարանի բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը:

թ) կազմակերպում է մարզպետարանում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը:

ժ) վերահսկում է մարզպետարանի աշխատակազմի կողմից՝ սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը:

ժա) մարզպետի ստորագրությանն է ներկայացնում մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերը:

ժբ) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ:

ժգ) կազմակերպում է մարզպետարանում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

ժդ) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական ու հաշվապահական ծառայությունները, գործում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում “Գանձապետական համակարգի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

Մարզպետարանի աշխատակազմն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև մարզպետարանի կանոնադրությամբ սահմանված գործառնություններ ու լիազորություններ:

Մարզպետարանի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատում է կառավարությունը, իսկ աշխատողների թվաքանակը վարչապետը:

Մարզպետի նստավայրը և մարզպետարանի շենքը գտնվում են մարզի վարչական կենտրոնում:

Մարզպետարանի շենքի վրա և մարզպետի աշխատասենյակում տեղադրվում են ՀՀ դրոշը և ՀՀ զինանշանը:

Մարզպետարանի աշխատակազմի գույքը ձևավորվում է օրենքով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև Հանրապետության անունից մարզպետարանի աշխատակազմի կնքած գործարքների միջոցով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

ՀՀ կառավարության որոշմամբ մարզպետարանի աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

ՀՀ կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու մարզպետարանի աշխատակազմի գույքը:

Մարզպետարանի աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

Համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը կարող է մարզպետին գրավոր, փաստարկված առաջարկություն ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը բարելավելու վերաբերյալ:

Մարզպետը պարտադիր քննության է առնում հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի առաջարկությունը և մեկամսյա ժամկետում տեղեկացնում նրան արդյունքների մասին:

Ձեռնարկված միջոցներն անբավարար համարելու դեպքում հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը հարցը կարող է ներկայացնել ՀՀ վարչապետի քննարկմանը՝ վերջնական լուծման համար:

Մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում մարզպետը:

Մարզպետարանի աշխատակազմն ունի իր կառուցվածքը, որը առավելագույնս հարմարեցվում է մարզպետի լիազորությունների լիարժեք կատարմանը: Մասնավորապես.

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, քարտուղարություն, բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները: Կառուցվածքի առավել ցայտուն օրինակ էր

նախկինում մարզի կարգավիճակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, որն ընդգրկում էր հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝ Անշարժ գույքի կառավարման, Առողջապահության և սոցիալական ապահովության, Առևտրի և սպասարկումների, Արտաքին կապերի և տեղեկատվության, Շինարարության, բարեկարգման և կոմունալ տնտեսության, Բնապահպանության, Իրավաբանական, Կրթության, ճարտարապետության և քաղաքաշինության, Քաղաքաշինության և հողի վերահսկողության, Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի, Տրանսպորտի, Ֆինանսական և սոցիալտնտեսական զարգացման վարչությունները, 2. Քարտուղարությունը և 3. Բաժինները՝ Առաջին բաժին և Կազմակերպատեսչական բաժին:

Դրանք էլ իրենց հերթին կազմված են **մարզպետարանի աշխատակազմի աշխատողներից**: Մարզպետարանի աշխատակազմի աշխատողներ են համարվում տվյալ մարզպետարանի աշխատակազմի **քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը**:

Մարզպետը քաղաքացիական ծառայության խորհրդի հաստատմանն է ներկայացնում մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատվում են մարզպետի կողմից:

Մարզպետարանի աշխատակազմում քաղ. ծառայության պաշտոններում նշանակում և պաշտոններից ազատում կատարվում է ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մարզպետի կողմից՝ քաղ. ծառայության բարձրագույն, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում:

Մարզպետարանի աշխատակազմի քաղ. ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք ևս չեն կարող կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, սակայն, ի տարբերություն մարզպետի և տեղակալի, նրանք կարող են լինել ավագանու անդամ: Քաղ. ծառայողին արգելվում է նաև անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ (ՔՕՕ 24 հոդված):

Մարզպետարանի աշխատակազմի տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք աշխատանքի են ընդունվում և աշխատանքից ազատվում մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից:

4. Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը:

Մարզպետը մարզի տարածքում ներքին գործերի և ազգային անվտանգության« ինչպես նաև զինապարտների հաշվառման» գորակոչի» գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ հրավիրում է հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարներին» անց է

կացնում խորհրդակցություններ և վերջիններիս ուշադրությունն է հրավիրում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա:

Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով մարզպետն իրավասու է ներքին գործերի և ազգային անվտանգության ոլորտի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներին հանձնարարականներ տալ և կարգադրություններ անել՝

ա) տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման, դրանց հետևանքների վերացման, մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության« հակահամաճարակային և կարանտինային հատուկ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ՝

բ) ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման« ապօրինի ծառահատումների, ինչպես նաև հողազավթումների և որսագողության դեպքերի կանխման և արգելման վերաբերյալ՝

գ) ժողովների, հանրահավաքների, երթերի, ցույցերի և այլ զանգվածային միջոցառումների անցկացման ընթացքում հասարակական կարգի պահպանման վերաբերյալ.

դ) համայնքներում գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների անցկացումը կազմակերպելու վերաբերյալ:

Մարզպետը հանդիսանում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը և պատասխանատվություն է կրում մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության համար:

Օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում մարզպետը կազմակերպում և համակարգում է մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները, մասնակցում է հանրապետական համապատասխան ծրագրերով նախատեսված, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը՝ տեղական ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքների վերացման աշխատանքներին:

Մարզպետը իր իրավասության սահմաններում համապատասխան հանձնարարականներ է տալիս և կարգադրություններ անում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի հանրապետական գործադիր մարմնի տարածքային ծառայության ղեկավարին:

Մարզի տարածքում հարկային մարմինների գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման խնդիրների առնչությամբ մարզպետը անց է կացնում հանրապետական գործադիր մարմնի համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարների հետ խորհրդակցություն և նրանց ուշադրությունն է հրավիրում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա:

Մարզպետը իրավասու է կապի, էներգետիկայի ոլորտների հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներին պարտադիր կատարման համար կարգադրություններ անել

ա) մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

բ) տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման և դրանց հետևանքների վերացման վերաբերյալ:

Մարզի տարածքում ներքին գործերի և ազգային անվտանգության՝ զինապարտների հաշվառման՝ գորակոչի՝ գորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման ոլորտներին վերաբերող խնդիրների առնչությամբ՝ ինչպես նաև հարկային մարմնի գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման խնդիրների լուծման հարցերում մարզպետն օժանդակում է հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների գործունեությանը, ապահովում դրանց համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության հետ:

Հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը համապատասխան տարածքային ծառայության ղեկավարի պաշտոնի նշանակման և ազատման մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է մարզպետին:

Մարզպետը կարող է համապատասխան հանրապետական գործադիր մարմնին գրավոր՝ փաստարկված առաջարկություն ներկայացնել՝ վերջինիս տարածքային ծառայության գործունեության՝ ինչպես նաև ղեկավարի զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության վերաբերյալ նրա նշանակվելուց վեց ամիս հետո:

Հանրապետական գործադիր մարմինը պարտադիր քննության է առնում մարզպետի առաջարկությունը և մեկամյա ժամկետում մարզպետին տեղեկացնում արդյունքների մասին:

Ձեռնարկված միջոցները անբավարար համարելու դեպքում մարզպետը հարցը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ վերջնական լուծման համար:

5. Մարզի խորհուրդը:

Տեղական ինքնակառավարման մասին՝ ՀՀ օրենքի 81 հոդվածի համաձայն մարզպետին կից ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ մարզի խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարները և մարզպետը: Մարզպետը հրավիրում և վարում է մարզի խորհրդի նիստերը՝ իր սահմանած օրակարգով: Մարզի խորհրդի գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով և ՀՀ նախագահի հրամանագրով: Այսինքն՝ մարզի խորհուրդն, իր կարգավիճակից ելնելով, չունի որևէ իշխանական լիազորություն:

Մարզի խորհրդի նիստերին մարզպետը՝

ա) համայնքների քեկավարներին ծանոթացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հանրապետության նախագահի հրամանագրերին և կարգադրություններին,

կառավարության և վարչապետի վորոշումներին, իր որոշումներին ու կարգադրություններին և դրանցից բխող՝ տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներին.

բ) ծանոթանում է համայնքներում տիրող իրավիճակին՝ տարվող աշխատանքների ընթացքին և ծագած խնդիրներին.

գ) լսում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ.

դ) ապահովում է մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ներդաշնակ գործունեությունը, լուծում կազմակերպական այլ հարցեր (հրամանագրի 1.10 կետ):

Մարզպետը մարզի խորհրդի քննարկմանն է ներկայացնում՝

ա) կառավարությանը և վարչապետին ներկայացվող իր հաշվետվությունները մարզի ընդհանուր սոցիալտնտեսական վիճակի և իր գործունեության մասին.

բ) իր առաջարկությունները մարզի սոցիալտնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ.

գ) իր առաջարկությունները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև պետական բյուջեից համայնքների բյուջեներին կատարվող հատկացումների վերաբերյալ:

Մարզի խորհրդի նիստերին մարզպետի հրավերով կարող են մասնակցել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և այլ անձինք (հրամանագրի 1.11 կետ):

Գլուխ 7. ՄԱՐԶՊԵՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մարզպետի լիազորությունների ընդհանուր բնութագիրը:

Մարզպետի լիազորություններն ուղիղ համեմատական կարգով պայմանավորված են նրա կարգավիճակով, ինչպես նաև այն տեղով և դերով, որ հատկացված է նրան պետական կառավարման ապարատում: Մարզպետը գործադիր իշխանության ընդհանուր իրավասության տարածքային օղակն է: Կառավարությունն իր տարածքային զարգացման քաղաքականությունն իրականացնում է հիմնականում մարզպետարանների, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների միջոցով, որոնց գործունեությունը համակարգվում է նույն մարզպետի կողմից: Մարզպետն իրականացնում է կառավարչական, ենթասրենադրական գործունեություն, այսինքն՝ նա ընդամենը միջոցառումներ է ձեռնարկում իրեն հանձնարարված բնագավառներում կառավարության մշակած ծրագրերն իրականացնելու ուղղությամբ: Այդ բնագավառները որոշ

չափով համընկնում են Կառավարության հիմնական գործառնությունների հետ, սակայն բնավ չեն կրկնում դրանք, այլ լրացնում են դրանք:

2. Մարզպետի լիազորություններն ըստ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման բնագավառներին:

ՇՇ մարզերում պետական կառավարման մասին՝ և Երևան քաղաքում պետական կառավարման մասին՝ ՇՇ Նախագահի թիվ ՆՇ728 և ՆՇ727 հրամանագրերի համաձայն մարզպետը կառավարության տարածքային քաղաքականության իրականացման առանձին բնագավառներում ունի հետևյալ լիազորությունները՝

2.1. Մարզպետի լիազորությունները ֆինանսների բնագավառում:

Ֆինանսների բնագավառում մարզպետը՝

ա) սահմանված կարգով մշակում և կառավարության քննարկմանը առաջարկություններ է ներկայացնում պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի՝ ինչպես նաև մարզի համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացումների վերաբերյալ.

բ) տնօրինում է պետական բյուջեով մարզին հատկացված միջոցները՝ վերահսկում այդ միջոցների նպատակային օգտագործումը.

գ) սահմանված կարգով վերահսկում է պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորումը և դրանց նպատակային օգտագործումը.

դ) աջակցում և մեթոդական օգնություն է ցույց տալիս տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքի բյուջեի նախագծի նախապատրաստման ընթացքում:

2.2. Մարզպետի լիազորությունները քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառներում:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառներում մարզպետը՝

ա) սահմանված կարգով կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը և ներկայացնում կառավարության հաստատմանը.

բ) սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կառավարություն, մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ.

գ) եզրակացություն է տալիս հանրապետության տարածքային զարգացման ու տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ՝

դ) իր իրավասության սահմաններում կազմակերպում է բնակարանային և այլ շինարարություն, իրականացնում է կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառնություններ, քաղաքաշինական գործունեության հսկողություն, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ.

ե) համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում, իր իրավասության շրջանակում, սահմանված կարգով համակարգում է կառուցապատումը.

զ) կազմակերպում և վերահսկում է մարզային ենթակայության ջրնուղկոյուղու, ջրերի մաքրման և այլ կոմունալ կազմակերպությունների աշխատանքը.

է) կազմակերպում է աղբի ու թափոնների վերամշակումը:

2.3. Մարզպետի լիազորությունները տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառներում:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառներում մարզպետը՝

ա) կազմակերպում է միջհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքը, մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը.

բ) կազմակերպում է մարզային նշանակության ճանապարհների՝ կամուրջների՝ թունելների, այլ ինժեներական կառույցների շինարարությունը, պահպանումը և շահագործումը, աջակցում է հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը:

1.4. Մարզպետի լիազորությունները գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառներում:

Գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառներում մարզպետը՝

ա) օրենսդրությամբ սահմանված կարգով տիրապետում և օգտագործում է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը.

բ) համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում իրականացնում է պատվիրատուի գործառույթներ.

զ) վերահսկում է մարզի սահմանանիշերի և գեոդեզիական կետերի պահպանումը.

դ) մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով ներկայացնում է կառավարության հաստատմանը.

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է մարզի հողային հաշվեկշիռը.

զ) օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում հողաշինարարության՝ հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ՝ կանխում՝ կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը.

ը) օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրեր է կնքում հողի ու ամրակայված գույքի սեփականատերերի և (կամ) հողօգտագործողների հետ՝ մարզի տարածքում մարզային ենթակայության օբյեկտների կառուցման համար համապատասխան հողի ու ամրակայված գույքի օգտագործման և դրանց հետ կապված փոխհատուցումների վերաբերյալ.

թ) իրականացնում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցումը՝ պահպանումը և շահագործումը՝ միջոցներ է ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ.

ժ) համակարգում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների՝ մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքները.

ժա) համակարգում է մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքները.

ժբ) աջակցում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտի տնտեսավարող այլ սուբյեկտներին՝ արտադրության կազմակերպման և զարգացման գործում.

ժգ) համակարգում է մարզի տարածքում ջրատնտեսական և ոռոգման կազմակերպությունների գործունեությունը.

ժդ) համակարգում է մարզի տարածքի սերմնաբուժական կազմակերպությունների, սոռնաբուժարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեությունը:

1.5. Մարզպետի լիազորությունները կրթության բնագավառում:

Կրթության բնագավառում մարզպետը՝

ա) կազմակերպում է մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ սպասելով պետական հանրակրթական ծրագրերի իրագործումը՝ իրականացնում ուսումնական հաստատությունների գործունեության վերահսկողությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգերի.

բ) կազմակերպում է մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը:

2.6. Մարզպետի լիազորությունները առողջապահության բնագավառում:

Առողջապահության բնագավառում մարզպետը՝

ա) իրագործում է պետական առողջապահական ծրագրերը, կազմակերպում մարզային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով սպասելով է բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, վերահսկում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

բ) մարզի տարածքում կազմակերպում և իրականացնում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, կազմակերպում է սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով.

գ) աջակցում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմիններին՝ բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի,

դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս.

զ) կազմակերպում է մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը:

2.7. Մարզպետի լիազորությունները սոցիալական ապահովության բնագավառում:

Սոցիալական ապահովության բնագավառում մարզպետը՝

ա) իրագործում է բնակչության պետական սոցիալական ապահովության ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը, վերահսկում է մարզի տարածքում սոցիալական ապահովության ոչ պետական կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

բ) կազմակերպում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը, համակարգում է մարդասիրական օգնության բաշխումը.

գ) աջակցում է գործազուրկների հաշվառման և բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը.

դ) աջակցում է պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման կազմակերպման աշխատանքներին.

ե) կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական ապահովության հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը.

զ) աջակցում է սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանը.

է) աջակցում է կադրերի վերապատրաստման ու վերաորակավորման աշխատանքների կազմակերպմանը:

2.8. Մարզպետի լիազորությունները մշակույթի և սպորտի բնագավառում²

Մշակույթի և սպորտի բնագավառներում մարզպետը՝

ա) կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ, նպաստում է ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը՝ վերահսկում է մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.

բ) իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ.

գ) կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային օբյեկտների կառուցումը, հանգստի գոտիների ստեղծումը, պահպանումն ու շահագործումը.

դ) համագործակցում է մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ:

2.9. Մարզպետի լիազորությունները բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում:

Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում մարզպետը՝

ա) մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում:

բ) մարզի տարածքում վերահսկում է բնապահպանական օրենսդրության կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին:

գ) աջակցում է արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը՝ որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը՝

դ) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

2.10. Մարզպետի լիազորությունները առևտրի, հանրային սննդի և սպասարկման բնագավառներում:

Առևտրի՝ հանրային սննդի և սպասարկման բնագավառներում մարզպետը՝

ա) միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում առևտրի՝ հանրային սննդի և սպասարկման ոլորտի տնտեսվարող սուբյեկտների գործունեության ընդլայնման և արդյունավետության ապահովման ուղղությամբ:

ԲԱԺԻՆ III: ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՍՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԳԼՈՒԽ 8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՅՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Տեղական ինքնակառավարման հասկացությունը:

Հասկացությունը նայել ՀՀ Սահմանադրության 104.1. բ) հոդվածով և ՏԻՄ օրենքի 4-րդ հոդվածով և վերջում Ձեր եզրակացությունը, թե որ սահմանումն է ավելի ամբողջական, օբյեկտիվ, և որ մեկում կ

2. Տեղական ինքնակառավարումը որպես սահմանադրական կարգի հիմունք:

3. Տեղական ինքնակառավարումը որպես բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի ինքնուրույն լուծման իրավունք:

4. Տեղական ինքնակառավարումը որպես ժողովրդաիշխանության իրացման ձև:

Գլուխ 9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման հիմնական սկզբունքների հասկացությունը:
2. Բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի լուծման ինքնուրույնությունը:
3. Տեղական ինքնակառավարման կազմակերպական իրավական ինքնուրույնությունը:
4. Ժողովրդաիշխանության իրացման անմիջական և ներկայացուցչական ձևերի զուգակցումը տեղական ինքնակառավարման համակարգում:
5. Տեղական ինքնակառավարման նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանությունը նրա լիազորություններին:
6. Տեղական ինքնակառավարման կազմակերպման և իրականացման օրինականությունը:
7. Տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բնակչության առջև:
8. Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը:
9. Տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության օրինականությունը:
10. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը:
11. Տեղական ինքնակառավարման սկզբունքների համակարգի առանձնահատկությունները ՀՀում:

Գլուխ 10. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների հասկացությունը:
2. Տեղական նշանակության հարցերի լուծմանը տեղական բնակչության մասնակցության ապահովումը:
3. Համայնքային սեփականության և ֆինանսական միջոցների կառավարումը:
4. Համայնքի սոցիալտնտեսական համայնքի զարգացման ապահովումը:
5. Համայնքի բնակչության հիմնական կենսական պահանջումների բավարարումը:
6. Հասարակական կարգի պահպանումը:
7. Համայնքի շահերի և իրավունքների պաշտպանումը:

Գլուխ 11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման հիմունքների հասկացությունը:
2. Տեղական ինքնակառավարման տարածքային հիմունքները:
 - 2.1. Տեղական ինքնակառավարման տարածքային հիմունքների հասկացությունը և սկզբունքները:
 - 2.2. Համայնքի տարածքային սահմաններն ու կազմը:
 - 2.3. Համայնքի վերակազմավորումը:
3. Տեղական ինքնակառավարման կազմակերպական հիմունքները:
4. Տեղական ինքնակառավարման ֆինանսատնտեսական հիմունքները:
 - 4.1. Համայնքի սեփականությունը:
 - 4.2. Համայնքի բյուջեն:
 - 4.3. Համայնքի տնտեսական գործունեությունը:
5. Տեղական ինքնակառավարման իրավական հիմունքները:

Գլուխ 12. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Տեղական ինքնակառավարման համակարգի հասկացությունը և դրա տարրերը:
2. Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը
 - 2.1. Համայնքի ավագանու իրավական վիճակը և գործառույթները տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում:
 - 2.2. Համայնքի ավագանու կազմակերպման կարգը և կառուցվածքը:
 - 2.3. Համայնքի ավագանու իրավասությունը և իրավական ակտերը:
 - 2.4. Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը:
 - 2.5. Համայնքի ավագանու անդամի իրավական վիճակը և լիազորությունները:
3. Տեղական ինքնակառավարման գործադիր մարմինը
 - 3.1. Համայնքի ղեկավարի իրավական վիճակը և գործառույթները տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում:
 - 3.2. Համայնքի ղեկավարի ընտրության և լիազորությունների դադարեցման կարգը:
 - 3.3. Համայնքի ղեկավարի իրավասությունը և իրավական ակտերը:
 - 3.4. Համայնքի ղեկավարի աշխատակազմը:
4. Համայնքային ծառայությունը
 - 4.1. Համայնքային ծառայության հասկացությունը, սկզբունքները և իրավական կարգավորումը:
 - 4.2. Համայնքային ծառայության պաշտոնների դասակարգումը և զբաղեցնելու կարգը:

4.3. Համայնքային ծառայողների իրավական վիճակը:

Գլուխ 13. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները
 - 1.1. Համայնքի ավագանու ընտրությունները:
 - 1.2. Համայնքի ղեկավարի ընտրությունները:
 - 1.3. Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների առանձնահատկությունները:
2. Տեղական հանրաքվեն
3. Ժողովրդաիշխանության իրացման այլ անմիջական ձևերը համայնքում

Գլուխ 14. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

1. Երևանի ավագանին
 - 1.1. Երևանի ավագանու իրավական վիճակը և գործառույթները տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում:
 - 1.2. Երևանի ավագանու կազմակերպման կարգը և կառուցվածքը:
 - 1.3. Երևանի ավագանու իրավասությունը և իրավական ակտերը:
 - 1.4. Երևանի ավագանու գործունեության կազմակերպումը:
 - 1.5. Երևանի ավագանու անդամի իրավական վիճակը և լիազորությունները:
 - 1.6. Երևանի ավագանու վերահսկողական լիազորությունները:
2. Երևանի քաղաքապետը
 - 2.1. Երևանի քաղաքապետի իրավական վիճակը և գործառույթները տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում:
 - 2.2. Երևանի քաղաքապետի ընտրության և լիազորությունների դադարեցման կարգը:
 - 2.3. Երևանի քաղաքապետի իրավասությունը և իրավական ակտերը:
 - 2.4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը:
 - 2.5. Երևանի քաղաքապետի լիազորությունները ավագանու հետ հարաբերություններում:
3. Երևանի վարչական շրջանները և դրանց ղեկավարումը:

Գլուխ 15. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների հասկացությունը և ընդհանուր բնութագիրը

2. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ըստ գործունեության բնագավառների
- 2.1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները ֆինանսների բնագավառում
- 2.3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները հասարակական կարգի պահպանության բնագավառում:
- 2.4. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները պաշտպանության բնագավառում:
- 2.5. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում:
- 2.6. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառում:
- 2.7. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում:
- 2.8. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները Առևտրի և սպասարկման բնագավառում:
- 2.9. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում:
- 2.10. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում:
- 2.11. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում:
- 2.12. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

Գլուխ 16. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Տեղական ինքնակառավարման երաշխիքների հասկացությունը և համակարգը:
2. Տեղական ինքնակառավարման կազմակերպական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքներ:
3. Տեղական ինքնակառավարման ֆինանսատնտեսական ինքնուրույնությունն ապահովող երաշխիքներ:
4. Տեղական ինքնակառավարման իրավական երաշխիքներ:

Գլուխ 17. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. §ԾԾ ԳՅինՅին ան»Կե-Շննի (26.05.2011Ա. ԲՀԻ Էմ164Մ)
11. §ԾԿննննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (12.09.2001Ա.)
12. §ՆՕՅԻԿ ՆՅԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (06.02.2002Ա.)
13. §ՆՕՅԻԿ ՇԿնննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (07.05.2002Ա.)
14. §նն»Յննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (15.01.2009Ա. Էմ5Մ)
- 15.
16. §նՕՅԻԿ անննն»նՇ « Ինննն»նՇ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.12.1997Ա.)
17. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.06.1997Ա.)
18. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.11.1998Ա.)
19. §ԾԾԿննն»Շ ԷՅնննն»անննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (20.05.1997Ա.)
20. §ՇՅննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (02.05.2002Ա. ԲՀԻ 18 Յնննն»Շ ԴՅեՇԿԻ անննն»Շ)
21. §ԾԾԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (05.12.2006Ա. Էմ254)

Բնննն»Շ Բննն»Շ ընննն»Շ Կնննն»Շ www.gqy.am, www.mta.am, www.parliament.am ԻՄ www.laws.am

ը, Յե-ննն»Շ, Օնննն»Շ « ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ

1. ԷԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.05.2011Ա. ԲՀԻ Էմ164Մ)
2. §ԾԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (12.09.2001Ա.)
3. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (06.02.2002Ա.)
4. §ՆՕՅԻԿ ՇԿնննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (07.05.2002Ա.)
5. §ննն»Յննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (15.01.2009Ա. Էմ5Մ)
6. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.12.1997Ա.)
7. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.06.1997Ա.)
8. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.11.1998Ա.)
9. §ԾԾԿննն»Շ ԷՅնննն»անննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (20.05.1997Ա.)
10. §ՇՅննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (02.05.2002Ա. ԲՀԻ 18 Յնննն»Շ ԴՅեՇԿԻ անննն»Շ)
11. §ԾԾԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (05.12.2006Ա. Էմ254)
12. §ԾԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.05.2011Ա. ԲՀԻ Էմ164Մ)
13. §ԾԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (12.09.2001Ա.)
14. §ՆՕՅԻԿ ՆՅԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (06.02.2002Ա.)
15. §ՆՕՅԻԿ ՇԿնննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (07.05.2002Ա.)
16. §ննն»Յննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (15.01.2009Ա. Էմ5Մ)
17. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.12.1997Ա.)
18. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.06.1997Ա.)
19. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.11.1998Ա.)
20. §ԾԾԿննն»Շ ԷՅնննն»անննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (20.05.1997Ա.)
21. §ՇՅննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (02.05.2002Ա. ԲՀԻ 18 Յնննն»Շ ԴՅեՇԿԻ անննն»Շ)
22. §ԾԾԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (05.12.2006Ա. Էմ254)
23. ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.05.2011Ա. ԲՀԻ Էմ164Մ)
24. §ԾԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (12.09.2001Ա.)
25. §ՆՕՅԻԿ ՆՅԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (06.02.2002Ա.)
26. §ՆՕՅԻԿ ՇԿնննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (07.05.2002Ա.)
27. §ննն»Յննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (15.01.2009Ա. Էմ5Մ)
28. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.12.1997Ա.)
29. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.06.1997Ա.)
30. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.11.1998Ա.)
31. §ԾԾԿննն»Շ ԷՅնննն»անննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (20.05.1997Ա.)
32. §ՇՅննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (02.05.2002Ա. ԲՀԻ 18 Յնննն»Շ ԴՅեՇԿԻ անննն»Շ)
33. §ԾԾԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (05.12.2006Ա. Էմ254)
34. ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.05.2011Ա. ԲՀԻ Էմ164Մ)
35. §ԾԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (12.09.2001Ա.)
36. §ՆՕՅԻԿ ՆՅԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (06.02.2002Ա.)
37. §ՆՕՅԻԿ ՇԿնննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (07.05.2002Ա.)
38. §ննն»Յննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (15.01.2009Ա. Էմ5Մ)
39. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.12.1997Ա.)
40. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.06.1997Ա.)
41. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.11.1998Ա.)
42. §ԾԾԿննն»Շ ԷՅնննն»անննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (20.05.1997Ա.)
43. §ՇՅննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (02.05.2002Ա. ԲՀԻ 18 Յնննն»Շ ԴՅեՇԿԻ անննն»Շ)
44. §ԾԾԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (05.12.2006Ա. Էմ254)
45. ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.05.2011Ա. ԲՀԻ Էմ164Մ)
46. §ԾԾ ԷՅնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (12.09.2001Ա.)
47. §ՆՕՅԻԿ ՆՅԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (06.02.2002Ա.)
48. §ՆՕՅԻԿ ՇԿնննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (07.05.2002Ա.)
49. §ննն»Յննն»ՅՅԿնննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (15.01.2009Ա. Էմ5Մ)
50. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (26.12.1997Ա.)
51. §ԾԾ Դննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.06.1997Ա.)
52. §նննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (24.11.1998Ա.)
53. §ԾԾԿննն»Շ ԷՅնննն»անննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (20.05.1997Ա.)
54. §ՇՅննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (02.05.2002Ա. ԲՀԻ 18 Յնննն»Շ ԴՅեՇԿԻ անննն»Շ)
55. §ԾԾԿննն»Շ ԴՅեՇԿԻ ԷԾ ան»ԿնԱ (05.12.2006Ա. Էմ254)

30. “Áîñóààðñóàáííñá óíðàáéáíéá íá ÿòáíá íáðáñòðíééè”, Èàçàðáá Á.Ì., Ì., 1997
31. “Ááíéíèñòðàðèáííá ïðááí ðíññééñééé Óáááðáðèè”, Áéáóéí Á.Ì., Èáðíééóèééé Á.Á., Èíçéíá Þ.Ì., Ì., 1998
32. “Èóðñ àáíéíèñòðàðèáííá ïðááá è ïðíóáññá”, Õèðñíèðíá Þ.Á., Ì., 1998
33. “Ñèñóàíà áíñóààðñóàáííáí óíðàáéáíéý”, Ìééóéüééí Á.Á., Ì., 1997
34. “Ñèñóàíà áíñóààðñóàáííáí óíðàáéáíéý”, Ìééóéüééí Á.Á., Ì., 2004
35. “Èñíóíáéüíá ïðááí ÕÐÁ”, Õèíóááá Í.Ñ., Ì., 1982
36. “Íóíéóèíáéüíá ïðááíú Ááéééíáðèðáíéè”, Ááðáí-ééíá Á.Á., Ì., 1990
37. “Íóíéóèíáéüíá ïðááíú áéáñðè áí Õðáíóèè”, Áððáí Ý.Á., Ì., 1996
38. Система государственного и муниципального управления. СПб.: Питер, 2004
39. Местные органы власти зарубежных стран: правовые аспекты. –М.: Спарк, 2001
40. Конституции государств Европейского Союза/ под. Ред. Л.А. Окунькова. М.: ИНФРАМНОРМА, 1997
41. Adrian CH. State and lqcal gqvernment. N.Y.: ME Graw Hill, 1978
42. Ashfqrd D.E. British dqgmatizm and French pragmatizm: Centrallqcal pqlicymaking in the welfare state. L.: Allen & Unwin, 1982
43. Rqux André, “Drqit cqñstitutiqñnel lqcal”, Paris, 1995
44. Braibant Guy “Le drqit administratif Français”, Paris, 1984
45. Dragq Rqlan “Science Administratif”, Paris, 1980
46. Nadine DantqñelCqr. «Drqit des cqñlectivités territoriales», Editiqñs Bréal, 2007
47. Jacques Hardy. Institutiqñs et drqit des cqñlectivités lqcales, l’Hermès, 1995

ÆÝí»ñÝ»í «ÕµÚáóñÝ»ñ`

1. ÐÐ íñ³íú³ÚÇÝ Í³é³ñÚ³Ý Ý³È³ñ³ñáóÃÚáóÝ <http://www.mta.gqv.am>
2. Ð³Ú³è³ÝÇ Ñ³Ú³ÚÝùÝ»ñÇ³éáóÇ³óÇ³ <http://www.caa.am>
3. ØáóÝÇóÇá³È · · ï»Õ³Í³Ý ÇËÈ³ÝáóÃÚ³Ý Û³ñÚÇÝÝ»ñÇ ÛÇ³íáñáóÛ (UCLG United cities and lqcal Gqvernments) – <http://www.citieslqcalgqvernments.qrg/gqld/>
4. Her Majesty’s Statiqñery Qffice – <http://hmsq.gqv.uk>
5. EurLex – <http://eurqpa.eu>
6. «ñáá³ÚÇ ÈáñÑñ¹Ç ï»Õ³Í³Ý · · íñ³íú³ñç³Ý³ÚÇÝ ÇËÈ³ÝáóÃÚáóÝÝ»ñÇ ÍáÝ-ñ»è <http://www.cqe.int/t/cqngress>